

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ >>

1. ՀԱՅԿ ՄԱՐԳՍՅԱՆ Առաջին ատյանի դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու հիմնախնդիրը	2
2. ԳՈՒՐԳԵՆ ՍԱԴՈՅԱՆ Ոստիկանությունում ծառայության անցնելու պայմանները Հայաստանի Հանրապետությունում	9
3. ՎԱՐԴԱՆՈՒԹ ՊՈՂՈՍՅԱՆ Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության ժամանակ	14
4. ԱԳՆԵՍԱ ԲԱԳԱՆՅԱՆ Իրավունքների և պարտավորությունների փոխադարձության պահպանումը Եգիպտոսի մամուլյան սուլթանության և Մոնղոլական կայսրության հետ Կիլիկիայի հայկական թագավորության կնքած միջպետական պայմանագրերում	20
5. ՀԱՅԿ ԳԱԼՍՏՅԱՆ Տարածքային կառավարման մարմինների գործունեության արդյունավետության բարձրացման առանձին ուղղությունները Հայաստանի Հանրապետությունում	26
6. ԴԱՎԻԹ ՄԱՐԳՍՅԱՆ Փաստաբանի մասնակցությունը քաղաքացիական գործերին և նրա կարգավիճակի բարելավման հնարավորությունները ըստ Հայաստանի Հանրապետության օրենսդրության	32
7. ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը քաղաքացիական իրավահարաբերություններում	38
8. ГЕВОРГ ТУМАНОВ Требования необходимости и пропорциональности при реализации права на самооборону в рамках международного права	45
9. ԱՐՄԵՆ ԱՐՄԻՅՈՅՅԱՆ К вопросу государственной политики АзССР о депортации армян из Нагорного Карабаха	51
10. ՆԱԻՐԱ ԱՐՄԻՅՈՅՅԱՆ Основное содержание понятия конституционализм	53
11. ԿԱՐԼԵՆ ԲԱԲԱՅԱՆ Соотношение проблем армяно-турецких и армяно-азербайджанских отношений. Нагорно-Карабахская проблема в контексте армяно-турецких отношений	58
12. NARINE SOLOMONYAN EU Citizenship as a guarantee for the consolidation of the Europe	62

ՀԱՅԿ ՍԱՐԳՍՅԱՆ

Երևանի պետական համալսարանի իրավագիտության
ֆակուլտետի քրեական դատավարության և
կրիմինալիստիկայի ամբիոնի մագիստրոս

ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԴԱՏԱՐԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱՎՃԻՌ ԿԱՅԱՑՆԵԼԻՍ ՄԵՂԱԴՐՅԱԼԻՆ ԱՌԱՋԱԴՐՎԱԾ ՄԵՂԱԴՐԱՆՔԸ ՍԵՓԱԿԱՆ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅԱՄԲ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ

Ներկայումս Հայաստանի Հանրապետության նոր քրեական դատավարության օրենսգրքի նախագծի մշակմանն ուղղված աշխատանքների իրականացման ժամանակ տեսագետների և պրակտիկ աշխատողների կողմից դատարանի դերի և կարգավիճակի վերաբերյալ քննարկվող առավել վիճահարույց խնդիրներից է դատավճիռ կայացնելու փուլում դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու հիմնախնդիրը:

Այսինքն՝ արդյո՞ք դատարանը դատավճիռ կայացնելու փուլում կարող է սեփական նախաձեռնությամբ փոփոխել դատախազի կողմից պաշտպանվող պաշտոնական մեղադրանքը և, փոխելով արարքի որակումը, ամբաստանյալին մեղավոր ճանաչել ՀՀ քրեական օրենսգրքի այլ հոդվածով կամ հոդվածի այլ մասով կամ կետով նախատեսված հանցագործության կատարման մեջ կամ, նույնը թողնելով արարքի իրավաբանական որակումը, փոխել հանցակազմի հատկանիշների բովանդակությունը, թե՛ դատարանի իրավասությունը պետք է եզրափակվի միայն մեղադրանքի հիմնավորվածությունը և ապացուցվածությունը ստուգելով: Այն է՝ դատական քննության արդյունքում պարզել մեղադրյալին առաջադրված մեղադրանքում սահմանված ՀՀ քրեական օրենսգրքի կոնկրետ հոդվածով կամ հոդվածի մասով կամ կետով նախատեսված կոնկրետ արարքը մեղադրյալի կողմից կատարելը, և անհամապատասխանության դեպքում կայացնել արդարացման դատավճիռ:

Ապագա քրեադատավարական օրենքում սույն հիմնախնդիրն տրվող լուծումն ունի համակարգային նշանակություն ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգրքի հիմքում դրվելիք տրամաբանության և փիլիսոփայության որոշման տեսանկյունից, քանի որ դրանով կայանաավորվի ոչ միայն դատական քննության փուլում դատարանի իրական դերը և կարգավիճակը, այլ նաև ապագա քրեադատավարական օրենքի հիմքում մրցակցության կամ ի պաշտոնե քննության մոդելների միջև ընտրությունը և ՀՀ Սահմանադրության ու Եվրոպական կոնվենցիային համահունչ դատարանի գործունեության ապահովումը և մեղադրյալի իրա-

վունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

Մինչև ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգրքում տվյալ հիմնախնդրի հնարավոր լուծումներին անդրադառնալն, անհրաժեշտ է նախապես ուսումնասիրել ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում դրան տրված կարգավորումը:

Հիմք ընդունելով ՀՀ ներկայիս քրեական դատավարության օրենսգրքում դատավարության սուբյեկտների միջև սահմանված գործառնության թափանցումը՝ մեղադրանքի կողմն է օբյեկտիվորեն կրում դատարան ներկայացված մեղադրանքը հիմնավորելու և ապացուցելու ռիսկը, իսկ դատարանը միայն լիազորված է հանուն Հայաստանի Հանրապետության մեղավոր ճանաչել անձին հանցագործության կատարման մեջ և նրա նկատմամբ նշանակել պատիժ՝:

Սակայն, գործնականում ծագում են իրավիճակներ, երբ մեղադրողը գտնում է, որ արարքը որակված է ճիշտ և մեղադրանքը փոփոխելու հիմքեր չկան, իսկ դատարանի ներքին համոզմամբ՝ արարքի որակումը ճիշտ չէ, քանի որ, ըստ դատարանի, ամբաստանյալը մեղավոր է քրեական օրենսգրքի մեկ այլ հոդվածով կամ հոդվածի այլ մասով նախատեսված հանցանք կատարելու մեջ կամ տվյալ հոդվածի հանցակազմով նախատեսված այլընտրանքային արարք կատարելու մեջ: Դրանով պայմանավորված առաջանում է հիմնախնդիր, թե ինչ պետք է անի դատարանն այդ դեպքում՝ կայացնի արդարացման դատավճիռ, թե դատավճռով փոփոխի մեղադրյալին առաջադրված մեղադրանքը և ճանաչի նրա մեղավորությունը մեկ այլ հանցագործության կատարման մեջ:

Նախկին օրենսդրության և պրակտիկայի համաձայն՝ դատարանում մեղադրանքի փոփոխությունը թույլատրվում էր, եթե փոփոխվող մեղադրանքը չէր վատթարացնում ամբաստանյալի վիճակը: Եթե դատական քննության ընթացքում դատարանը եզրակացնում էր, որ ամբաստանյալը կատարել է ավելի ծանր հանցանք, քան մեղադրանքի կողմից նրան առաջադրված մեղադրանքը, ապա նման դեպքերում դատարանը ոչ թե փոխում

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

եր մեղադրանքը, այլ գործն ուղարկում էր լրացուցիչ նախաքննության :

Հիմք ընդունելով այն սկզբունքը, որ դատարանը կաշկանդված չէր մեղադրանքի կողմի դիրքորոշմամբ՝ նման պրակտիկան երկար տարիներ համարվում էր ընդունելի և դիտարկվում էր բացառապես որպես հումանիզմի դրսևորում, քանի որ դրանով չէր վատթարանում ամբաստանյալի վիճակը և չէր խախտվում նրա պաշտպանության իրավունքը : Այդուհանդերձ, նման մոտեցումը արդարացված էր միայն ձևավորված համապատասխան նախադրյալների գոյությամբ՝ լրացուցիչ նախաքննության ինստիտուտի առկայությամբ և մեղադրողի կողմից դատական քննության ընթացքում մեղադրանքը փոփոխելու հնարավորության բացակայությամբ :

Սակայն, վերջին մի քանի տարիների ընթացքում միմյանց հաջորդեցին մի շարք իրադարձություններ, որոնք հիմնովին վերափոխեցին դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխման ընթացակարգին դատարանի մասնակցությունը և դրա հիմքում դրված փիլիսոփայությունը :

Նախ ՀՀ սահմանադրական դատարանի 24.07.2007թ. ՄԳՈ-710 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչվեց լրացուցիչ նախաքննության ինստիտուտը, ապա 28.11.07թ. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում լրացվեցին 309-րդ հոդվածի 2-րդ մասը, որի համաձայն՝ դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, և 309.1-րդ հոդվածը, որի 5-րդ մասի համաձայն, եթե ամբաստանյալի արարքի իրավաբանական որակումը ճիշտ չէ, իսկ մեղադրողը խստացնելու առումով արարքը վերադրակելու որոշում չի կայացնում կամ վերադրակելու համար դատական նիստը հետաձգելու միջնորդություն չի ներկայացնում, ապա դատարանն իր նախաձեռնությամբ մինչև 10 օր ժամկետով հետաձգում է դատական նիստը՝ առաջարկելով գլխավոր դատախազին կամ նրա տեղակալին վերահաստատելու մեղադրական եզրակացությունը :

Այնուհետև, 02.04.2010թ. ՄԳՈ-872 որոշմամբ ՀՀ Սահմանադրության 19-րդ հոդվածին հակասող և անվավեր ճանաչվեց 309.1-րդ հոդվածի՝ վերոշարադրյալ 5-րդ մասը :

Արդյունքում ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքով սահմանվեց այնպիսի իրավական կարգավորում, որ գործը քննող դատարանը ներկայումս չունի որևիցե իրավական գործիք «հուշելու» համար մեղադրանքի կողմին փոփոխելու իր կարծիքով անհիմն մեղադրանքը՝ այդ ճանապարհով «փրկելով» նրան արդարացման դա-

տավճռից : Դատարանը կարող է մեղադրանքի հիմնավորվածության և դրա փոփոխման հարցին անդրադառնալ միայն դատավճռի կայացման փուլում :

ՀՀ գործող քրեադատավարական օրենքն առանձին չի կարգավորել դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու հարցը : Հետևաբար, դատարանի կողմից դատավճիռ կայացնելիս մեղադրանքի փոփոխման հարցը կարգավորվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի՝ 28.11.07թ. լրացված 2-րդ մասով սահմանված կանոններով : Այսինքն, դատարանը մեղադրանքը փոփոխելիս պետք է ղեկավարվի դատարանում մեղադրանքի փոփոխման ընդհանուր կանոններով :

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխություն թույլատրվում է, եթե դրանով չի վատթարանում ամբաստանյալի վիճակը, և չի խախտվում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը : Մեղադրանքը խստացման առումով փոխելը թույլատրվում է միայն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ղեկավարվելով :

Այսինքն՝ դատարանը դատավճռի կայացման ժամանակ մեղադրանքի փոփոխման հարցը լուծելիս պետք է ղեկավարվի հետևյալ կանոններով՝

1. դրա արդյունքում չպետք է վատթարանա ամբաստանյալի վիճակը,

2. չպետք է խախտվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը :

Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման այս խիստ սահմանները մի կողմից ուղղված են ապահովելու մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը, մյուս կողմից ապահովելու նրա քրեական գործով օրինական և հիմնավորված դատավճռի կայացման հնարավորությունը :

Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման արդյունքում ամբաստանյալի վիճակը չվատթարացնելու պայմանը և ամբաստանյալի պաշտպանության իրավունքը չխախտելու պայմանն ինքնուրույն, բայց, միաժամանակ, սերտորեն փոխկապված կատեգորիաներ են : Այսպես, ամբաստանյալի վիճակի վատթարացման անթույլատրելիությունը հանդիսանում է ամբաստանյալի պաշտպանության քրեաիրավական, իսկ պաշտպանության իրավունքի խախտման անթույլատրելիությունը՝ ամբաստանյալի պաշտպանության քրեադատավարական երաշխիք : Այսինքն՝ այդ երաշխիքներից առաջինը կարգավորվում է և դրա չխախտված լինելու հանգամանքը որոշվում է քրեական իրավունքի նորմերով, այսինքն՝ ՀՀ քրեական օրենսգրքով, իսկ երկրորդը՝ քրեադատավա-

րության նորմերով, այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով: Այս իրավական կատեգորիաները սերտորեն առնչվում են միմյանց հետ, բայց նույնական չեն՝:

Մեղադրանքի փոփոխման հետևանքով ամբաստանյալի վիճակի վատթարացման անթույլատրելիությունը որոշելու չափանիշ է հանդիսանում սկզբնական մեղադրանքի համեմատ մեղադրյալի համար անբարենպաստ հետևանքների չհանգեցումը: Այսինքն՝ դատարանը սեփական նախաձեռնությամբ չպետք է խստացնի ամբաստանյալին առաջադրված մեղադրանքը:

Դատարանը մեղադրանքը չի կարող փոփոխել խստացման առումով, քանի որ այդ դեպքում դատարանը արդարադատություն իրականացնող մարմնից կվերածվի քրեական հետապնդում իրականացնողի, ինչպես նաև կխախտվի մեղադրյալի պաշտպանության իրավունքը, քանի որ նա կզրկվի նոր մեղադրանքից պաշտպանվելու բոլոր հնարավորություններից:

Մեղադրանքը համարվում է փոփոխված՝ խստացման առումով, եթե մեղադրանքի փոփոխման արդյունքում մեղադրյալի համար ստեղծվում է ավելի անբարենպաստ վիճակ, քան սկզբնական մեղադրանքով: Այսինքն՝ մեղադրանքը համարվում է խստացման առումով փոփոխված, եթե մեղադրանքի փոփոխման արդյունքում կիրառվում է քրեական օրենսգրքի այլ հոդված կամ հոդվածի մաս կամ կետ, որի սանկցիան նախատեսում է ավելի խիստ պատիժ կամ ավելի բարձր պատժաչափ, սկզբնական մեղադրանքի հետ համեմատ նախատեսում է լրացուցիչ պատիժ, կամ որպես այլընտրանք չի նախատեսում պատժի ավելի մեղմ տեսակներ, կամ, երբ ներառվում է արարքը որակյալ դարձնող ծանրանող հանգամանք, կամ մեծացվում է հանցագործությամբ պատճառված վնասը, կամ մեղադրանքի փոփոխման արդյունքում բացառվում է ամբաստանյալի նկատմամբ համաներման կիրառումը, կամ ստեղծվում են հետագայում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ավելի բարդ պայմաններ:

Այսինքն դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման արդյունքում մեղադրյալին առաջադրված մեղադրանքը կամ պետք է մեղմացվի, կամ չպետք է փոխվի մեղադրյալին վերագրվող արարքի իրավաբանական որակումը: Վերջինը վերաբերում է այն դեպքերին, երբ մեղադրանքի փոփոխման հետևանքով արարքի որակումը թեև մնում է նույնը, սակայն փոփոխվում է հանցակազմի դիսպոզիցիայի, այսինքն՝ հանցագործության հատկանիշների բովանդակությունը:

Օրինակ՝ դա կարող է կապված լինել միևնույն հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքի փոփոխման հետ (անձը մեղադրվում է սեռական այլ շահա-

գործման ձևով մարդկանց տրաֆիկինգի ներգրավելու մեջ, սակայն դատական քննության ընթացքում հիմնավորվում է, որ շահագործման ձևը ոչ թե սեռական շահագործումն է, այլ հարկադիր աշխատանքը) կամ միևնույն հանցակազմի հակաիրավական եղանակի փոփոխման հետ (ՀՀ քրեական օրենսգրքի 132-րդ հոդվածը որպես մարդկանց հավաքագրելու հակաիրավական եղանակ թվարկում է խարդախությունը և խոցելի վիճակի օգտագործումը: Եթե անձին մեղադրանք է առաջադրվել անձի խոցելի վիճակն օգտագործելու եղանակով հավաքագրելու համար, սակայն դատաքննության ընթացքում պարզվում է, որ արարքը կատարվել է ոչ թե խոցելի վիճակն օգտագործելու, այլ խարդախության եղանակով):

Ինչ վերաբերում է մեղադրանքը մեղմացման առումով փոփոխելուն, ապա, ըստ Ա. Վ. Ֆեդոտչենկոյի, դա դրսևորվում է մեղադրանքի ծավալից առանձին դրվագներ, հանցակազմեր հանելու, արարքը մեղմացման առումով վերադրակելու, որակյալ հատկանիշներ հանելու եղանակով:

Քրեական դատավարության տեսության մեջ և պրակտիկայում մշակված չափանիշների համաձայն՝ մեղադրանքը մեղմացման առումով համարվում է փոփոխված, եթե.

- մեղադրանքը վերադրակվում է քրեական օրենսգրքի հատուկ մասի ավելի մեղմ պատիժ նախատեսող հոդվածով(մասով, կետով),
- մեղադրանքից հանվում են ամբաստանյալին մեղսագրվող հանցավոր գործունեության առանձին դրվագներ,
- նվազեցվում է հանցագործությամբ պատճառված վնասի չափը,
- մեղադրանքից հանվում են ամբաստանյալի պատասխանատվությունը ծանրացնող կամ նրա համար բացասական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ՝:

Մեղադրանքը պետք է համարվի մեղմացման առումով փոփոխված նաև այն դեպքերում, երբ մեղադրանքի փոփոխման արդյունքում հնարավոր է դառնում ամբաստանյալի նկատմամբ համաներման ակտի կիրառումը, կամ ստեղծվում են հետագայում պատժի կրումից պայմանական վաղաժամկետ ազատման ավելի հեշտ պայմաններ:

Մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման անթույլատրելիությունը կապված է դատարանի կողմից մեղադրանքը փոփոխելիս փոփոխված մեղադրանքի հիմքում միայն սկզբնական մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները դնելու հնարավորության հետ:

Տ. Դոբրովոլսկայան նշել է. «Դատական քննության ընթացքում մեղադրանքի փոփոխման դեպքում մեղադրյալի պաշտպանության իրավունքի ապահովման համար անհրաժեշտ է, որ մեղադրանքի ձևակերպման մեջ փոփոխություն նախա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տեսելու, կամ արարքի իրավաբանական որակման փոփոխման, կամ մեղադրանքի նշված երկու տարրերի միաժամանակյա փոփոխման իմաստով մեղադրյալը չորվի իր համար անսպասելի անհրաժեշտության վիճակում և չզրկվի նախկինում իրեն չմեղսագրված փաստերից առանց բավարար ժամանակի պաշտպանությանը նախապատրաստվելու հնարավորությունից»¹² :

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ»-կետի համաձայն՝ մեղադրյալը պետք է ունենա բավականաչափ ժամանակ ու հնարավորություն՝ իր պաշտպանությունը կազմակերպելու համար: Այսինքն՝ դատավճռով մեղադրյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելիս դատարանը պետք է պարզի, թե արդյոք դրա արդյունքում չի խախտվում մեղադրյալի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով նախատեսված պաշտպանության իրավունքը:

Սադակն և այլոք ընդդեմ Թուրքիայի գործով Եվրոպական դատարանը նշել է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 3-րդ կետի «ա» ենթակետի դրույթները մատնանշում են շահագրգռված անձին «մեղադրանքի» հարցում տեղեկացնելու մասին ծայրահեղ զգույշ մոտեցում ցուցաբերելու անհրաժեշտության մասին: Եվրոպական դատարանի կարծիքով՝ ներկայացված մեղադրանքի, և, հետևաբար, դատարանի կողմից դրա հնարավոր իրավական որակման մասին մեղադրյալի ճշգրիտ և լրիվ տեղեկացումը քրեական դատավարությունում պրոպար դատաքննության էական նախապայման է¹³: Այսինքն՝ մեղադրյալը պետք է տեղյակ լինի իրեն ներկայացված մեղադրանքի հիմքում դրված բոլոր փաստական հանգամանքների հետ և ունենա բավարար հնարավորություններ և ժամանակ այդ մեղադրանքից պաշտպանվելու համար:

Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման դեպքում ամբաստանյալի պաշտպանության իրավունքը խախտվում է բոլոր այն դեպքերում, երբ դատարանը փոփոխված մեղադրանքի հիմքում դնում է այնպիսի փաստական հանգամանքներ, որոնք նախկին մեղադրանքի հիմքում չեն դրվել և մեղադրյալին չեն մեղսագրվել:

Նույնիսկ, եթե դատարանի կողմից փոփոխված կամ լրացված փաստական հանգամանքները հետագոտվել են դատական քննության ընթացքում, հաստատվում են հավաքված ապացույցներով, բայց ամբաստանյալին չեն մեղսագրվել, չեն դրվել սկզբնական մեղադրանքի հիմքում, ապա դա նշանակում է՝ նա չի ունեցել բավարար ժամանակ կամ միջոցներ¹⁴ կամ հնարավորություն դրանց մերժման համար: Հենց այդպիսի փոփոխության արդյունքում ամբաստանյալը զրկվում է հնարավորությունից և բավարար ժամանակից, որպեսզի համապարփակ կերպով գիտակցի իրեն ներկայացված մեղադրանքը, ընտրի պաշտպանու-

թյան առավել ճիշտ դիրքորոշումը կամ տակտիկան, ներկայացնի միջնորդություններ լրացուցիչ ապացույցների ստացման կամ պատժի մեղմացման նպատակով:

Մեղադրանքի փոփոխման հիմքով մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումը պետք է որոշվի յուրաքանչյուր առանձին գործով: Սակայն, մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումն անվիճելի է բոլոր այն դեպքերում, երբ դատախազի կողմից պաշտպանվող սկզբնական մեղադրանքը և դատարանի կողմից փոփոխված մեղադրանքը տարբերվում են հանցակազմի հատկանիշներով, այսինքն՝ հանցակազմի սուբյեկտով, օբյեկտով, օբյեկտիվ և սուբյեկտիվ կողմերով:

Այսինքն՝ ցանկացած դեպքում մեղադրանքի փոփոխությունը անթույլատրելի է, եթե դրա արդյունքում փոխվում է հանցակազմի հիմնական կամ ֆակուլտատիվ հատկանիշներից որևէ մեկը, կամ լրացվում է նոր հանցակազմի հատկանիշ, քանի որ դա, անխուսափելիորեն, հանգեցնում է մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման: Մեղադրանքի փոփոխության ժամանակ դատարանը կարող է միայն հանել սկզբնական մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքները, կամ ընդհանրապես չփոփոխել դրանց կազմը, սակայն չի կարող փոփոխել այդ փաստական հանգամանքները կամ լրացնել նոր փաստական հանգամանք:

Այսպես, օրինակ՝ դատարանը կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասով (ծանրացնող հանգամանքներում կատարված սպանություն) առաջադրված մեղադրանքը փոփոխել 104-րդ հոդվածով (սպանություն) առաջադրված մեղադրանքով, ՀՀ քրեական օրենսգրքի 305-րդ հոդվածը (պետական, քաղաքական և հասարակական գործիչի սպանությունը) փոփոխել ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 1-ին մասով կամ 2-րդ մասի 2-րդ կետով (անձի սպանությունը՝ կապված այդ անձի կողմից իր ծառայողական գործունեության կամ հասարակական պարտքի կատարման հետ), ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ հոդվածը (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը)¹⁵ 113-րդ հոդվածով(դիտավորությամբ առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելով), 119-րդ հոդվածը (խոշտանգումը)¹⁶ 117-րդ հոդվածով (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելով), 117-րդ հոդվածը (դիտավորությամբ առողջությանը թեթև վնաս պատճառելը)¹⁷ 118-րդ հոդվածով (ծեծը):

Սակայն, դատարանը դատավճռով ՀՀ քրեական օրենսգրքի 175-րդ հոդվածը (ավազակություն) չի կարող փոխարինել ՀՀ քրեական օրենսգրքի 176-րդ (կողոպուտ) կամ 177-րդ հոդվածներով (գողություն), կամ ՀՀ քրեական

www.lawinstitute.am

օրենսգրքի 176-րդ հոդվածը չի կարող փոխարինել ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածով, քանի որ այս դեպքում փոխվում է հանցակազմի օբյեկտիվ կողմը, կամ 104-րդ հոդվածը (սպանությունը) չի կարող փոխարինել 109-րդ հոդվածով (անգուշությանը մահ պատճառել), քանի որ այս դեպքերում փոխվում է հանցակազմի սուբյեկտիվ կողմը և այլն:

Մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտումն առկա է նաև բոլոր այն դեպքերում, երբ դատարանի կողմից փոխվում է հանցակազմի դիսպոզիցիայում նկարագրված այլընտրանքային արարքը կամ փոփոխվում է միևնույն հանցակազմի հակաիրավական եղանակը:

Այսինքն՝ ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից բխում է, որ դատարանը դատավճիռ կայացնելիս կարող է փոփոխել մեղադրյալին ներկայացված և դատական քննության ընթացքում դատախազի կողմից պաշտպանվող մեղադրանքը, եթե նոր մեղադրանքը ավելի խիստ չէ, քան սկզբնական մեղադրանքը և դրա հիմքում չեն լրացվել նոր փաստանական հանգամանքներ՝ ի տարբերություն նախորդ մեղադրանքի կամ չեն փոփոխվել վերջինիս հիմքում դրված փաստական հանգամանքները:

Այսպես՝ թիվ ԵԷԳ 0058/01/10 գործով դատարանը ՀՀ քրեական օրենսգրքի 112-րդ 1-ին մասով (դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառել) նախատեսված հանցագործության կատարման համար մեղադրվող Սիրակ Շավարշի Սաքանյանին առաջադրված մեղադրանքը փոխել է 120-րդ հոդվածի 1-ին մասով (անգոցուշությամբ առողջության ծանր վնաս պատճառել) :

Դրա արդյունքում ամբաստանյալի համար թեկուզ և չեն առաջացել անբարենպաստ հետևանքներ, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան շատ ավելի մեղմ է, քան 112-րդ հոդվածի սանկցիան, սակայն առկա է նրա պաշտպանության իրավունքի խախտում, քանի որ սկզբնական մեղադրանքի համեմատ փոփոխվել են հանցակազմի սուբյեկտիվ կողմը՝ դիտավորությունն անգոցուշությամբ: Այսինքն՝ տվյալ դեպքում դատարանի կողմից մեղադրանքի փոփոխումն անթույլատրելի էր, և դատարանը ոչ թե պետք է փոխեր դատախազի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը, այլ պարտավոր էր կայացնել արդարացման դատավճիռ:

ԵԱԶԳ 0171/01/09 քրեական գործով դատարանը դատավճռով Աննա Ալբերտի Ղազարյանին առաջադրված ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով կատարված գողություն) առաջադրված մեղադրանքը փոխել է ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով

(խոշոր չափերով կատարված գողություն):

Դատարանը, մասնավորապես, դատավճռի նկարագրական-պատճառաբանական մասում նշել է. «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասի վերլուծությունից բխում է, որ դատական քննության ընթացքում դատարանի նախաձեռնությամբ մեղադրանքի փոփոխություն հնարավոր է միայն մեղմացման առումով և պայմանով, որ դրանով չի խախտվի ամբաստանյալի պաշտպանության իրավունքը: Դատարանը կարող է սույն քրեական գործով առաջադրված մեղադրանքը 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետից փոփոխել 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված արարքի համար սահմանված է պատիժ չորսից ութ տարի ժամկետով ազատազրկում՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով նախատեսված արարքի համար՝ երկուսից վեց տարի ժամկետով ազատազրկում: Այսինքն՝ մեղադրանքի նման փոփոխություններով ամբաստանյալի վիճակը չի վատթարանում:

Տվյալ դեպքում չի խախտվում նաև ամբաստանյալի պաշտպանության իրավունքը, քանի որ գործի փաստերը նույնն են, իսկ ամբաստանյալը թե՛ նախնական քննության, թե՛ դատական քննության ընթացքում հնարավորություն է ունեցել պաշտպանվելու առանձնապես խոշոր չափերով հափշտակություն կատարելու համար իրեն առաջադրված մեղադրանքից, այսինքն ավելի ծանր մեղադրանքից» :

Այսինքն՝ տվյալ գործով դատարանը, ի տարբերություն նախորդ գործի, հիմնավորել է նաև դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման թույլատրելիությունը: Դատարանի կողմից մեղադրանքի փոփոխումը թույլատրելի է, քանի որ ՀՀ քրեական օրենսգրքի 177-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի սանկցիան շատ ավելի մեղմ է քան 177-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի սանկցիան, և ամբաստանյալի պաշտպանության իրավունքը չի խախտվել, քանի որ սկզբնական մեղադրանքի համեմատ միայն հանվել է «գողության առանձնապես խոշոր չափերով» կատարված լինելը, որը փոխարինվել է «խոշոր չափերով կատարված գողությամբ»:

Ելնելով վերոշարադրյալից՝ մեր կարծիքով, գործող քրեադատավարական օրենքով սահմանված դատարանի կողմից մեղադրյալին առաջադրված մեղադրանքը սեփական նախաձեռնությամբ փոփոխելու կանոնները լիովին բավարար են դատարանին «մեղադրական թեքումից» ձեռքազատելու և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն ապահովելու համար: Սակայն դեռևս խորհրդային ժամանակներից մե-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

դադրանքի կողմին «արդարացման դատավճիռ» փրկելու վերաբերյալ արմատացած մտածելակերպը դեռևս խոչընդոտ է իրավակիրառ պրակտիկայում ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 309-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնների ապահովման համար:

Այդ խնդիրների լուծման ճանապարհին անգնահատելի դեր պետք է ունենա ՀՀ նոր քրեական դատավարության օրենսգիրքը, որի առաջնային խնդիրն է ոչ միայն ժամանակակից իրավական պետության պահանջներին համապատասխան քրեադատավարական վարույթի նախատեսումը, այլ նաև քրեական դատավարության բոլոր սուբյեկտների մոտ այդ պահանջներին համահունչ մտածելակերպի ձևավորմանը նպաստելը:

Այսպես՝ ՀՀ քրեական դատավարության ապագա օրենսգրքի հայեցակարգի 8.22-րդ կետը սահմանում է. «Ելնելով պասիվ դատարանի կարգավիճակից և դատական քննության սահմանների պահպանման կանոնից՝ նախագիծը պետք է կյանքի կոչի հետևյալ հայեցակարգային սկզբունքը. դատական քննության ընթացքում մեղադրանքը կարող է փոփոխվել բացառապես այն սուբյեկտի կողմից, որն այդ մեղադրանքը պաշտոնապես ներկայացրել է դատարանին: Դատախազն օբյեկտիվորեն կրում է դատարան ներկայացրած մեղադրանքի հիմնավորվածության և ապացուցվածության ռիսկը և մեկ անգամ օրենսդրական կարգավորման մակարդակով ստանում է այն փոփոխելու հնարավորություն, թեև գրկված չէ նաև մեղադրանքի ընդհանրապես հրաժարվելու իրավասությունից: Նման հնարավորությունը չօգտագործելու դեպքում դատարանն իրավունք չունի, առավել ևս պարտավոր չէ մեղադրողին «փրկել» արդարացման դատավճիռ, քանի որ դա կհակասի դատական քննության փուլում դատարանի, որպես դատական իշխանություն և արդարադատություն իրականացնող մարմնի, դերին և նշանակությանը:

Նույնիսկ ավելի մեղմ մեղադրանքով մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում դատարանը կխախտի անմեղության կանխավարկածի սկզբունքը, քանի որ որոշում ընդունելիս ընտրություն է կատարելու ոչ թե մեղադրյալի մեղավորության և, անմեղության միջև, այլ միայն քննարկելու է, թե որ հանցանքի կատարման մեջ է մեղավոր անձը»:

Նշված կանոնի Հայեցակարգի 8.24-րդ կետը սահմանել է մեկ բացառություն: Այն է՝ դատարանը, չփոխելով մեղադրանքի հիմքում ընկած փաստական հանգամանքները, կարող է մեղադրանքի ծավալից հանել մեղադրյալի պատասխանատվությունը, արարք որակյալ դարձնող և /կամ/ պատիժը ծանրացնող հանցակազմի հատկանիշներ, ինչպես նաև մեղադրյալի համար բացասական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ: Այս պարագա-

յում գործում է այսպես կոչված կլանման սկզբունքը, երբ հանցակազմի որակյալ հատկանիշներ պարունակող մեղադրանքը ներառում է հասարակ մեղադրանքը և այդօրինակ, ինչպես նաև պատիժը ծանրացնող և բացասական այլ հանգամանքների բացառումը մեղադրանքից չեն խախտում մեղադրյալի պաշտպանության իրավունքը կամ կասկածանքի տակ չեն դնում դատարանի կողմից անմեղության կանխավարկածի պահպանումը»:

Այսինքն՝ ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգիրքը հիմնվել է դատարանի կողմից մեղադրանքի փոփոխման թույլատրելիության այն նույն չափանիշների վրա, որոնք նախատեսված են ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքի 309 հոդվածի 2-րդ մասում: Այն է՝ դրա արդյունքում մեղադրյալի պաշտպանության իրավունքի խախտման անթույլատրելիությունը և նրան ներկայացված մեղադրանքն ավելի խիստ մեղադրանքով փոփոխելու անթույլատրելիությունը:

Ելնելով դատարանի կողմից մեղադրանքը փոփոխելու դեպքում կայացվելիք դատավճիռի առավել հիմնավորված լինելն ապահովելու անհրաժեշտությունից՝ ապագա քրեադատավարական օրենսգրքում անհրաժեշտ է սահմանել նաև, որ դատարանը դատավճիռ կայացնելիս մեղադրյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելու դեպքում պարտավոր է պարտադիր կերպով հիմնավորել, որ մեղադրանքի փոփոխման արդյունքում չի խախտվել ամբաստանյալի պաշտպանության իրավունքը և չի վատթարացել նրա վիճակը:

Կարծում ենք՝ դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ մեղադրյալին առաջադրված մեղադրանքը փոփոխելու վերաբերյալ 28.11.07թ. ՀՀ գործող քրեական դատավարության օրենսգրքում կատարված փոփոխությունները, ՀՀ Սահմանադրական դատարանի վերը նշված որոշումները, 2010թ. ՀՀ կառավարության արձանագրային որոշմամբ հաստատված ՀՀ ապագա քրեական դատավարության օրենսգրքի հայեցակարգի կարգավորումները և այդ հիմնախնդրի վերաբերյալ բազմաթիվ քննարկումները կապահովեն այդ հիմնախնդրի այնպիսի օրենսդրական կարգավորումը և պրակտիկ կիրառումը, որը ՀՀ Սահմանադրության և Եվրոպական կոմիտեցիային համահունչ կապահովի դատարանի որպես արդարադատության իրականացնող մարմնի դերը և կարգավիճակը և մեղադրյալի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության: Ընդհանուր մաս: Երևան, Եր. համ. հրատ. 2006թ. 197-րդ էջ:

² Տե՛ս Ղանբարյան Ա. Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքի հրաժարվելը: Եր. Իրավունք, 2009, 34 էջ:

³ Տե՛ս ՀՀ կառավարության 2010 մարտի 10-ի որոշմամբ հաստատված ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի հայեցակարգի (այսուհետ՝ Հայեցակարգ) 8.19-րդ կետ, 42-րդ էջ:

⁴ Տե՛ս Հայեցակարգի 8.20-րդ կետ, 42-րդ էջ:

⁵ Տե՛ս Бравилова Е.А. Пределы судебного разбирательства по УП РФ // Актуальные проблемы реформирования законодательства и экономики России и стран СНГ- 2002. Материалы Международной научно-практической конференции, 12-13 апреля 2002г.: В 3 ч. / Под общ. ред. В.А. Киселевой. Юж. Урал. гос. ун-т, Фак. Экономика и право. Челябинск. 2002. Ч.3. С. 194.

⁶ Տե՛ս Бравилова Е.А. Недопустимость нарушения права на защиту как условие изменения обвинения в суде / Е.А. Бравилова // Правовая защита частных и публичных интересов: материалы Общероссийской межвузовской научно-практической конференции, 22-23 января 2003г. / Отв. ред. В.Ф. Горбовой, З.В. Макарова; Юж-Урал. гос. ун-т, Финансово - экономический фак. - Челябинск. ЮУрГУ. 2003. С.84-93.

⁷ Տե՛ս Бравилова Е.А. նույն տեղը:

⁸ Տե՛ս Հայեցակարգի 8.17 կետ:

⁹ Տե՛ս Ղանբարյան Ա. Դատարանում մեղադրանքը փոխելը և մեղադրանքի հրաժարվելը: Եր. Իրավունք, 2009, 53 էջ:

¹⁰ Տե՛ս Федотченко А. В. Привлечение лица в качестве обвиняемого. Автореф. Дисс. ... канд. Юрид. Наук. М. 2006. С. 13.

¹¹ Տե՛ս Հայեցակարգ 8.18-րդ կետ:

¹² Տե՛ս Добробольская Т. Н. Изменение обвинения в судебных стадиях советского уголовного процесса. М Юрид. Лит. 1977. С 58.

¹³ Տե՛ս Պելիսյեն և Սասին ընդդեմ Ֆրանսիայի որոշումը 25.04.1999թ., բողոք N25444/94,ECHR 1999-II, էջ 52:

¹⁴ Տե՛ս Печников Н.П.. Уголовный процесс (Особенная часть): конспект лекций. Тамбов: Изд-во Тамб. гос.техн. ун-та,2005. 112 с.

¹⁵ Տե՛ս Երևան քաղաքի Էրեբունի և Նուբարաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի(նախագահությամբ դատավոր Արթուր Օհանյանի) կողմից թիվ ԵԷԴ- 0058/01/10 գործով կայացված դատավճիռ:

¹⁶ Տե՛ս Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթունի վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի (նախագահությամբ դատավոր Մխիթար Պապոյանի) կողմից թիվ ԵԱԶԴ- 0171/01/09 կայացված դատավճիռ:

РЕЗЮМЕ

Изменение судом первой инстанции обвинения по собственной инициативе

В этой работе представлен вопрос об изменении судом по собственной инициативе обвинения возложенного на подсудимого в ходе уголовного процесса, а также полностью проанализированы те критерии, на основании которых суд имеет право изменить обвинение, и которые необходимы для защиты прав и законных интересов подсудимого в соответствии с Конституцией Республики Армения. В работе также представлены регулирование данного вопроса по концепции нового Уголовно- процессуального кодекса Республики Армения и предложения по ее усовершенствованию.

SUMMARY

Altering the charge, by the general jurisdiction court upon own initiative

This work covers the issue of altering the charge, brought against the accused, by the court upon own initiative in criminal proceedings in the Republic of Armenia, provides a thorough and comprehensive analysis of those standards whereupon the court may alter the charge and which are necessary for the protection of the rights and legal interests of the accused in compliance with the Constitution of the Republic of Armenia. The work deals also with the regulation of this issue in the concept paper for the new Criminal Procedure Code of the Republic of Armenia, and includes recommendations for its improvement.

ԳՈՒՐԳԵՆ ՄԱԴՈՅԱՆ

ՀՀ փաստաբանների պալատի հանրային պաշտպանի գրասենյակի փաստաբան



ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱՆՑՆԵԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հայաստանի Հանրապետության /այսուհետ՝ ՀՀ/ Սահմանադրությունը, ՀՀ-ն հռչակելով ժողովրդավարական պետություն, սահմանում է, որ ՀՀ 18 տարին լրացած քաղաքացիներն ունեն ընտրելու և հանրաքվեներին մասնակցելու, ինչպես նաև անմիջականորեն և կամքի ազատ արտահայտությամբ ընտրված իրենց ներկայացուցիչների միջոցով պետական կառավարմանը և տեղական ինքնակառավարմանը մասնակցելու իրավունք:

Հիմնական օրենքը, միաժամանակ, ամրագրում է, որ քաղաքացիներն ունեն օրենքով սահմանված ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության ընդունվելու իրավունք, և այդ ծառայության սկզբունքներն ու կազմակերպման կարգը սահմանվում են օրենքով¹:

Քաղաքացիների այս իրավունքի արդյունավետ իրացումն ապահովելու համար վերջին տասնամյակում ուշացումով սկսվել և շարունակվում են բարեփոխումները ՀՀ պետական կառավարման համակարգում, որի կարևոր բաղկացուցիչն են հանդիսանում հանրային ծառայության, այդ թվում պետական և նրա հատուկ տեսակը հանդիսացող ոստիկանությունում ծառայության ոլորտում իրականացվող բարեփոխումները: Այս գործընթացի շրջանակներում ընդունվեցին և հետագայում բազմաթիվ փոփոխությունների և լրացումների ենթարկվեցին ոստիկանությունում ծառայության ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորմանն ուղղված իրավական ակտեր: Դրանց շարքում, կապված կարգավորող հարաբերությունների բնույթով, առանձնանում էին «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքը /ընդունված 2001թ-ի ապրիլի 16-ին/, «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը /ընդունված 2002թ-ի հուլիսի 3-ին/: Համապատասխան իրավական հիմքերով կառուցվածքային բազմաթիվ փոփոխությունների ենթարկվեց այս ոլորտում պետական կառավարում իրականացնող հանրապետական գործադիր մարմինը: Ընդ որում, այդ փոփոխությունները վերաբերում էին ինչպես պետական մարմինների համակարգում վերջինիս կարգավիճակին, այնպես էլ նրա համակարգում գործող կառուցվածքային ստորաբաժանումներին:

Այս ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունների կարգավորումը նոր որակ ստացավ 2011թ-ի մայիսի 26-ին «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ, որով սահմանվում են ՀՀ հանրային ծառայության սկզբունքները, կազմակերպման կարգը, էթիկայի կանոնները, ինչպես նաև կարգավորվում են բարձրաստիճան պաշտոնատար անձանց գույքի, եկամուտների ու փոխկապակցված անձանց մասին հայտարարագրման հետ կապված հարաբերությունները:

Ոստիկանությունում ծառայության կազմակերպման իրավական ապահովման հիմնախնդիրներից է նաև ոստիկանության ծառայողների կադրային կազմի ընտրությունը և պահպանումը: Կադրային կազմի քաղաքականության հիմքը կազմում են ոստիկանության ծառայողների ընտրության և ծառայողական-պաշտոնային հաջող առաջխաղացումներին վերաբերող հարցերը:

Պետական /ոստիկանությունում/ ծառայության անցնելու իրավունքը պետական կառավարմանը անմիջականորեն մասնակցելու և հանրային ծառայության անցնելու քաղաքացիների իրավունքների մի մասն է: Այն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիներին պետական ծառայության անցնելու հավասար հնարավորություն է տալիս: Սակայն, այս իրավունքը իրենից ներկայացնում է հավասար իրավաբանական հնարավորություն, բայց ոչ դրա փաստացի իրականացում: Դա չի նշանակում, որ 18 տարին լրացած քաղաքացիները ցանկացած պահի իրավունք ունեն, իսկ պետական մարմինները պարտավոր են անհապաղ նրանց նշանակել իրենց ցանկացած պաշտոններում:

Պետական մարմիններին վերապահված խնդիրների և գործառնությունների արդյունավետ իրականացման, նրանց բնականոն գործունեության համար անհրաժեշտ է, որ նրանք ունենան հատուկ պատրաստված և որոշակի պայմանների բավարարող ծառայողական անձնակազմ, ուստի դրա ապահովման համար, ելնելով պետական ծառայության տեսակների առանձնահատկություններից, ՀՀ օրենսդրությունը պետական համապատասխան ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար սահմանում է այն հանգամանքները, որոնց

առկայության դեպքում անձն առանց խտրականության իրավունք ունի և այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում անձն իրավունք չունի զբաղեցնելու համապատասխան պետական ծառայության պաշտոնը: Օրենքով ուստիկանությունում ծառայության համար ներկայացվող այդ հանգամանքների ամբողջությունը կազմում են ուստիկանությունում ծառայության պաշտոն զբաղեցնելու պայմանները: Դրա տակ նկատի են ունեցվում այն պահանջները, որոնք ներկայացվում են ուստիկանության ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու ցանկություն ունեցող անձին՝:

«Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, այլոց շարքում, որպես հանրային ծառայության սկզբունքներ սահմանելով հանրային ծառայողների արհեստավարժության, քաղաքացիների համար իրենց մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների համապատասխան հանրային ծառայության հավասար մատչելիության, անկողմնակալության, ազնվության և պատասխանատվության զգացումի սկզբունքները, դրանց իրացման համար որպես երաշխիք ամրագրել է, որ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունք ունեն հանրային ծառայության տվյալ պաշտոնի անձնագրով /նկարագրով/ ներկայացվող պահանջները բավարարող և պետական ծառայության առանձին տեսակները, ինչպես նաև համայնքային ծառայությունը կարգավորող ՀՀ օրենքներով նախատեսված պահանջները բավարարող քաղաքացիները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից: Միաժամանակ, հանրային ծառայության ընդունվելու իրավունք չունի այն անձը, ով դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ, գրկվել է հանրային ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից, տառապում է այնպիսի հիվանդությամբ, որը հանրային ծառայության տվյալ պաշտոնի նշանակվելու դեպքում կարող է խոչընդոտել իր լիազորությունների իրականացմանը, դատապարտվել է հանցագործության համար և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ կամ օրենքի խախտմամբ չի անցել պարտադիր զինվորական ծառայությունը:

ՀՀ ուստիկանությունում ծառայության, որպես մասնագիտական գործունեության, ունեցած յուրահատկությամբ պայմանավորված՝ օրենսդիրը ներկայացնում է ուստիկանությունում ծառայության անցնելու հատուկ պահանջներ:

Այսպես, **ուստիկանությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության մինչև 30 տարեկան այն քաղաքացին, ով անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացա-**

ռությամբ իզական սեռի քաղաքացիների ու կրտսեր և միջին խմբի պաշտոններում դիմելու պահին պարտադիր զինվորական ծառայությունից օրենքով սահմանված կարգով ազատված քաղաքացիները, բացառությամբ նրանց, ովքեր դրանից ազատվել են՝ հանրապետական գորակոչային հանձնաժողովի կողմից առողջական վիճակի պատճառով զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչվելով), տիրապետում է հայերենին, իր գործնական, անձնական, բարոյական հատկանիշներով, կրթությամբ, առողջական վիճակով և ֆիզիկական պատրաստականությամբ ունակ է կատարելու ուստիկանության ծառայողի պարտականությունները՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից :

Պետական կառավարման մասնակցելու իրավունքը ՀՀ քաղաքացիների քաղաքական իրավունքներից է, ուստի ՀՀ Սահմանադրության հիման վրա օրենքը ուստիկանությունում ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքով օժտում է միայն ՀՀ քաղաքացիներին: ՀՀ տարածքում բնակվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք ՀՀ-ում իրավունք չունեն հավակնել պետական ծառայության պաշտոնի և չեն կարող լինել պետական ծառայողներ:

Ուստիկանության ծառայողը, բացառությամբ ուստիկանության բարձրագույն խմբի պաշտոն զբաղեցնող անձի, միաժամանակ կարող է լինել այլ պետության քաղաքացի:

Հանրային ծառայության պրոֆեսիոնալիզմի սկզբունքի իրացմանն է ուղղված նաև քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով ներկայացվող պահանջներին բավարարելու պահանջը: Ուստիկանությունում ծառայության պաշտոնների անձնագրերը, ելնելով յուրաքանչյուր պաշտոնի բնույթից, ընդգրկում են աշխատանքային ստաժի, փորձի, կրթության, համապատասխան դասային աստիճանների առկայության, օտար լեզվի (լեզուների), իրավական ակտերի իմացության, տրամաբանության և այլ չափանիշներ:

Ի տարբերություն պետական ծառայության որոշ տեսակների, որոնց դեպքում օրենսդիրը որպես ծառայության անցնելու համար անհրաժեշտ պայման նախատեսում է տարիքային նվազագույն ցենզ՝ այն է 18 տարին լրացած լինելը՝, ուստիկանությունում ծառայության անցնելու համար օրենքը, նշելով, որ ՀՀ ուստիկանությունում ծառայության կարող անցնել մինչև 30 տարեկան քաղաքացին, սահմանում է տարիքային առավելագույն ցենզը: Իրավական նման կարգավորման դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ ուստիկանությունում ծառայության կարող են անցնել նաև իզական սեռի քաղաքացիները, որոնց դեպքում խոսք չի կարող լինել պարտադիր զինվորական ծառայություն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

անցած լինելու մասին, և այն, որ ոստիկանության կրտսեր խմբի պաշտոններում ծառայության կարող են անցնել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող քաղաքացիները, ինչպիսի պայմաններում չի բացառվում, որ ոստիկանությունում ծառայություն անցնելու հավակնորդություն ներկայացնեն 16-18 տարեկան ՀՀ քաղաքացիները, նպատակահարմար է օրենքով սահմանել նաև ոստիկանությունում ծառայության անցնելու տարիքային նվազագույն 18 տարեկանը լրացած լինելու ցեղը:

Օրենսդիրի կողմից ոստիկանությունում ծառայության անցնելու համար մինչև 30 տարեկան լինելու վերաբերյալ պահանջի ներկայացումը, չնայած նրան, որ նպատակ է հետապնդում ոստիկանության ծառայության թափուր պաշտոնները համարել հնարավորինս երիտասարդ և հեռանկարային կադրերով, այնուամենայնիվ, կարծում ենք, արդյունավետ չէ և անհարժեշտ է այստեղ կիրառել Ռուսաստանի Դաշնության պրակտիկան՝ որպես առավելագույն տարիքային ցեղ սահմանելով 35 տարեկանը:

Առանձին մասնագիտություններով ոստիկանությունում ծառայության անցնելու համար կարող են սահմանվել տարիքային ավելի բարձր սահմանափակումներ: Այդ մասնագիտությունների ցանկը և դրանց համար նախատեսված առավելագույն տարիքային սահմանափակումները սահմանում է ՀՀ կառավարությունը:

Հաշվի առնելով ոստիկանությունում հատուկ ծառայության առանձնահատկությունները՝ օրենքը արական սեռի քաղաքացիներին ոստիկանությունում ծառայության անցնելու համար ներկայացնում է պարտադիր զինվորական ծառայության անցած լինելու պահանջ: Պարտադիր զինվորական ծառայություն է համարվում զինված ուժերում և այլ զորքերում զորակոչված շարքային ու սպայական կազմերի, ռազմաուսումնական հաստատություններում սովորող կուրսանտների զինվորական ծառայությունը:

ՀՀ Սահմանադրության համաձայն՝ ՀՀ պետական լեզուն հայերենն է: Հայերենին տիրապետելու տակ հասկացվում է նրա՝ ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր խոսքին և կանոններին տիրապետելը:

Ոստիկանության ծառայողին ներկայացվող մասնագիտական, ֆիզիկական պատրաստվածության, առողջական վիճակի հետ կապված պահանջները սահմանում է ՀՀ կառավարությունը: Դրանք օպերատիվ ծառայողական խնդիրների լուծման համար անհրաժեշտ գիտելիքների, հմտությունների և ֆիզիկական ծանրաբեռնվածության հաղթահարման համար որոշակի ունակությունների ամբողջությունն են: Ոստիկանության միջին, ավագ և գլխավոր խմբերի պաշտոններում նշանակումը կատարվում է բարձրագույն կրթության մա-

սին պետական նմուշի դիպլոմի առկայության դեպքում, իսկ կրտսեր խմբի պաշտոններում կարող են նշանակվել առնվազն միջնակարգ կրթություն ունեցող այն քաղաքացիները, ովքեր ոստիկանության ուսումնական հաստատությունում սահմանված կարգով անցել են եռամսյա ուսումնական փորձաշրջան և ստացել են դրական արդյունք:

Ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին՝

• **ով դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ:** Քաղաքացու գործունակությունը քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու քաղաքացու ունակությունն է: ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով դատարանով անգործունակ կարող է ճանաչվել այն քաղաքացին, որը հոգեկան խանգարման հետևանքով չի կարող հասկանալ իր գործողությունները կամ դեկավարել դրանք, իսկ սահմանափակ գործունակ կարող է ճանաչվել այն քաղաքացին, ով ոգելից խմիչքների կամ թմրանյութերի չարաշահման, ինչպես նաև մոլեխաղերով հրապուրվելու հետևանքով իր ընտանիքին նյութական ծանր դրության մեջ է դնում: Եթե վերացել են քաղաքացուն գործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչելու հիմքերը, դատարանը նրան գործունակ է ճանաչում:

• **ով դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից:** Քաղաքացիական ծառայության պաշտոն զբաղեցնելու իրավունքից զրկումը հանդիսանում է ՀՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի տեսակներից՝ որպես որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելու տարատեսակ: Որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, կազմակերպություններում որոշակի պաշտոններ զբաղեցնելը, իսկ որոշակի գործունեությանը զբաղվելու իրավունքից զրկելը կատարված հանցանքի բնույթի հետ կապված որոշակի գործունեությանը զբաղվելն արգելվել է: Այն կիրառվում է և՛ որպես հիմնական, և՛ որպես լրացուցիչ պատիժ: Պատժի այս տեսակը, որպես հիմնական պատիժ, սահմանում է երկուսից յոթ տարի ժամկետով դիտավորյալ հանցագործությունների համար և մեկից հինգ տարի ժամկետով անգզույշ հանցագործությունների համար, իսկ որպես լրացուցիչ պատիժ՝ մեկից հինգ տարի ժամկետով: Այն անձի նկատմամբ որպես պատիժ դատարանը կարող է նշանակել իր մեղադրական դատավճռով որոշ հանցագործություններ կատարելու համար:

www.lawinstitute.am

• ով դատապարտվել է դիտավորյալ հանցագործություն կատարելու համար կամ դատապարտվել է անզգույշ հանցագործություն կատարելու համար, և դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված չէ: Անձը դատվածություն ունեցող է համարվում մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու օրվանից մինչև դատվածությունը մարվելու կամ հանելու պահը: Դատվածություն չունեցող են համարվում այն անձինք, ովքեր դատարանի դատավճռով դատապարտվել են առանց պատիժ նշանակելու, կամ դատարանի դատավճռով ազատվել են պատիժը կրելուց, կամ պատիժը կրել են այնպիսի արարքի համար, որի հանցավորությունն ու պատժելիությունը վերացված են օրենքով: Դատվածությունը հանելը կամ մարելը վերացնում է դատվածության հետ կապված բոլոր իրավական հետևանքները, սակայն այս նորմը արգելք չէ օրենքով սահմանափակումներ նախատեսելու՝ դատավորի, դատախազի, ոստիկանության ծառայողի, քրեակատարողական ծառայողի, ազգային անվտանգության մարմիններում ծառայողի պաշտոններ զբաղեցնելու համար :

• ում նկատմամբ իրականացվում է քրեական հետապնդում: Քրեական հետապնդման հարուցման տակ հասկացվում է քրեական հետապնդման մարմնի որոշումն անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչ այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին: Այսինքն՝ ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ում նկատմամբ քրեական հետապնդման մարմնի կողմից որոշում է կայացվել որպես մեղադրյալ ներգրավելու մասին, կամ մինչ այդ ձերբակալելու կամ խափանման միջոց կիրառելու մասին: Անձի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվում է քրեական գործով վարույթն իրականացնող մարմնի կողմից՝ նրան առաջադրված մեղադրանքը վերացնելու կամ մեղադրանքից հրաժարվելու մասին որոշում կայացնելով¹¹ :

• ով չի համապատասխանում օրենքով ոստիկանությունում ծառայություն անցնելու համար սահմանված պահանջներին:

Ակնհայտ է, որ ոստիկանությունում ծառայություն անցնելու համար ներկայացվող պահանջներից ու սահմանափակումներից շատերը հիշատակված երկու իրավական ակտերում անհարկի կրկնվում են և ցանկալի է դրանից խուսափելու համար «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենքը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքին համապատասխանեցնելու օրենսդրական պահանջի իրականացման շրջանակում կրկնվող նորմերը վերացնել:

Ոստիկանությունում ծառայության անցնելու համար ներկայացվող այս պայմանները սպա-

ռիչ չեն, և օրենսդիրը նախատեսել է նաև այլ պահանջներ և սահմանափակումներ, որոնք չնայած դիտվում են ոչ թե որպես ծառայության անցնելու պայմաններ, այլ՝ ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումներ, սակայն կարող են խոչընդոտ հանդիսանալ ծառայության անցնելու ցանկություն ունեցող քաղաքացու համար:

Այսպես, ոստիկանության ծառայողը չի կարող անձամբ զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել այլ վճարովի աշխատանք, բացի գիտական, մանկավարժական, ստեղծագործական աշխատանքից: Վերջինս իրավունք չունի լինել որևէ կուսակցության, հասարակական քաղաքական, հասարակական /բացառությամբ գիտական մշակութային, մարզական, որսորդական, վետերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման միավորված կազմակերպությունների/, այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ իր շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել¹² :

Եթե ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող նշված սահմանափակումներից անձամբ ձեռնարկատիրական գործունեությամբ զբաղվելու սահմանափակումը որոշ դեպքերում չի կարելի դիտել որպես ծառայություն անցնելու համար պայման, քանի որ օրենքի պահանջի համաձայն պաշտոնի նշանակվելուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում ոստիկանության ծառայողն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով պարտավոր է առևտրային կազմակերպությունների կանոնադրական /բաժնեհավաք, փայտահավաք/ կապիտալում 10 և ավելի տոկոս բաժնեմաս ունենալու դեպքում դա հանձնել հավատարմագրային կառավարման, սպա մյուս դեպքերի համար ակնհայտ է, որ ոստիկանությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ում վրա տարածվում են ներկայացված սահմանափակումները:

Ներկայացված պայմանների հատուկ բնույթը առավել արտահայտիչ է դրանց պետական ծառայության մյուս տեսաների ծառայության անցնելու պայմանների շրջանակում ուսումնասիրելու ընթացքում: Մասնավորապես, եթե օրենսդիրը պետական ծառայության մի շարք տեսակների անցնելու համար սահմանում է միայն ընդհանուր բնույթի պահանջներ և սահմանափակումներ, սպա որոշ դեպքերում, առավել հաճախ պետական հատուկ ծառայության դեպքում, հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, ներկայացնում է հատուկ բնույթի պահանջներ և սահմանափակումներ: Մասնավորապես, դիվանագիտական ծառայության անցնելու համար ներկայացվում է հայերենին և առնվազն երկու օտար լեզվի տիրա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

պետելու պահանջ, հարկային ծառայության անցնելու համար որպես սահմանափակում նախատեսված է զինվորական ժամկետային ծառայությունից խուսափելը: Հատկապես ուշադրության է արժանի դատախազությունում պաշտոն զբաղեցնելու համար ներկայացվող սահմանափակումների թվում նշված արգելքը այն մասին, որ դատախազությունում պաշտոն զբաղեցնելու իրավունք չունի այն անձը, ում նկատմամբ հարուցված քրեական հետապնդումը դադարեցվել է ոչ արդարացնող հիմքով:

Այսպիսով, ոստիկանությունում ծառայության անցնելու համար քաղաքացիներին ներկայացվող պայմանները կարելի է բաժանել երկու խմբի՝ ընդհանուր հանրային ծառայության անցնելու համար ներկայացվող պայմաններ և ոստիկանու-

թյունում ծառայության համար ներկայացվող լրացուցիչ պայմաններ: Այդ պայմանները նպատակ են հետապնդում ոստիկանությունը համալրել բանիմաց, մասնագիտական պարտականությունների կատարմանն ունակ ծառայողներով, ինչպես նաև խոչընդոտել և կանխել ռիսկային հանդիսացող անձանց ներթափանցումը ոստիկանության համակարգ: Այդ նպատակների իրականացման ապահովմամբ են մեծապես պայմանավորված ոստիկանության ծառայության խնդիրների արդյունավետ իրականացումը, ոստիկանության ծառայության, որպես հանրապետական գործադիր մարմնի, և ոստիկանության ծառայողի հասարակության շրջանում ունեցած հեղինակության բարձրացումը:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) , ՀՀ ՊՏ 2005 (հատ. թող.), 05.12.2005թ, հոդվածներ 30 և 30.2
² Տե՛ս А.Ф.Ноздрачев. Государственная служба 1999г Москва. С. 317/
³ Տե՛ս «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքը, , ՀՀ ՊՏ 2011/37, 17.06.2011թ, հոդվածներ 6, 11 և 12:
⁴ Տե՛ս «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք, , ՀՀ ՊՏ 2002/32, 08.08.2002 հոդված 11:
⁵ Տե՛ս «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենք ՀՀ ՊՏ 2002/1, 09.01.2002, հոդված 11, «ՀՀ ԱԺ աշխատակազմում պետական ծառայության մասին» ՀՀ օրենք ՀՀ ՊՏ 1/236/, 07.01.2003թ, հոդված 10:
⁶ Տե՛ս Положение о службе в органах внутренних дел РФ ст 8.
⁷ Տե՛ս «Զինվորական ծառայություն անցնելու մասին» ՀՀ օրենք, հոդված 42-րդ կետ, ՀՀ ՊՏ 2002/26, 19.07.2002:
⁸ Տե՛ս «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք, , ՀՀ ՊՏ 2002/32, 08.08.2002 հոդված 11, մաս 2:
⁹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 31, մաս 1 և հոդված 24, մաս 1, ՀՀ ՊՏ 1998/17, 10.08.1998
¹⁰ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀ ՊՏ 2003/25, 02.02.2003, հոդված 52:
¹¹ Տե՛ս ՀՀ քրեական օրենսգիրք, ՀՀ ՊՏ 2003/25, 02.02.2003, հոդված 84:
¹² Տե՛ս ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ՀՀ ՊՏ 22/55/, 21.09.1998թ. հոդված 6 կետ 18 և 19:
¹³ Տե՛ս «Ոստիկանությունում ծառայության մասին» ՀՀ օրենք, ՀՀ ՊՏ 2002/32, 08.08.2002, հոդված 39:

РЕЗЮМЕ

Условия поступления на службу в полицию РА

Право поступления на государственную службу является частью прав граждан Республики Армения участвовать в государственном управлении. Это право дает возможность всем гражданам старше 18 лет поступить на государственную службу. Одной из проблем, касающейся организации государственной службы, является кадровая политика или выбор кадров. В этой статье обсуждаются требования и ограничения, предусмотренные законодательством о поступлении на службу в полицию Армении, как специального вида службы. В данной статье также подвергаются анализу сущность и значения особенностей законодательства Армении.

SUMMARY

The Terms of Police Service Enrollment in Armenia

The right of a state service/ the Police/ enrollment is a part of the citizens' constitutional right to join the public service and to participate in public governance directly. It grants the RA citizens over 18 with an equal chance to recruit a state service. This document, in fact, is an equal legal opportunity, not its de facto realization. It does not follow, however, that any citizen aged 18 may make use of this right at any given moment and that the state bodies are obliged to appoint them in the respective posts they wish for themselves.

The choice of the staff and its maintenance are the key issues of the legal aspect of the organization of the state service. The selection of the staff and their promotion-related issues are the basis for the sustainable staff policy.

The present article aims at highlighting the requirements and restrictions drawn by the RA legislation for joining RA Police Service as a special type of state service. It also comes up with a thorough and detailed analysis of their significance and nature.

ՎԱՐԴԱՆՈՒՇ ՊՈՂՈՍՅԱՆ

ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի
սահմանադրական իրավունքի ամբիոնի հայցորդ

**ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ**

Ժամանակակից ժողովրդավար հասարակությունները զերծ չեն սոցիալ-քաղաքական հակամարտություններից, ինչն էլ երբեմն կարող է և հանգեցնում է այնպիսի բախումային իրավիճակների, երբ իրավիճակը դուրս է գալիս վերահսկողությունից և սպառնում է երկրի սահմանադրական կարգին: Ահա այս պայմաններում է, որ առաջանում է մարդու որոշակի իրավունքների սահմանափակման հիմնախնդիրը՝ ի շահ պետական անվտանգության, հասարակական կարգի պահպանման, հանցագործությունների կանխման, հանրության առողջության ու բարոյականության, այլոց սահմանադրական իրավունքների և ազատությունների, պատվի և բարի համբավի պաշտպանության:

Պետությունների ժողովրդավարացման ճանապարհին կարևոր խնդիր է նաև մարդու իրավունքների սահմանափակման օրինականության և հիմնավորվածության խնդիրը: Ժողովրդավար պետության թիվ մեկ պարտականությունն է մարդուն իր իրավունքների անօրինական սահմանափակումներից զերծ պահելը:

Մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակումը իրականացվում է երկու բարդ իրավական համակարգերի փոխազդեցության միջոցով՝ ներպետական և միջազգային: Սա թույլ է տալիս պետությանը մի կողմից սահմանափակել մարդու իրավունքները միջազգային իրավական ակտերի հիման վրա, մյուս կողմից՝ պաշտպանել մարդու իրավունքներն կամային սահմանափակումներից: Վերջին հաշվով այդ փոխազդեցության արդյունքում է ձևավորվում պետության կողմից մարդու և քաղաքացու իրավունքների հնարավոր սահմանափակումների շրջանակը, որը նպաստում է մարդու իրավունքների լիարժեք պաշտպանության:

Արտակարգ և ռազմական դրության ժամանակ մարդու իրավունքները ժամանակավոր սահմանափակող նորմերն ամրագրված են Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 15-րդ հոդվածում, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 4-րդ հոդվածում

(այսուհետ՝ Դաշնագիր), ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածում:

Կոնվենցիայի «Արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղում» վերտառությամբ 15-րդ հոդվածի 1-ի մասի համաձայն. «Պատերազմի կամ այլ արտակարգ դրության ժամանակ, որը սպառնում է ազգի կյանքին, ամեն մի Բարձր պայմանավորվող կողմ կարող է միջոցներ ձեռնարկել՝ սույն կոնվենցիայով ամրագրված իր պարտավորություններից շեղվելով միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության լարվածությունը, պայմանով, որ նման միջոցները անհամատեղելի չեն միջազգային իրավունքով ստանձնած նրա մյուս պարտավորությունների հետ»¹: Այսինքն՝ Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն կարող է շեղվել Կոնվենցիայով ստանձնած իր պարտավորություններից, բայց միայն այն չափով, որքանով դա պահանջում է դրության լրջությունը:

Նմանատիպ կարգավորում է տրված Դաշնագրի 4-րդ հոդվածի 1-ին մասով, որի համաձայն. «Արտակարգ դրության ժամանակ, որի դեպքում վտանգված է ժողովրդի կյանքը և, որը հայտարարված է պաշտոնապես, սույն դաշնագրի մասնակից պետությունները կարող են միջոցներ ձեռնարկել ի շեղումն սույն Դաշնագրով ստանձնած իրենց պարտավորությունների միայն այնքանով, որքանով դա պահանջում է իրավիճակի լրջությունը, պայմանով, որ այդ միջոցներն անհամատեղելի չեն միջազգային իրավունքի համաձայն իրենց մյուս պարտավորությունների հետ...»²:

Կոնվենցիայի և Դաշնագրի բովանդակությունից բխում է, որ պետությունը կարող է նշված հոդվածների վրա հղում անել, երբ առկա են հետևյալ երկու պայմանները՝

- ստեղծված իրադրությունը պետք է համապատասխանի արտակարգ դրության չափանիշներին, որի դեպքում վտանգված է ազգի կյանքը,
- անդամ-պետությունը պետք է պաշտոնապես հայտարարի արտակարգ դրություն հաստատելու մասին:

Վերջին պահանջը կարևոր նշանակություն ունի օրինականության և իրավունքի գերակայու-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

թյան սկզբունքների պահպանման համար, հատկապես այն ժամանակաշրջանում, երբ այդ սկզբունքների պահպանումը ավելի քան կարևոր է: Արտակարգ դրություն հայտարարելով՝ պետությունները պետք է գործեն իրենց սահմանադրական և օրենսդրական դրույթների շրջանակներում, որոնք կարգավորում են արտակարգ դրության հաստատման և իրականացման կարգը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) հետևում է, որը վերոնշյալ ներպետական օրենսդրական ակտերը հնարավորություն տան և ապահովեն Դաշնագրի 4-րդ հոդվածի իրականացումը: Որպեսզի Հանձնաժողովը կարողանա իրականացնել իր խնդիրները, անդամ-պետությունները պետք է իրենց հաշվետվության մեջ նշեն, Դաշնագրի 40-րդ հոդվածին համապատասխան, «...բավարար և ճշգիրտ տեղեկատվություն իրենց օրենսդրությունների և արտակարգ դրության հաստատման փորձի մասին»:

Միջազգային իրավական ակտերը թույլ են տալիս պետություններին որոշակի պայմաններում ժամանակավորապես սահմանափակել մարդկանց մի խումբ իրավունքների իրականացումը, ինչպես նաև արտակարգ և ռազմական դրություն հաստատելու պայմանների առկայության դեպքում ետ կանգնել իրենց վրա դրված մարդու իրավունքների պաշտպանության միջազգային պարտավորությունների իրականացումից և կասեցնել այդ ոլորտում ազգային օրենսդրության գործողությունը: Սակայն, սահմանափակումները իրականացվում են այնքանով, որքանով որ անհրաժեշտ է պետության անվտանգության ապահովման համար, բայց այդ սահմանափակումները չպետք է հակասեն միջազգային իրավունքից բխող պարտավորություններին:

Պետությունների կողմից այդ բարդ խնդրի իրականացմանը մեծ չափով օգնեց Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից տված «արտակարգ դրություն» հասկացության մեկնաբանությունը, որի համաձայն՝ «արտակարգ դրություն ասելով պետք է հասկանալ հետևյալ պայմանների առկայությունը՝

- վտանգը պետք է լինի իրական և անկանխելի,
- նրա հետևանքները պետք է վտանգավոր լինեն ամբողջ ազգի համար,
- պետք է վտանգված լինի հասարակության կազմակերպչական կյանքը,
- կրիզիսը կամ վտանգը պետք է կրեն բացառիկ բնույթ այդ իմաստով⁴:

Այսինքն՝ «արտակարգ դրություն» հաստատելու համար պետությունը պետք է ապացուցի, որ իր պետությունում կա այսպիսի պայմաններ և, որ խնդրի այլ ձևով կարգավորումը անհնար է:

Քննարկվող հիմնախնդիրը առավել արդի-

ական է Հայաստանի Հանրապետության համար: ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածը սահմանում է, որ մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքներ ու ազատություններ կարող են օրենքով սահմանված կարգով ժամանակավորապես սահմանափակվել ռազմական կամ արտակարգ դրության ժամանակ՝ արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակներում: Այսինքն՝

- մարդու և քաղաքացու որոշ հիմնական իրավունքներ և ազատություններ կարող են սահմանափակվել ժամանակավորապես,
- սահմանափակման ենթակա չեն կյանքի (հոդ.15), խոշտանգումների արգելման (հոդ. 17), դատական, հանրագրի (պետիցիայի), մարդու իրավունքների պաշտպանին դիմելու, մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային մարմիններին դիմելու (հոդ. 18), դատարանի մատչելիության (հոդ. 19), ձերբակալման, խափանման միջոցի ընտրման և մեղեդրանքի առաջադրման պահից պաշտպան ունենալու (հոդ. 20), անմեղության կանխավարկածի իրավունքից օգտվելու (հոդ. 21), ամուսնու կամ մերձավոր ազգականի վերաբերյալ ցուցմունք տալուց հրաժարվելու իրավունքները (հոդ. 22), ինչպես նաև ՀՀ Սահմանադրության 42-րդ հոդվածով սահմանված իրավունքները,

- այդ իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել միայն արտակարգ և ռազմական դրության ժամանակ,
- այդ իրավունքները և ազատությունները կարող են սահմանափակվել արտակարգ իրավիճակներում պարտավորություններից շեղվելու վերաբերյալ ստանձնած միջազգային պարտավորությունների շրջանակում:

Ասվածից պարզորոշ հետևում է, որ Հայաստանի Հանրապետության Նախագահը նախ, սահմանված կարգով, պետք է հայտարարի ռազմական կամ արտակարգ դրություն (Դաշնագրի 4-րդ հոդ.) և նոր միայն ձեռք բերի ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանված մարդու իրավունքները և ազատությունները ժամանակավոր սահմանափակելու լիազորություն: Վերջինիս այդ լիազորության իրականացումը կարող է համարվել իրավաչափ միայն այն դեպքում, եթե ռազմական կամ արտակարգ դրություն է հայտարարվում բավարար հիմքերի առկայության դեպքում (Կոնվենցիա 14-րդ և 15-րդ հոդ.):

Նույն հոդվածի 14-րդ կետը սահմանում է, որ սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում ՀՀ Նախագահը հայտարարում է արտակարգ դրություն և իրականացնում է իրավիճակից թելադրող միջոցառումներ: Նույն կետում նշվում է նաև, որ արտակարգ դրության

իրավական ռեժիմը նույնպես սահմանվում է օրենքով: Սակայն, Սահմանադրության ընդունումից ի վեր ՀՀ-ում չի ընդունվել այս իրավահարաբերությունը կարգավորող օրենք:

Գիտնականներից ոմանք գտնում են, որ հենց այս նորմի գոյությունը ապացույց է այն բանի, որ այս իրավահարաբերությունները կարգավորող օրենքի բացակայությունը իրավական խոչընդոտ չէ ՀՀ Նախագահի կողմից ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով և 55-րդ հոդվածի 14-րդ կետով ամրագրված լիազորություններից օգտվելու համար: Մենք այս տեսակետի հետ լրիվ չենք կարող համաձայնվել, քանի որ, եթե նույնիսկ ՀՀ Նախագահն այլ ելք չլինելու պատճառաբանությամբ իրավիճակից թելադրող գործողություն է իրականացրել, ընդունելով հրամանագիր, այնուհանդերձ դա չէր խանգարում Ազգային ժողովին ողջամիտ ժամկետում ընդունել տվյալ իրավահարաբերությունը կարգավորող օրենք: Չնայած, որ նրա երկու տարվա ընթացքում օրենք ընդունելու պարտականությունը բխում էր ՀՀ Սահմանադրության 117-րդ հոդվածի 1-ի կետի պահանջներից:

Կարևորագույն խնդիր է իրենից ներկայացնում նաև ՀՀ Սահմանադրության 44-րդ հոդվածով սահմանված սահմանափակումների՝ մասնավորապես արտակարգ դրության հաստատման իրականացման կարգը: ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը, ուսումնասիրելով անդամ-պետությունների հաշվետվությունները, նշել է, որ ավելի մեծ ուշադրություն պետք է դարձնել իրավունքի սահմանափակման համաչափության խնդրին և որ համաչափության սկզբունքից է բխում՝ պարտավորություններից շեղում պարունակող նորմերը պետք է լինեն մանրամասն հիմնավորված: Սա նշանակում է, որ արտակարգ դրություն հաստատելու մասին ՀՀ Նախագահի հրամանագիրը, արտակարգ դրության իրականացման կարգը և ցանկացած կոնկրետ դեպքի համար կայացված վարչական ակտը պետք է լինի մանրամասն փաստարկված և հիմնավորված:

Կոնվենցիայի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Ցանկացած Բարձր պայմանավորվող կողմ, օգտագործելով շեղվելու այդ իրավունքը, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ամբողջությամբ իրազեկում է իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարը ծանուցվում է նաև այդ միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների իրագործումը վերսկսելու մասին»: Իսկ Դաշնագրի 4-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն շեղվելու իրավունքից օգտվող ցանկացած անդամ-պետություն ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարության միջնորդությամբ դաշնագրի մասնակից մյուս պետություններին պետք է տեղեկացնի այն դրույթների

մասին, որոնցից ինքը շեղվել է, և այնդիսի որոշում կայացնելու դրդապատճառների մասին: Նույն միջնորդի միջոցով, հետագայում, հաղորդում է նաև այդ շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին:

Ինչպես Եվրոպայի խորհրդի ցանկացած անդամ պետություն, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունը, պարտավոր է Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին անմիջապես ամբողջությամբ իրազեկել իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին, ինչպես նաև միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների լիակատար իրագործումը վերսկսելու մասին:

2008 թ. միջազգային այս պարտավորությունը ոչ պատշաճ կատարելու հետևանքով Հայաստանի Հանրապետությունը արժանացավ Եվրոպայի խորհրդի բացասական գնահատականին: Մասնավորապես՝ երբ 2008 թվականի մարտի 1-ին ՀՀ Նախագահի ՆՀ-35-Ն հրամանագրի հիման վրա Հայաստանի Հանրապետությունում հաստատվեց արտակարգ դրություն և անմիջապես չտեղեկացվեց Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին, Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղար Թերրի Դեյվիսն նշեց. «Շատ մտահոգված եմ Երևանում վերջին զարգացումների և արտակարգ դրության հայտարարման վերաբերյալ: Արտակարգ իրադրությունը ժամանակավորապես դադարեցնում է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով պաշտպանված մի շարք իրավունքների և ազատությունների ապահովումը: Կոնվենցիայի 15-րդ հոդվածով Հայաստանի կառավարությունը ինձ պետք է իրազեկի իր կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրդապատճառների մասին: Ակնկալում եմ, որ նրանք դա կանեն առանց ուշացման»(Ստրասբուրգ, 02.03.2008թ):

Այնուհետև, անդրադառնալով վերոնշյալ խնդրին, ԵԽ մարդու իրավունքների հանձնակատար Թոմաս Համմարբերգը նշեց.«Ես մտահոգված եմ Հայաստանում մարդու իրավունքների վիճակով և արտակարգ դրության հայտարարման հետևանքներով: [...] Հրատապ է վերականգնել այն իրավիճակը, երբ լրատվամիջոցների, քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեությունը չի խոչընդոտվում»:

Հայաստանի արտակարգ դրություն հայտարարելուց հետո ստեղծված իրավիճակին անդրադարձավ նաև Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նախագահ Յան Կուբիշն իր հայտարարությամբ, որում հույս է հայտնել, որ արտակարգ դրությունը շուտով կհանվի, ինչպես նաև կչեզոքացվեն բոլոր սահմանափակումներն ու միջոցառումները, որոնք հետևեցին արտակարգ դրության հայտարարմանը¹⁰:

Դրան հաջորդեց 2008 թվականի մարտի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

13-ի ՀՀ Նախագահի ՆՀ-38-Ն հրամանագիրը, նախորդ վերը նշված հրամանագրում փոփոխություններ կատարելու մասին, որը մասնավորապես վերացրեց քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեության կասեցման մասին դրույթ: Դրանից հետո Հայաստանում ընտրությունների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի (ԵԽՆՎ) գեկուցող Ջոն Պրեսկոտը ողջունեց Հայաստանում արտակարգ իրավիճակի երկու դրույթների վերացումը, նա, մասնավորապես, ասաց. «Ես հատկապես ողջունում եմ քաղաքական կուսակցությունների և ոչ կառավարական կազմակերպությունների գործունեության կասեցման մասին դրույթի չեղյալ հայտարարումը, որի վերաբերյալ ես հատուկ կոչ արեցի իմ այցի ընթացքում: Այժմ ես կոչ եմ անում իշխանություններին հանել արտակարգ իրավիճակի մնացած դրույթները, մասնավորապես նրանք, որոնք սահմանափակում են լրատվամիջոցների ազատությունը: Ես կրկնում եմ իմ այն եզրակացությունը, որ ներկա ճգնաժամի հանգուցալուծման միակ եղանակը նախագահական ընտրությունների արդյունքների վերաբերյալ սահմանադրական դատարանի որոշման ճանաչումն է, արտակարգ դրության հանումը և մարդու իրավունքների ու ազատությունների վերականգնումը և 2008թ. մարտի 1-ի իրադարձություններին հանգեցրած հանգամանքների անկախ հետաքննումն ու քաղաքական բոլոր ուժերի միջև երկխոսության ծավալումը անհրաժեշտ քաղաքական և ընտրական բարեփոխումների վերաբերյալ»:

Ուսումնասիրությունների արդյունքում եկանք այն եզրահանգման, որ մարդու իրավունքների և ազատությունների սահմանափակման իրավական ռեժիմի բացառապես օրենքով սահմանման պահանջը բխում է ուղղակի ՀՀ Սահմանադրությունից: Վերոնշյալ օրենքի ընդունումն անհրաժեշտ է ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրության իրավական ռեժիմի հետ կապված հարաբերությունները կարգավորելու, այլ նաև դրանց իրականացման կարգը սահմանելու համար:

Հաշվի առնելով իրավունքների սահմանափակման իրավական ռեժիմը օրենքով սահմանափակելու սահմանադրական պահանջը՝ անհրաժեշտություն է առաջանում ընդունել օրենք, որով կկարգավորեն արտակարգ դրության իրավական ռեժիմի և արտակարգ դրության ժամանակ Հայաստանի Հանրապետությունում մարդու և քաղաքացու առանձին հիմնական իրավունքների ու ազատությունների սահմանափակումների հետ կապված իրավահարաբերությունները: Օրենքի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված է ինչպես Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 44-րդ հոդվածով, այնպես էլ՝ ՀՀ Սահմա-

նադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետով ամրագրված՝ «Արտակարգ դրության իրավական ռեժիմը սահմանվում է օրենքով» դրույթով: Օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 83.5-րդ հոդվածի պահանջից, համաձայն որի՝ նշված բոլոր դրույթները կարող են սահմանվել բացառապես օրենքով:

«Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» օրինագիծը մի քանի անգամ ընդգրկվել է ՀՀ Ազգային ժողովի նստաշրջանի օրակարգ, բայց այդպես էլ մինչև օրս չի ընդունվել: «Արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով սահմանվում է, որ արտակարգ դրության իրավական ռեժիմը ժամանակավոր միջոցառում է, որը հայտարարվում է բացառապես Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին սպառնացող անմիջական վտանգի դեպքում: Արտակարգ դրությունը հայտարարվում է միայն այն հանգամանքների առկայության դեպքում, որոնք անմիջական վտանգ են ներկայացնում Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգին և այդ վտանգի վերացումն անհնարին է առանց Հայաստանի Հանրապետության քաղաքացիների, օտարերկրյա քաղաքացիների ու քաղաքացիություն չունեցող անձանց և կազմակերպությունների՝ սույն օրենքով նախատեսված առանձին հիմնական իրավունքների ու ազատությունների ժամանակավոր սահմանափակումների:

Նախագծով սահմանվում է՝ արտակարգ դրություն հայտարարելու կարգը (հոդ. 3), արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրի բովանդակությունը (հոդ. 4), արտակարգ դրության գործողության ժամկետը (հոդ. 5), արտակարգ դրության դադարման հիմքերը (հոդ. 6), արտակարգ դրություն հայտարարվելու դեպքում կիրառվող միջոցառումները և իրավունքների ժամանակավոր սահմանափակումները (հոդ. 7), արտակարգ դրություն հայտարարված տարածքում պետական հատուկ կառավարման մարմինները (հոդ. 8), արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները և ուժերը (հոդ. 9), արտակարգ դրության պայմաններում կիրառվող միջոցների և ժամանակավոր սահմանափակումների սահմանները (հոդ. 10), արտակարգ դրության գործողության ընթացքում ֆիզիկական եւ իրավաբանական անձանց իրավունքների երաշխիքները (հոդ. 11), ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների, զենքի և մարտական տեխնիկայի կիրառման պայմաններն ու սահմանները (հոդ. 12), պարետային ժամի կանոնները խախտած անձանց ձերբակալման կարգը (հոդ. 13), արտակարգ դրությունը դադարած հայտարարելու իրավական հետևանքները

www.lawinstitute.am

(հոդ. 14), արտակարգ դրության իրավական ռեժիմի պահանջները խախտած ֆիզիկական և իրավաբանական անձանց, ինչպես նաև պաշտոնատար անձանց պատասխանատվությունը (հոդ. 15) և այլն:

Սակայն, սույն օրինագծում, մեր կարծիքով, կան որոշակի բացթողումներ: Մասնավորապես՝ օրինագծի՝ «Արտակարգ դրությանը և արտակարգ դրության համար հիմք հանդիսացող հանգամանքները» վերտառությամբ 1-ին հոդվածի 2-րդ մասը, մեր կարծիքով, ուղղակի կրկնում է ՀՀ Սահմանադրության 55-րդ հոդվածի 14-րդ կետի 1-ին մասի ընդհանուր ձևակերպումը, մինչդեռ մենք գտնում ենք, որ վերոնշված օրինագիծը պետք է բացի այս ընդհանուր ձևակերպումը: Մասնավորապես՝ վերոշարադրյալ օրինագծի 1-ին հոդվածը կարող է ձևակերպվել այսպես՝

1. արտակարգ դրությունը՝ Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում կամ նրա որոշ տարածքներում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության համաձայն հայտարարվող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների (անկախ նրանց կազմակերպական-իրավական ձևից), ինչպես նաև նրանց պաշտոնատար անձանց գործունեության հատուկ իրավական ռեժիմ է, որը ներառում է հետևյալ հանգամանքները՝

ա) ՀՀ սահմանադրական կարգի բռնի փոխելու փորձերը, իշխանության զավթումը կամ յուրացումը, զինված ամպստամբությունը, զանգվածային անկարգությունները, ահաբեկչական գործողությունները, առանձնապես կարևոր օբյեկտների կամ առանձին բնակավայրերի բռնագրավումը, ապօրինի զինված խմբերի գործողությունները, բռնի գործողություններով ուղեկցվող էթնիկական, աղանդավորական և տարածաշրջանային այն հակամարտությունները, որոնք անմիջական սպառնալիք են հանդիսանում քաղաքացիների կյանքի և անվտանգության, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների բնականոն գործունեության համար,

բ) բնական և տեխնածին աղետները, բնապահպանական արտակարգ իրավիճակները, այդ թվում վթարների հետևանքով առաջացող համաճարակները, բնական աղետները, որոնք հանգեցնում են մարդկային կուրուստների, կամ վնաս են պատճառում մարդու առողջությանը և շրջակա միջավայրին, կամ առաջացնում են զգալի նյութական վնասներ և խախտում են բնակչության բնականոն կյանքը և պահանջում են լայնածավալ փրկարարական աշխատանքներ և այլ անհետաձգելի գործողություններ:

Օրինագիծը չի կարգավորում արտակարգ դրության գործողության ժամանակահատվածը: Ցանկալի կլիներ, որ նշվեր արտակարգ դրության

գործողության առավելագույն ժամկետ, որպեսզի ՀՀ իշխանություններին զերծ պահելնք կամայականություններից: Օրինակ՝ այս իրավահարաբերությունները կարգավորող ՌԴ համապատասխան օրենքի 9-րդ հոդվածը նշում է, որ ՌԴ ամբողջ տարածքում հայտարարված արտակարգ դրության ժամկետը չի կարող 30 օրից ավելի լինել, իսկ առանձին վայրերում՝ 60 օրից: Ցանկալի կլիներ, որ նշված օրինագծում ևս նշվեր արտակարգ դրության գործողության վերին շեմ:

«Արտակարգ դրություն հայտարարելու կարգը» վերտառությամբ 3-րդ հոդվածի 3-րդ մասը կարելի է հստակեցնել, մասնավորապես՝

«3. Ամբողջությամբ իրազեկել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ՀՀ կիրառած միջոցառումների և դրանք կիրառելու դրապատճառների մասին:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարության միջնորդությամբ տեղեկացնել դաշնագրի մասնակից մյուս պետություններին այն դրույթների մասին, որոնցից Հայաստանի Հանրապետությունը շեղվել է, և այդպիսի որոշում կայացնելու դրապատճառների մասին:

Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների շրջանակում իրազեկել բոլոր այն մարմիններին, որոնց իրազեկման պարտավորություն է ստանձնել ՀՀ-ն»:

Հոդված 14-ում ավելացնել 2-րդ և 3-րդ մաս, որոնք կարող են ունենալ հետևյալ բովանդակությունը՝

«2. Անմիջապես ծանուցել Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին արտակարգ դրության հետ կապված միջոցառումների գործողությունը դադարեցնելու և Կոնվենցիայի դրույթների իրագործումը վերսկսելու մասին:

3. ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարության միջնորդությամբ հաղորդել դաշնագրի մասնակից մյուս պետություններին շեղումը դադարեցնելու ամսաթվի մասին»:

Ճիշտ է, ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ վավերացված միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են, սակայն, մեր կարծիքով, այս նորմերի ամրագրումը զերծ կպահի ՀՀ-ին վերոնշյալ պարտավորությունների հետ կապված հետագա խնդիրներից:

Քննարկվող հիմնախնդրի այլընտրանքային տարբերակ կարող է լինել ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունների ընդլայնումը: Մասնավորապես, կարելի է ՀՀ սահմանադրական դատարանին վերապահել, ինչպես եվրոպական մի շարք երկրներում (ԳԴՀ, Պորտուգալիա, Լեհաստան, Իտալիա), օրենսդրական բացի սահմանադրությանը քննելու իրավասություն: Այսինքն՝ ՀՀ

Սահմանադրության 100-րդ հոդվածով նախատեսվեր հատուկ նորմ, համաձայն որի՝ քաղաքացիների դիմումի հիման վրա սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեր օրենսդրական բացերը, որոնք խոչընդոտում են սահմանադրական նորմերի իրացմանը:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ գտնում ենք, որ անհրաժեշտ է արտակարգ դրության իրավական ռեժիմը կարգավորող օրենքի ընդունումը: Այդ օրենքի բացակայությունը կարող է առաջացնել լուրջ քաղաքական հետևանքներ ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային հարաբերություններում: Նշված դիրտում միջազգային պարտավորությունների իրականացման կարգը հստակեցված չլինելու պատճառով Հայաստանի Հանրապետությունը արժանացել է միջազգային կառույցների կողմ գնահատականին: Արտակարգ դրության իրավական ռեժիմի իրավահարաբերությունները կարգավորող օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 44, 55 և 83.5-րդ հոդվածներից: Իսկ ՀՀ սահմանադրական դատարանի լիազորությունների ընդլայնումը կտար այս խնդիրը ավելի արագ և արդյունավետ լուծելու հնարավորություն:

¹ Տե՛ս <http://www.concourt.am/hr/indexa.htm>

² Տե՛ս Մարդու իրավունքների միջազգային բիլլ, ՄԱԿ-ի հայաստանյան գրասենյակ, Երևան, էջ 41:

³ Տե՛ս Human Rights Committee, General Comment 29, Derogations during a ...www1.umn.edu/humanrts/Russian Замечание общего порядка 29. Отступление от прав в связи с чрезвычайным положением (статья 4), 2001* __, принято на 1950-м заседании 24 июля 2001 года.

⁴ Տե՛ս Հումաստանն ընդդեմ Մեծ Բրիտանիայի 1969թ.:

⁵ Տե՛ս ՀՀ Սահմանադրության մեկնաբանություններ, էջ 521:

⁶ Տե՛ս Human Rights Committee, General Comment 29, Derogations during a ...www1.umn.edu/humanrts/Russian Замечание общего порядка 29. Отступление от прав в связи с чрезвычайным положением (статья 4), 2001* __, принято на 1950-м заседании 24 июля 2001 года. 5

⁷ Տե՛ս http://www.coe.am/index.php?cat_id=37

⁸ Տե՛ս <http://www.coe.am>, մարտի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը Եվրոպայի խորհրդի գլխավոր քարտուղարին ծանուցեց արտակարգ իրավիճակի ընթացքում Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայից շեղումների մասին՝ համաձայն Կոնվենցիայի հոդված 15-ի:

⁹ Տե՛ս <http://www.coe.am/pressreleases.php?id=398>, Հայաստան, Հանճակատար Համբերգն այցելում է Երևան հետընտրական բռնություններին հաջորդող մարդու իրավունքների պաշտպանության խրախուսման նպատակով: Ստրասբուրգ, 11.03.2008թ.:

¹⁰ Տե՛ս <http://www.coe.am/pressreleases.php?id=382>, Իրավիճակը Հայաստանում. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի նախագահ Յան Կուբիշի հայտարարությունը, Ստրասբուրգ, 04.03.2008թ.:

¹¹ Տե՛ս <http://www.coe.am/pressreleases.php?id=394>, Ջոն Պրեսկոտը ողջունում է Հայաստանում արտակարգ իրավիճակի երկու դրույթների վերացումը, Ստրասբուրգ, 10.03.2008թ.:

¹² Տե՛ս 01.10.2007 - Ընդգրկվել է նստաշրջանի օրակարգ, 21.10.2009 - Ներկայացվել է նախագծի լրամշակված տարբերակը, 01.02.2010 - Ընդգրկվել է նստաշրջանի օրակարգ:

РЕЗЮМЕ

Проблемы ограничения прав и свобод человека в чрезвычайных ситуациях.

В статье автор рассматривает проблему ограничения прав и свобод человека во время чрезвычайных ситуаций. По мнению автора основная проблема состоит в том, что в Республике Армения еще нет закона “О чрезвычайной ситуации” и это не соответствует требованиям пункта 14 статьи 55, пункта 1 статьи 83.5 и пункта 1 статьи 117 Конституции РА. Автор анализировал законопроект “О правовом режиме чрезвычайных ситуаций” и сделал некоторые предложения. В заключении автор отметил необходимость принятия соответствующего закона.

SUMMARY

The problem of restriction of human rights and freedoms in time of emergency.

The issue of the article is restriction of the rights and freedoms in time of emergency. According to the author the main problem is that in the Republic of Armenia there is lack of law on emergency, and it does not meet to the requirements of paragraph 14 of Article 55, paragraph 1 of Article 83.5, paragraph 1 of Article 117 of the Constitution of the RA. The author analyzed the draft law “On legal regime in time of emergency” and made her proposal. In conclusion, the author noted the need for adopting appropriate law.

ԱԳՆԵՍԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի
իրավագիտության ֆակուլտետի միջազգային և
եվրոպական իրավունքի ամբիոնի հայցող

**ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՓՈԽԱԴԱՐՁՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵԳԻՊՏՈՍԻ
ՍԱՍԼՈՒՔՅԱՆ ՍՈՒԼԹԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ
ՍՈՆԴՈՒԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԻԼԻԿԻԱՅԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿՆՔԱԾ
ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐՈՒՄ**

Ինչպես հին աշխարհում, միջնադարում
նույնպես պետությունների կողմից միջազգային
իրավական հարաբերությունների մեջ մտնելու
հանգամանքը պայմանավորված էր քաղաքական,
ռազմական և տնտեսական գործոններով: Քանի որ
միջնադարյան պետությունների արտաքին քաղա-
քականության առաջնային խնդիրներից էր զավթո-
ղական պատերազմների մղումը նոր տարածքներ և
ռեսուրսներ ձեռք բերելու համար, ռազմաքաղաքա-
կան նպատակով դաշնակիցների որոնումը, ուստի,
պետությունների միջև հարաբերություններն առա-
վել հաճախ ծավալվում էին պատերազմների շուրջ,
որոնց վարման կամ դադարեցման համար կնքվում
էին միջպետական պայմանագրեր: Առաջնորդվե-
լով սեփական շահերի ապահովման և ուժի իրա-
վունքի դիրքերից՝ պետությունները միջազգային
պայմանագրեր կնքելիս, որպես կանոն, անտեսում
էին պարտավորությունների փոխադարձության
հարցը: Փոխադարձության հիմքի վրա էին կառուց-
վում հիմնականում պետությունների առևտրային
հարաբերությունները: Այդ հարաբերությունների
զարգացման առանձնահատկությունը ենթադրում
էր համագործակցության հաստատում, ինչը հնա-
րավոր էր իրականացնել շահերի և պարտավորու-
թյունների փոխադարձության և իրավահավասար-
ության ապահովման հիման վրա:

Կիլիկիայի հայկական պետության՝ մեզ հայտ-
նի միջազգային պայմանագրերի ուսումնասիրու-
թյունը ցույց է տալիս, որ այդ պայմանագրերում
նույնպես կողմերի իրավունքների և պարտավորու-
թյունների փոխադարձությունը ոչ միշտ է պահ-
պանվել: Կիլիկյան պետության միջազգային պայ-
մանագրերի կնքման պրակտիկայում զգալի են
անփոխադարձ հավասար քաղաքական պայմանագրե-
րը: Անփոխադարձ հավասար էին սովորաբար Կիլիկի-
այի հաշտության պայմանագրերը, ինչպիսիք են
օրինակ՝ Անտիոքի իշխանապետության, Իկոնիա-
յի սելջուկյան սուլթանության, Եգիպտոսի մամլուք-
յան սուլթանության հետ կնքված պայմանագրերը:

Այսպես, 1208թ., 1216թ., 1220թ. (1221) Կիլիկիայի
հայկական թագավորության և Իկոնիայի սելջուկ-
յան սուլթանության միջև կնքված հաշտության
պայմանագրերը երաշխավորում էին ռազմական
գործողությունների արդյունքում հաղթանակ տա-
րած սուլթանի շահերը՝ ներառելով Կիլիկիայի կող-
մից տարածքային զիջումներ, ամենամյա տուրքի
վճարում, զինվորական օժանդակ ուժերի տրամադ-
րում և այլն:

XIII-րդ դարի 50-60-ական թթ. Մերձավոր
Արևելքում ուժերի հարաբերակցության փոփոխու-
թյան հետևանքով Կիլիկիայի հայկական թագավո-
րության գլխավոր ախոյանն է դառնում Եգիպտոսի
մամլուքյան սուլթանությունը: Եգիպտոսի սուլթա-
նության կողմից Կիլիկիայի դեմ կատարված ար-
շավանքների արդյունքում կնքված հայ-եգիպտա-
կան հաշտության պայմանագրերը սովորաբար
ամրագրում էին Եգիպտոսի քաղաքական և տնտե-
սական շահերը²: Այսպես օրինակ՝ հայ-եգիպտա-
կան առաջին պայմանագիրը (1268թ.) Հեթում I-ը
կնքեց Կիլիկիայի դեմ եգիպտական արշավանքի
ժամանակ գերևարված իր որդի Լևոնին ազատելու
նպատակով՝ տեղի տալով սուլթան Բեյբարսի պա-
հանջներին³: 1323թ. հաշտության պայմանագիրը,
որը կնքվել էր 15 տարի ժամկետով, հայկական
կողմին պարտավորեցնում էր տարեկան մեկ միլի-
ոն երկու հարյուր հազար արծաթ դիրհեմ վճարել
Եգիպտոսի սուլթանին, ինչպես նաև սուլթանին
տրամադրել Այասի նավահանգստի եկամտի և
օտարերկրացիներին վաճառվող աղի եկամտի կե-
սը: Սուլթանը պարտավորվում էր միայն իր գորքե-
րը ետ քաշել Կիլիկիայից՝ արտոնելով վերաշինել
ավերված բոլոր քաղաքները, բացի Այաս ծովային
բերդից⁴: 1337թ. հայ-եգիպտական հաշտության
պայմանագրով Դաշտային Կիլիկիայի մի մասը,
այդ թվում՝ Այաս քաղաքը, որի նավահանգիստը
մեծ եկամուտներ էր բերում երկրին, անցնում էին
Եգիպտոսին: Կիլիկիան պարտավորվում էր նաև
խզել իր հարաբերությունները Արևմուտքի երկրնե-

րի և Հռոմի պապի հետ⁵։

Հայ-եզիպտական պայմանագրերից պետք է առանձնացնել 1285թ. Եզիպտոսի սուլթան Զալաունի և Կիլիկիայի թագավոր Լևոն III-ի միջև կնքված հաշտության պայմանագիրը, որի մի շարք հոդվածներում իրավահավասար հիմունքով էին երաշխավորվում կողմերի հպատակների անձնական և սեփականության իրավունքները։ Միջնադարյան Եվրոպայում և Ասիայում անտեսված էին օտարերկրացիների իրավունքները, ինչը լրջորեն խոչընդոտում էր այլ երկրներում վաճառականների գործունեությունը։ Եզիպտոսի առևտրատնտեսական շահերից էր բխում պայմանագրում փոխադարձության ապահովումը հատկապես այն պարտավորությունների հարցում, որոնք վերաբերում էին վաճառականների գործունեության համար նպաստավոր պայմանների ստեղծմանը։ Մասնավորապես, իրավահավասար հիմունքով էին երաշխավորվում կողմերի հպատակների ազատ ժամանման և տեղաշարժի իրավունքը, նրանց անձի և սեփականության անձեռնմխելիությունը, ժառանգության իրավունքը և այլն։

Չնայած պայմանագրի մի շարք կետերում կողմերի համար սահմանվել էին միատեսակ իրավունքներ և պարտավորություններ, այդուհանդերձ պայմանագիրը չենք կարող համարել իրավահավասար։ Պայմանագրում ամրագրված այլ դրույթներ փաստում են, որ պայմանագրում ուժեղ կողմը Եզիպտոսն էր։ Նախ՝ Կիլիկիան պարտավորվում էր մինչև պայմանագրի ժամկետի պվարտը Եզիպտոսին ամենամյա հարկ վճարել, ինչպես նաև հրաժարվել բերդերի և ամրոցների կառուցումից։ Բացի այդ, Կիլիկիան պարտավորություններ էր ստանձնում ոչ միայն Եզիպտոսի սուլթանի հպատակների, այլ մահմեդականություն դավանող բոլոր օտարերկրացիների նկատմամբ, ինչը հատուկ շեշտվում էր պայմանագրի առանձին կետերում։ Այսպես. «Եթե մահմեդական վաճառականը Լևոն թագավորի տերության մեջ մահանա, ապա նրա ունեցվածքը պետք է խնամքով պահվի և հանձնվի մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի ներկայացուցիչներին, որպեսզի այն տնօրինվի համաձայն Սուրբ Օրենքի», «Եթե մահմեդական բանտարկյալներից ոմանք մահացած լինեն Լևոն թագավորի բանտերում, Լևոն թագավորը պարտավորվում է սուլթանին հանձնել այդ վաճառականների ունեցվածքը, տղամարդ և կին ստրուկներին, նրանց ապրանքները՝ առանց պահելու դրանցից ամենավոքը մասն անգամ», «Լևոն թագավորը խոստանում է ազատ արձակել իր բանտերի մեջ գտնվող մահմեդական վաճառականներին, ինչ ցեղի և ինչ ազգի էլ պատկանեն, և նրանց վերադարձնել իրենց ունեցվածքը, ապրանքները, տղամարդ և կին ստրուկներին, ձիերը, ջորիները։ Ազատ արձա-

կել ամեն կարգի, ցեղի և ազգության պատկանող բոլոր մահմեդականներին, որոնք ազատագրված ապրում են իր ամրոցներում և տերության մեջ, և նրանց ուղարկել դեպի Բարձր Դուռ՝ առանց որևէ մեկին ետ պահելու»։ Կիլիկյան թագավորության բանտերից մահմեդական վաճառականներին՝ անկախ նրանց ազգային պատկանելությունից ազատելու կապակցությամբ Լևոն III-ը արտահայտել էր իր անհամաձայնությունը՝ պատճառաբանելով, որ իր հպատակներից շատերն են գտնվում Կարամանի իշխանի և Ռումի սուլթանության բանտերում, և, եթե նա ազատ է արձակելու վերջիններիս բանտարկյալներին, ապա նրանք էլ պարտավոր են ազատ արձակել իր հպատակներին։ Այս առթիվ սուլթանը պատասխանել է, որ իր պարտքն է համարում պաշտպանել բոլոր մահմեդականների շահերը և իր հովանու տակ վերցնել նրանց։ Սուլթանի այդ քաղաքականությունն անմիջականորեն արտահայտվել էր հայ-եզիպտական պայմանագրում։ Դա է փաստում նաև պայմանագրի հետևյալ հոդվածը. «Եթե որևէ ազգի, ցեղի կամ կրոնի պատկանող մարդ, ով էլ որ նա լինի, էմիր կամ ստորադաս, ազատ կամ ստրուկ մեր տիրոջ՝ սուլթանի տերությունից փախչի և գնա Հայոց երկիր ապաստանելու, ապա Լևոն թագավորը և նրա ներկայացուցիչները պարտավոր են փախստականին ձերբակալել և լավ հսկողության տակ ուղարկել սուլթանի արքունիք նրա հետ գտնվող բոլոր անձանց և այն ամենի հետ միասին, ինչ կգտնվի նրա մոտ՝ դրանք լինեն ուղեկիցներ, ստրուկներ, ձիեր, ջորիներ, գործվածքներ, արծաթ և այլն։ Եթե փախստականն իր կրոնը փոխած և քրիստոնեություն ընդունած լինի, ապա Լևոն թագավորը պարտավոր է նրան հանձնել մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրին՝ առանց այս պայմանի գործադրման դեմ որևէ պատճառաբանություն բերելու։ Եթե Լևոն թագավորի հպատակներից, ճորտերից կամ զինվորներից որևէ մեկը փախչի և իր կրոնին հավատարիմ մնա, ապա սուլթանի ներկայացուցիչները պարտավոր են նրան հանձնել, բայց եթե մահմեդականություն ընդունած լինի, միայն նրա մոտ գտնվող ունեցվածքը կվերադարձվի»։

Ըստ պայմանագրի՝ Լևոն III-ը պարտավորվում էր նաև հարաբերությունները խզել սուլթանի թշնամիների՝ ենթադրաբար Հռոմի պապի և Մոնղոլական իլխանության հետ, ինչն ուղղակիորեն հակադրվում էր Կիլիկիայի արտաքին քաղաքական գծին. «Մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տերության, նրա զորքի և հպատակների մասին չպետք է որևէ բան հայտնեն իբրև օժանդակություն այն անձանց, ովքեր մտադիր են վնաս պատճառել՝ թե՛ արշավանքով, թե՛ այլ եղանակով, չմասնակցել որևէ դավադրության, որը կարող է վնասաբեր և վատ հետևանքներ ունենալ, բարյացակամություն ցույց չտալ մեր տեր սուլթանի թշնամիներից որևէ

մեկին, չօգնել, չաջակցել նրան, որևէ հաղորդակցություն չունենալ նրա հետ՝ ո՛չ անուղղակի նշաններով, ո՛չ նամակով, ո՛չ դեպքային կամ բանավոր դիմումով, այլ պետք է ձգտեն իմ բանակցություններով պաշտպանել իմ անձն ու երկիրը: Պետք է ամեն ջանք գործադրեն մեր տեր սուլթան ալ-Մալիք ալ-Մանսուրի տերությունը բոլոր աղետներից պաշտպանելու համար, ձեռքալալելու բոլոր նրանց, ովքեր իմ երկրից մեկնելով, մտադիր են այնտեղ թշնամություն անել և վնաս հասցնել»:

Անիրավահավասարության խնդիրը առկա է նաև Կիլիկյան պետության դաշնակցային պայմանագրերում, որոնցից, հատկապես, կարելի է մատնանշել 1243թ. (1244) և 1254թ. կնքված հայմոնղոլական միջպետական պայմանագրերը: Հետաքրքրական է, որ Կիլիկիայի թագավոր Հեթում I-ի և մոնղոլ գորավար Բաչու Նոյիմի միջև 1243թ. (1244) կնքված մեզ հայտնի հայմոնղոլական առաջին պայմանագրի կնքման փաստի հետ կապված հայ պատմիչները նշում են, որ Կիլիկիան դաշինք կնքեց մոնղոլների հետ՝ հայտնելով իր հնազանդությունը, ինչը թույլ է տալիս ենթադրել, որ պայմանագիրն իր բնույթով անիրավահավասար էր: Այսպես՝ XIII դարի հայ պատմագիրներից Կիրակոս Գանձակեցին իր «Պատմություն հայոց» աշխատության մեջ գրում է, որ Հեթումը պատվիրակություն ուղարկեց մոնղոլների մոտ խաղաղության դաշինք կնքելու և նրանց իր հնազանդությունը հայտնելու: Մոնղոլները բարեկամություն հաստատեցին արքայի հետ և տվեցին համապատասխան գրություն՝ էլ-տամդա (խանական կնիքով հաստատված փաստաթուղթ)¹³: Նույն դարաշրջանի պատմիչ Գրիգոր Ակներցու հաղորդման համաձայն՝ Հեթումը գերադասեց իր հնազանդությունը հայտնել մոնղոլներին, նրանց հարկ վճարել և բարեկամության դաշինք հաստատել¹⁴: Կողմերի անիրավահավասարության մասին է վկայում նաև այն, որ որպես պայմանագրի կնքման նախապայման մոնղոլները պահանջել էին իրենց հանձնել Կիլիկիայում ապաստանած Իկոնիայի սուլթանի ընտանիքի անդամներին:

Առանձնահատուկ հետաքրքրություն է ներկայացնում 1254թ. Հեթում I-ի և Մանգու խանի միջև մոնղոլների թագավորանիստ Ղարադորումում կնքված պայմանագիրը, որի բովանդակությունը բերված է Հեթում I-ի համանուն եղբորորդու՝ Հեթում պատմիչի՝ «Արևելքի երկրների պատմության ծաղկաբաղ» խորագրով աշխատության մեջ: Պայմանագիրը ներկայացված է Հեթում I-ի յոթ առաջարկների և Մանգու խանի յոթ պատասխանների ձևով:

«Նախ՝ (Հեթումը) խնդրեց, որ կայսրը և նրա ողջ ժողովուրդը դառնան քրիստոնյա և մկրտվեն:

Երկրորդ՝ որ հավիտենական խաղաղություն և բարեկամություն հաստատվի թաթարների

և քրիստոնյաների միջև:

Երրորդ՝ որ թաթարների կողմից նվաճված և նրանց ենթակա բոլոր երկրներում քրիստոնեական եկեղեցիները և հոգևոր կոչում ունեցող բոլոր անձիք ազատ լինեն և ազատվեն ամեն տեսակ հարկերից:

Չորրորդ՝ որպեսզի Մանգու խանը օգնի Սուրբ Երկիրը սարակիմոսների (մահմեդականների) ձեռքից ազատագրելու և այն քրիստոնյաներին վերադարձնելու գործին:

Հինգերորդ՝ որ նա կարգադրի Ռումի սուլթանությունում գտնվող թաթարներին ոչնչացնել Բաղդադ քաղաքը և խալիֆին՝ Մուհամմեդի կեղծ հավատի գլխավորին ու վեհապետին:

Վեցերորդ՝ որպեսզի իրեն արտոնություն տա և կարգադրի Հայոց թագավորությանը մոտ գտնվող թաթարներին իրեն օգնություն ցուցաբերել, երբ նրանց այդ մասին խնդրի:

Յոթերորդ՝ որ Հայոց թագավորությունից սարակիմոսների զավթած և թաթարների ձեռքն անցած կամ նրանց վաճառված բոլոր տարածքները իրեն վերադարձվեն ազատ և խաղաղ կերպով: Եվ բացի այդ, այն բոլոր հողերը, որոնք հայոց թագավորը կկարողանա նվաճել սարակիմոսներից, կարող է տիրապետել խաղաղ և հանգիստ կերպով՝ առանց թաթարների կողմից առարկությունների հանդիպելու»:

«Ձեզ՝ հայոց թագավոր, մենք՝ որպես կայսր, ասում ենք, որ նախ մկրտվելու ենք և քրիստոնեական հավատն ենք ընդունելու և մկրտելու ենք բոլոր նրանց, ովքեր մեր իշխանության տակ են, որպեսզի նրանք քրիստոնյա դառնան: Սակայն, կարծում ենք, որ դա պետք է լինի կամավոր կերպով, քանզի հավատը հարկադրանք չի հանդուրժում:

Երկրորդ խնդրանքին մենք պատասխանում ենք, որ համաձայն ենք, որպեսզի խաղաղություն և հավիտենական բարեկամություն լինի քրիստոնյաների և թաթարների միջև, և, եթե քրիստոնյաները խաղաղություն ու հավատարիմ բարեկամություն պահպանեն, մենք էլ նրանց նկատմամբ այդպես կվարվենք:

Յանկանում ենք նաև, որ քրիստոնեական բոլոր եկեղեցիներն ու հոգևորականությունը ազատ լինեն և ազատվեն ամեն տեսակ հարկերից և չենթարկվեն ճնշումների:

Սուրբ Երկրի վերաբերյալ մենք ասում ենք, որ, եթե կարողանանք, անձամբ կգնանք՝ Հիսուս Քրիստոսի նկատմամբ տաժաժ մեր հարգանքից ելնելով, բայց քանի որ մենք այս կողմերում շատ գործեր ունենք, մեր եղբայր Հուլավուին կհանձնարարենք, որպեսզի նա ազատագրի Սուրբ Երկիրը ու վերադարձնի այն քրիստոնյաներին: Բաթուին և մյուս թաթարներին, ովքեր գտնվում են Ռումի սուլթանությունում և այլ երկրներում, կկարգադրենք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

օգնել մեր եղբայր Հուլավուին գրավելու Բաղդադ քաղաքը և ոչնչացնելու խալիֆին՝ մեր ոխերին թշնամուն:

Թաքարներից օգնություն ստանալու Հայոց թագավորի խնդրած արտոնությունների հետ կապված մենք ցանկանում ենք, որպեսզի նա արտահայտեր այդ մասին իր բոլոր ցանկությունները և որը մենք հաստատում ենք:

Այն տարածքները, որոնք հայոց թագավորը խնդրում է վերադարձնել իրեն, մենք հաստատում ենք և մեր եղբայր Հուլավուին կկարգադրենք նրան վերադարձնել այն բոլոր տարածքները, որոնք նրան են պատկանելիս եղել: Եվ նրան կտանք այն հողերը, որոնք նա կկարողանա նվաճել սարակի-նոսներից, և հատուկ ողորմածությամբ մենք կտանք այն ամրոցները, որոնք մինչ այդ պատկանելիս են եղել նրան»:

Պայմանագրի բնօրինակի բացակայության պայմաններում Հեթում պատմիչի կողմից ներկայացված պայմանագիրը մասնագետների շրջանում տարակարծությունների տեղիք է տվել: Դա պայմանավորված է նախ և առաջ այն հանգամանքով, որ Հեթում պատմիչը, նեկայացնելով հայ-մոնղոլական բանակցությունները, չի հանդիսացել տվյալ ժամանակահատվածի քաղաքական իրադարձությունների ակնատեսը, այլ այդ մասին, իր հավաստմամբ, տեղեկացել է իր հորեղբորից: Նա իր երկը գրել է Կոնստանտին V պապի հանձնարարականով՝ աշխատության վերջում արժարժելով նաև նոր խաչակրաց արշավանք կազմակերպելու հարցը: Պրոֆեսոր Գ. Միքայելյանը Կիլիկիայի հայկական պետության պատմությանը նվիրված իր աշխատության մեջ գալիս է այն եզրահանգման, որ Հեթում պատմիչն իր երկում, անդրադառնալով հայ-մոնղոլական պայմանագրին, արտահայտել է Կիլիկիայի այն ֆեոդալական խմբի քաղաքական դիրքորոշումը, որը շահագրգռված էր Հռոմի պապի և եվրոպական պետությունների հետ քաղաքական և կրոնական կապերի ամրապնդմամբ: Միքայելյանի կարծիքով պատմիչը ցանկացել է ցույց տալ Արևմուտքին, որ դեռ Հեթումյանների դինաստիայի հիմնադիրը ջանքեր է գործադրել Արևելքում քրիստոնյաների հաղթանակի համար և այդ նպատակով ուղևորություն կատարել դեպի Ղարադորում, մեծ խանին համոզել քրիստոնեություն ընդունել և պատերազմ սկսել քրիստոնյաների գլխավոր թշնամիների՝ Բաղդադի և Եգիպտոսի մահմեդականների դեմ: Թերևս Հեթումյանները ձգտել են նպաստել մոնղոլների շրջանում քրիստոնեության տարածմանը, նամանավանդ, եթե հաշվի առնենք, որ XIII դարի 40-60 ական թթ. Հռոմի պապը և եվրոպական տերությունները փորձում էին հեթանոս մոնղոլներին դարձնել քրիստոնյա: Սակայն, Հեթում պատմիչի պնդմամբ Մանգու խանի՝ քրիստոնեություն ընդունելու հանգամանքը ոչ մի աղբյու-

րով այլևս չի հաստատվում:
Պայմանագրում կողմերի իրավունքները և պարտավորությունները ներկայանում են միակողմանիորեն: Այնտեղ նշվում է անհրաժեշտության դեպքում մոնղոլներից օգնություն խնդրելու Կիլիկիայի իրավունքի մասին, սակայն բացակայում են մոնղոլների նկատմամբ Կիլիկիայի պարտավորություններին՝ մասնավորապես դեպի արևմուտք մոնղոլական արշավանքների ժամանակ օժանդակ գործեր տրամադրելուն վերաբերող կետերը: Այնինչ, պատմական փաստերը ցույց են տալիս, որ պայմանագիրն, ըստ ամենայնի, պետք է շոշափեր կողմերի միջև ռազմական փոխօգնության հարցը: Հայ-մոնղոլական պայմանագիրը կնքվել է այն ժամանակ, երբ մոնղոլներն ակտիվորեն պատրաստվում էին Առաջավոր Ասիայի դեմ նոր արշավանքի, որը ղեկավարելու էր Մանգու խանի եղբայր Հուլավուն: Կիլիկիայի աշխարհագրական դիրքը բավականին բարենպաստ էր մոնղոլական մերձավորարևելյան ռազմական ծրագրերի մեջ Կիլիկիայի հայկական պետությունը ներգրավելու համար: Պատմական աղբյուրները տեղեկություններ չեն հաղորդում 1258թ. մոնղոլների կողմից Բաղդադի խալիֆայության գրավմանը կիլիկյան գործերի մասնակցության մասին: Սակայն, հայտնի է իլ-խանների սիրիական արշավանքներին Կիլիկիայի ակտիվ մասնակցությունը, մասնավորապես Հուլավու խանի՝ 1259թ., Աբաղա խանի՝ 1281թ., Ղազան խանի՝ 1299-1303թթ. արշավանքներին: Մոնղոլական ռազմական գործողություններին չմասնակցելու դեպքում Կիլիկիան հաճախ սպառազինություններով օգնել և այլ տեսակի աջակցություն է ցուցաբերել իր դաշնակցին: Ինչ վերաբերում է Կիլիկիայի հայկական թագավորությանը տարածքներ վերադարձնելու և անհրաժեշտության դեպքում օգնություն ցույց տալու մոնղոլական կողմի պարտավորությանը, սպա այն համապատասխանում է պատմական փաստերին: 1266թ., 1292թ. հայկական թագավորության դեմ եգիպտական մամլուքների արշավանքների ժամանակ մոնղոլական օժանդակ գորաջոկատներ են ուղարկվել Կիլիկիա: Ղազան խանը 1303թ. իր վերջին սիրիական արշավանքի ձախողումից հետո Հեթում II-ին տրամադրել է 1000 ձիավոր և դրամական օժանդակություն՝ Եգիպտոսի հարձակումներից Կիլիկիայի սահմանները պաշտպանելու համար: 1263-1264թթ. Հեթում I-ի՝ Սիրիայի դեմ ռազմական գործողություններին մասնակցել են նաև մոնղոլական զորախմբեր: 1259թ. Հուլավու խանի սիրիական արշավանքի արդյունքում Կիլիկիային են վերադարձվել Մարաշ քաղաքը և Բեհեսնին, իսկ Ղազան խանի՝ 1299թ. արշավանքի արդյունքում մինչ այդ Եգիպտոսի կողմից գրավված սահմանային ամրոցներ ու բերդեր: Այդուհանդերձ, պատմական փաստերը ցույց են տալիս, որ հայ-մոնղոլական դաշնակցային հա-

www.lawinstitute.am

րաբերությունները անհրավահավասար հիմքերի վրա էին: Հայկական թագավորությունը որոշակի հարկ էր վճարում Արևմտյան իլխանությանը, կիլիկյան զորքերը որոշիչ դեր էին խաղում մոնղոլական արշավանքների ընթացքում, մինչդեռ Կիլիկի-

այի դեմ Եգիպտոսի սուլթանության արշավանքների ժամանակ մոնղոլական կողմը փոքրաքանակ ռազմական ջոկատներ էր տրամադրում, որոնք հաճախ ուշացումով էին ժամանում:

¹ Տե՛ս Կիլիկիայի հայկական պետության կողմից կնքված քաղաքական պայմանագրերի բնօրինակների կամ պատճենների բացակայության պայմաններում այդ պայմանագրերի ուսումնասիրության համար հիմնական աղբյուր են հանդիսանում միջնադարյան հայ և օտարազգի մատենագիրների երկերում տեղ գտած հաղորդումները: Կիլիկիայի քաղաքական պայմանագրերից մեզ է հասել միայն 1285թ. հայ-եգիպտական հաշտության պայմանագրի տեքստը, որի պատճեն բերված է XVդ. արաբ պատմագիր Թադի-էդ-Դին Ահմեդ Մաքրիզիի՝ Եգիպտոսի մամլուք սուլթանների պատմությանը նվիրված աշխատության մեջ:

² Տե՛ս Ի նկատի ունենք 1268թ., 1285թ., 1292թ. (1293), 1298թ., 1323թ., 1337թ. կնքված հաշտության պայմանագրերը:

³ Տե՛ս 1268թ. հայ-եգիպտական պայմանագրի մասին XIVդ. արաբ պատմագիր Աբուլ Ֆիդայի «Ժամանակագրության» մեջ նշվում է. «...հաշտություն կայացավ ալ-Մալիք ալ-Չահիրի (սուլթան Բեյբարս) և Սսի տիրոջ՝ Հեթումի միջև այն հիման վրա, որ եթե Սսի տերը թաթարների մոտից բերի Սոնկուր ալ-Աշկարին, որոնք նրան գերի էին վերցրել Հալեբի բերդից այն ժամանակ, երբ Հուլադուն տիրել էր այդ տեղին, և բացի այդ հանձնի Բեհեսնին, Դարպասկը, Մարզանը, Դաբանը, Շիհել Հադիդը, ապա սուլթանն էլ ազատ կարձակի նրա որդի Լևոնին: Ապա Սսի տերը ներկայացավ Աբադային, թաթարներին և նրանից խնդրեց Սոնկուր ալ-Աշկարին: Նա էլ հանձնեց նրան և Սոնկուր ալ-Աշկարը վերադարձավ ալ-Մալիք ալ-Չահիրի ծառայությանը և Դարպասկը, ինչպես և մյուս վայրերը, որոնք հիշեցինք, հանձնվեցին, բացի Բեհեսնիից: Ալ-Մալիք ալ-Չահիրն էլ ազատ արձակեց Սսի տեր Հեթումի որդուն՝ Լևոնին ու վերադարձրեց իր հորը» (Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, Յակուտ ալ-Համավի, Աբուլ Ֆիդայ, Իբն Շադադ, կազմեց Հ. Նալբանդյան, Երևան, 1965, էջ 237):

⁴ Տե՛ս Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին, էջ 291:

⁵ Տե՛ս Ալիշան Ղ., Սիսուան, Վենետիկ, Ս.Ղազար, 1885, էջ 392, Չամչյան Մ., Հայոց Պատմություն, հատոր Գ, Երևան, 1984, էջ 337:

⁶ Տե՛ս Պայմանագիրը կնքվել է 10 տարի, 10 ամիս, 10 օր, 10 ժամ ժամկետով:

⁷ Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, ou, Cartulaire de la chancellerie royale des Roupzniens, Venise, 1863, p. 226:

⁸ Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, p. 225:

⁹ Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, p. 225:

¹⁰ Տե՛ս Բակուրյան, Դաշնագիր խաղաղութեան ընդմեջ Լեւոն Գ թագավորի և Եգիպտոսի մամլուքեան սուլթան Գալաունի, կնքում 1285թ. մայիսի 7-ին, Բանասեր, հ. Գ, թիվ 1, Պարիս, 1902, էջ 79:

¹¹ Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, p. 227:

¹² Տե՛ս Langlois V., Le trmsor des chartes d'Armnnie, p. 230:

¹³ Տե՛ս Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ.Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 285:

¹⁴ Տե՛ս Մաղաքիա Աբեղա (Գրիգոր Ակներցի), Պատմութիւն վասն ազգին նետողաց, Ս. Պետերբուրգ, 1870, էջ 16:

¹⁵ Տե՛ս Recueil des historiens des croisades, Documents Armenizns, t. II, Paris, 1967, pp. 164-166, 297-299:

¹⁶ Տե՛ս 1254թ. հայ-մոնղոլական պայմանագրի հետ կապված որոշակի տեղեկություններ են հաղորդում նաև այլ միջնադարյան աղբյուրներ, սակայն տեղեկությունների սակավությունը թույլ չի տալիս լիարժեք պատկերացում կազմել պայմանագրում կողմերի իրավունքների և պարտավորությունների մասին: Կիրակոս Գանձակեցին պայմանագրի հետ կապված միայն հիշատակում է, որ Մանգու խանը Հեթում I-ին հրովարտակ էր տվել, որպեսզի ոչ ոք իրավունք չունենա անհանգստացնել կամ ճնշել նրան և իր երկիրը, ինչպես նաև գրավոր կարգադրություն կատարել բոլոր վայրերի եկեղեցիները (հարկերից) ազատելու մասին (տե՛ս, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն Հայոց, էջ 367): Մոնղոլական կայսրություն որպես ֆրանսիական թագավոր Լյուդովիկոս IX-ի պատվիրակ ուղևորված Վ. Ռուբրուկը իր ուղեգրության մեջ, Ղարաղորումում տարվող հայ-մոնղոլական բանակցությունների արդյունքների մասին տեղեկանալով թագավորահայր Կոստանդինից, նշում է, որ Մանգու խանը Հեթումին այն առավելություն է շնորհել, որպեսզի ոչ մի դեսպան չմտնի նրա երկիր և նկատելիորեն կրճատել է հարկերը (տե՛ս, Гийом де Рубрук, Путешествие в восточные страны, Путешествие в восточные страны Плато Карпини и Рубрука. М., 1957. С. 192-193):

¹⁷ Տե՛ս Микаелян Г. История Киликийского армянского государства. Ереван. 1952. С. 315.

РЕЗЮМЕ

Вопрос взаимности прав и обязательств в международных договорах, заключенных Киликийским армянским царством с Мамлюкским султанатом Египта и Монгольской империей

В средние века государства при заключении международных договоров исходили из собственных интересов, не учитывая интересы других сторон. На взаимной основе строились в основном торговые отношения государств. В международной договорной практике Киликийского армянского царства неравноправными представляются политические договоры Киликии. В данной статье рассматривается вопрос взаимности прав и обязательств в договорах, заключенных Киликийским армянским царством с Мамлюкским султанатом Египта и Монгольской империей.

SUMMARY

The observance of mutuality of rights and obligations in the international treaties concluded by the Armenian Kingdom of Cilicia with the Mamluk Sultanate of Egypt and the Mongol Empire

In the Middle Ages the states concluding international treaties used to pursue their own interests without regard to the interests of other parties. Mostly the trade relations of countries were built on the basis of mutuality. The article deals with the issue of observance of mutuality in the international treaties concluded by the Armenian kingdom of Cilicia with the Mamluk Sultanate of Egypt and the Mongol Empire.

ՀԱՅԿ ԳԱԼՍՏՅԱՆ

«Մխիթար Գոշ» Հայ-ռուսական միջազգային համալսարանի տնտեսագիտության, մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոնի հայցորդ

**ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ
ԱՌՄՆՁԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ**

Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանի Հանրապետությունում տարածքային կառավարման տեղն ու դերը աշխատանքի բաժանման մեխանիզմում պայմանավորված է հետևյալ բնութագրիչներով.

Տարածքային կառավարումը դա՝

ա) միասնական պետական իշխանության կենսագործման ուղղությամբ իրականացվող գործունեության հստակ տեսակ է, որն ունի գործառու-թային յուրահատկություն, որով տարբերվում է պե-տական իշխանության իրագործման այլ տեսակ-ներից (ձևերից),

բ) գործադիր-կարգավորող բնույթի գործու-նություն է: Դրա հիմնական ուղղությունը կատա-րումն է, այսինքն՝ օրենքներն ու ենթաօրենսդրա-կան նորմատիվ ակտերը կյանքի կոչելը: Այդ նպա-տակն իրականացվում է անհրաժեշտ իրավաբա-նական-իշխանական լիազորությունների գոր-ծադրման միջոցով,

գ) տարածքային կառավարման մարմիննե-րի մենաշնորհն է:

Այդպիսին է տարածքային կառավարման ընդհանրացված բնութագիրը, որին կարելի է ավե-լացնել նաև դրա որոշ այլ առանձնահատկություն-ներ, մասնավորապես համակարգի ուղղահայա-ցությունը (ենթակարգությունը, աստիճանակար-գությունը), տարածքային կառավարման մարմին-ներից պատկանող իշխանական լիազորություննե-րի իրականացումը, օրենսդրությամբ նախատես-ված իրավաստեղծ գործունեության (իրավակի-րառման և իրավաստեղծման զուգակցման) հնա-րավորությունը և այլը:

Հայաստանի Հանրապետությունում տա-րածքային կառավարման և տեղական ինքնակա-ռավարման համակարգերի ձևավորման հիմքը, ըստ էության, հանդիսացավ 1995 թվականի հուլիսի 5-ին ընդունված ՀՀ Սահմանադրությունը: Մասնա-վորապես Սահմանադրության 104-րդ հոդվածով սահմանվեց, որ Հայաստանի Հանրապետության վարչատարածքային միավորներն են՝ մարզերը և համայնքները: Միաժամանակ, 107-րդ և 105-րդ

հոդվածներով համապատասխանաբար սահման-վեցին, որ մարզերում իրականացվում է պետական կառավարում, իսկ համայնքներում՝ տեղական ինքնակառավարում:

Մարզերում արդյունավետ պետական կա-ռավարում իրականացնելու նպատակով 1997 թվա-կանի մայիսի 6-ին ընդունվեց «Հայաստանի Հան-րապետության մարզերում պետական կառավար-ման մասին» ՀՀ Նախագահի հրամանագիրը, որի 1.2 կետով սահմանվեց, որ պետական կառավա-րումը մարզում ապահովվում է մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականու-թյան իրականացման և հանրապետական գործա-դիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Հրամա-նագրով սահմանվեց, որ տարածքային քաղաքա-կանությունը մարզում իրականացնում է մարզպե-տը՝ մարզպետարանի աշխատակազմի և մարզա-յին ենթակայության կազմակերպությունների մի-ջոցով:

Սակայն, 1997 թվականից հետո ՀՀ կառա-վարության գործունեության արդյունավետության բարձրացման նկատառումներով պայմանավոր-ված, ինչպես նաև քաղաքական գործելաճի ձևավորված ավանդույթի արդյունքում՝ մարզպետ-ներից վերապահվեցին մի շարք գործառույթներ, որոնք, ըստ էության, օրենսդրորեն որևէ փաս-տաթղթում չարտացոլվեցին:

Միաժամանակ, հրամանագրի ընդունումից հետո վերջինիս հետ առնչություն ունեցող մի շարք օրենսդրական ակտերում տեղի ունեցան փոփո-խություններ, որոնք միշտ չէ, որ արտացոլվեցին հրամանագրի համապատասխան դրույթներում, չնայած այն հանգամանքին, որ «Իրավական ակ-տերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ իրավական ակտը չպետք է հա-կասի հավասար կամ ավելի բարձր իրավաբանա-կան ուժ ունեցող իրավական ակտերին, իսկ 36-րդ հոդվածի 4-րդ մասով գրված է, որ նորմատիվ իրա-վական ակտում միևնույն հասկացությունը սահմա-նելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ:

Արդյունքում ստեղծված է այնպիսի իրավիճակ, երբ հրամանագրում առկա է օրինակ՝ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքին հակասող դրույթներ, մասնավորապես հրամանագրի 1.9-րդ կետում գրված է, որ մարզպետարանի աշխատակազմում քաղաքացիական ծառայության պաշտոններում նշանակում և պաշտոններից ազատում կատարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության մասին օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մարզպետի կողմից՝ քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոններում, մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի կողմից՝ քաղաքացիական ծառայության գլխավոր, առաջատար և կրտսեր պաշտոններում, մինչդեռ «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնների խմբի առաջին ենթախմբի պաշտոններում (որը հանդիսանում է մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնը) նշանակում և ազատում կատարվում է վարչապետի կողմից, իսկ մարզպետը պաշտոնի նշանակում և ազատում է միայն քաղաքացիական ծառայության բարձրագույն պաշտոնների երկրորդ ենթախմբի, ինչպես նաև գլխավոր խմբի առաջին ենթախմբի պաշտոններում:

Հրամանագրում առկա են նաև այնպիսի դրույթներ (տերմիններ), որոնք ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով վաղուց ճանաչված են ուժը կորցրած:

Հետևաբար, ներկայումս գործող հրամանագիրը ոչ միշտ է, որ արտացոլում է ոլորտում ձևավորված իրավահարաբերությունները:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ իշխանության ապակենտրոնացման արդյունքում ձևավորված այս համակարգը մի կողմից հանդես է գալիս որպես իշխանության առանձին օղակ, իսկ մյուս կողմից՝ որպես հանրային կառավարման միասնական համակարգի բաղկացուցիչ մաս: Այս համատեքստում 1997 թվականից հետո կարևորվեց և ներկայումս էլ կարևորվում է այնպիսի քաղաքականության իրականացումը, որը համակարգի կայացման գործընթացին զուգընթաց հնարավորություն կընձեռի իրականացնել հանրապետական գործադիր մարմիններում կենտրոնացված որոշ գործառնությունների արդյունավետ ապակենտրոնացման քաղաքականություն:

Ուստի, հիմք ընդունելով վերոգրյալը, ինչպես նաև պետության կայացման և տնտեսության զարգացման գործընթացում տարածքային կառավարման մարմինների մեծ դերակատարումը՝ վերջիններիս գործունեության արդյունավետության

բարձրացման նպատակով, անհրաժեշտություն է ներկայիս գործող «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» հրամանագիրը ճանաչել ուժը կորցրած և մշակել ՀՀ Նախագահի նոր հրամանագիր, որը ամբողջությամբ կարտացոլի վերոնշյալ խնդիրները:

Միաժամանակ, նպատակահարմար է, որ նոր հրամանագրի հիմնական առաքելությունը հանդիսանա մարզպետի և մարզպետարանի գործունեության կանոնակարգումը, այլ ոչ թե նրանց միջոցով պետական քաղաքականության իրականացումը: Այս պարագայում ճիշտ կլինի, որ նոր հրամանագիրը կոչվի «Հայաստանի Հանրապետության մարզերում տարածքային կառավարման մարմինների գործունեության կարգը սահմանելու մասին»:

Նոր հրամանագրում, գործողի համեմատ, պետք է հստակեցվի, ինչպես նաև ներառվի բովանդակային մի քանի սկզբունքներ, մասնավորապես՝

1. Տարածքային կառավարման մարմինների ներգրավում տարածքային քաղաքականության մշակման գործընթացին – Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ մարզպետը, հանդիսանալով կառավարության ներկայացուցիչը մարզում, ավելի քաջատեղյակ է տեղի խնդիրներին՝ նպատակահարմար է կառավարության տարածքային քաղաքականության մշակման գործընթացին վերջինիս դարձնել մասնակից: Գործընթացը կարևորում ենք նաև այն հանգամանքով պայմանավորված, որ կառավարությունը իր մշակած քաղաքականությունը մարզում իրագործում է մարզպետարանի միջոցով:

Միաժամանակ, ցանկանում ենք նշել, որ գործնականում մարզպետները այս կամ այն չափով արդեն իսկ իրենց մասնակցությունն են ունենում տարածքային քաղաքականության մշակման որոշ գործընթացներին, մասնավորապես՝ մարզային զարգացման ծրագրերի մշակման աշխատանքներին:

2. Ըստ ոլորտների մարզպետների կողմից իրականացվող գործառնությունների ցանկի հնարավորինս հստակեցում - Անհրաժեշտ է ընդլայնել մարզպետների գործունեության շրջանակը՝ մարզպետի կողմից մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականությունն իրականացվող բնագավառների ցանկում նախատեսելով ներկայիս հրամանագրում չընդգրկված՝ մարզի տնտեսական զարգացման, միջազգային համագործակցության, երիտասարդության, պաշտպանության, արտակարգ իրավիճակների և քաղաքացիական պաշտպանության բնագավառները:

Հստակեցման կարիք ունի նաև յուրաքանչյուր բնագավառում մարզպետի կողմից իրականացվող գործառնությունների ցանկը, որտեղ անհրա-

ժեշտ է նախատեսել այնպիսի լիազորություններ, որոնք ներկայումս մարզպետները իրականացնում են իրենց աշխատանքային գործունեության ընթացքում, կամ որոնց իրականացումը կբարձրացնի մարզում տվյալ ոլորտին հատկացված միջոցների օգտագործման արդյունավետությունը:

3. Մարզպետների կողմից իրականացվող գործառույթները այլ ոլորտներում - ներկայիս գործող հրամանագրում չկան նախատեսված այնպիսի դրույթներ որոնցով կնկարագրվեն մարզպետի գործառույթները մարզի տարածքում ժողովրդավարական համակարգի զարգացման և պաշտպանման, օրենքների գերակայության ապահովման, քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման, մարդու իրավունքների, ազատության և տեղեկատվության մատչելիության ապահովման բնագավառներում, մինչդեռ թվարկված բնագավառները հանդիսանում են շատ կարևոր ոլորտներ պետության կայացման և զարգացման գործընթացում:

Առաջարկվում է նախատեսել նաև դրույթներ, համաձայն որոնց՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքին համաձայն՝ մարզպետը իր գործունեությունը թափանցիկ և հրապարակային դարձնելու նպատակով, մարզին առնչվող հիմնախնդիրները և իր ընդունած որոշումները ու արձակած կարգադրությունները կհրապարակի մարզպետարանի ինտերնետային կայք էջում: Մարզպետը պետք է ապահովի նաև մարզի տարածքում մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության թափանցիկությունը և հրապարակայնությունը, որը կհանդիսանա կարևոր գործոն ժողովրդավարության կայացման գործընթացում:

Մարզպետի գործունեության հրապարակայնության ապահովման հետ համատեղ նույնքան կարևոր է նաև մարզպետի և քաղաքացիների փոխհարաբերությունների հստակ նկարագրումը: Այս համատեքստում պետք է սահմանել, որ մարզպետն իրականացնում է քաղաքացիների ընդունելություն առնվազն ամիսը մեկ անգամ, և, ընդ որում, հիմք ընդունելով այն հանգամանքն, որ Հայաստանի Հանրապետությունում տարածաշրջանները ներկայիս վարչատարածքային բաժանմամբ իրարից կտրտված են՝ անհրաժեշտ է սահմանել նաև դրույթ, համաձայն որի՝ մարզպետը կպարտավորվի քաղաքացիների ընդունելություն կազմակերպել նաև մարզի յուրաքանչյուր տարածաշրջանում՝ քաղաքացիների հարմարության ապահովվման նկատառումներով պայմանավորված:

4. Մարզպետի համակարգման ոլորտում գտնվող հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների հետ համագործակցության և գործողությունների փոխ-

համաձայնեցման մեխանիզմների հստակեցում – ինչպես արդեն իսկ նշվեց, հրամանագրով սահմանված է, որ պետական կառավարումը մարզում ապահովվում է մարզի տարածքում կառավարության տարածքային քաղաքականության իրականացման և հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգման միջոցով: Այստեղ կարևոր է «համակարգում» բառի պարզաբանումը, մասնավորապես նկարագրումը, թե իրար հետ փոխկապակցված ինչ գործողությունների իրականացման լիազորություններ ունի մարզպետը և արդյոք բոլոր հանրապետական գործադիր մարմինների բոլոր տարածքային ծառայությունների նկատմամբ ունի նույն լիազորությունները:

Եթե դիտարկենք գործող հրամանագրի 1.21-1.25 կետերը (որոնք վերաբերվում են հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգմանը), ապա դրանցում նկարագրված են մարզպետի լիազորությունների շրջանակը ընդամենը մի քանի ոլորտներում: Գործող հրամանագրում առկա է նաև այնպիսի ոլորտ (օրինակ ներքին գործերի ոլորտը), որի նկարագիրը և ոլորտի համար պատասխանատու հանրապետական գործադիր մարմինը գործող օրենսդրությամբ ներկայացված չէ:

Ինչևէ, միանշանակ առկա է մարզպետների կողմից հանրապետական գործադիր մարմինների տարածքային կենտրոնների գործունեության համակարգման գործառույթի հստակեցման անհրաժեշտություն: «Համակարգման» գործառույթի հստակ նկարագրումն ինքնին հանդիսանում է շատ բարդ գործընթաց, քանի որ մի կողմից, գտնվելով գործադիր մարմնի ուղղահայաց ենթակայության տակ, տարածքային կենտրոնի ղեկավարը պարտավոր է իրականացնել իր անմիջական ղեկավարի հանձնարարությունը, մյուս կողմից, գտնվելով մարզպետի «համակարգման» ոլորտում, վերջինս պարտավոր կլինի իրականացնելու նաև մարզպետի ցուցումները, և դրանք առանձին դեպքերում կարող են և չհամապատասխանել միմյանց:

Ճիշտ է, եթե դիտարկենք օրենսդրորեն, ապա կստացվի, որ նմանատիպ իրավիճակ չի կարող առաջանալ, քանի որ պետության քաղաքականությունն մշակող մարմինը հանդիսանում է կառավարությունը (յուրաքանչյուր նախարարություն իրեն վերապահված ոլորտում), իսկ տարածքային կառավարման մարմինները հանդիսանում են մշակված քաղաքականությունը տեղերում իրագործող մարմիններ: Այսինքն, քաղաքականություն մշակող մարմինների, այդ թվում նրանց տարածքային կենտրոնների և մշակված քաղաքականությունը իրագործող մարմինների գործողությունները

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

չեն կարող հակասել միմյանց: Սակայն, այստեղ պետք է նկատի ունենալ, որ ոչ բոլոր իրավահարաբերություններն են, որոնք կանոնակարգված են օրենսդրորեն, և առօրյա կյանքում հաճախ ի հայտ են գալիս այնպիսի իրավիճակներ, որոնց հետ տեղերում աշխատող կառույցները ստիպված են գործունենալ նախքան դրանց կանոնակարգումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ կարելի է առաջարկել հետևյալ դրույթները.

1) Մարզպետի համակարգման ոլորտում գտնվող գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ցանկը սահմանվի Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից: Այս պարագայում կառավարությունը հնարավորություն կունենա իր քաղաքականության գերակայություններով, ինչպես նաև ոլորտային զարգացման ռազմավարությամբ պայմանավորված ըստ անհրաժեշտության արագ կերպով փոփոխություններ իրականացնել տվյալ ցանկում՝ միաժամանակ սահմանելով նաև մարզպետի լիազորությունների շրջանակը այս կամ այն ոլորտում:

2) Մարզում գործադիր մարմինների տարածքային ծառայությունների գործունեության համակարգումը, մարզպետին օրենսդրությամբ վերապահված իրավասության սահմաններում, լայն առումով պետք է ընդգրկի գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզպետարանի աշխատակազմի ու տեղական ինքնակառավարման մարմինների համատեղ և համաձայնեցված գործունեության կազմակերպումը:

3) Անհրաժեշտ է նկարագրել մարզպետի և տարածքային ծառայությունների ղեկավարների համագործակցության շրջանակը, մասնավորապես կարելի է սահմանել, որ մարզպետը կազմակերպում է խորհրդակցություններ մարզպետի համակարգման ոլորտում գտնվող տարածքային ծառայությունների ղեկավարների մասնակցությամբ և տարածքային ծառայությունների ղեկավարներին ներկայացնում ու ստանում է առաջարկություններ, օժանդակում է տարածքային ծառայությունների գործունեությանը, ապահովում դրանց համագործակցությունը տեղական ինքնակառավարման մարմինների ու բնակչության հետ: Մարզպետը տարածքային ծառայության ղեկավարի հետ համաձայնեցված ժամկետում պետք է տարածքային ծառայությունների ղեկավարներից ստանա տեղեկատվություն մարզպետի ներկայացրած առաջարկությունների կատարման ընթացքի վերաբերյալ:

Միաժամանակ, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ 1997 թվականից հետո էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման և գազամատակարարման ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպությունները դարձել են իրա-

վաբանական անձինք, իսկ ՀՀ Սահմանադրության 83.5-րդ հոդվածի 2-րդ մասով գրված է, որ բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները, նրանց պարտականությունները, ապա ճիշտ կլինի հրամանագրում սահմանել, որ մարզպետը հրավիրում և անց է կացնում խորհրդակցություն մարզի տարածքում կապի էլեկտրամատակարարման, ջրամատակարարման, ջրահեռացման, ջերմամատակարարման և գազամատակարարման ոլորտներում գործունեություն իրականացնող իրավաբանական անձանց հետ և նրանց ուշադրություն է հրավիրում ծագած խնդիրների լուծման անհրաժեշտության վրա:

4) Մարզի տարածքում երկու պետական կառույցների կողմից միանման քաղաքականություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է սահմանել մարզպետի համակարգման ոլորտում գտնվող տարածքային ծառայությունների և մարզպետի տարեկան աշխատանքային ծրագրերի համաձայնեցման մեխանիզմներ:

5) Կարևոր գործոն է հանդիսանում մարզպետի և հանրապետական գործադիր մարմնի համագործակցության մեխանիզմների սահմանումը մասնավորապես կարելի է գրել, որ մարզպետը համագործակցում է հանրապետական գործադիր մարմինների հետ և նրանց քննարկման է ներկայացնում վերջիններիս իրավասությանը վերաբերող մարզին առնչվող հարցերը, ինչպես նաև օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով անհրաժեշտ տեղեկատվություն է տրամադրում հանրապետական գործադիր մարմնին մարզում տիրող իրավիճակի վերաբերյալ և վերջինից ստանում է իր գործունեության համար անհրաժեշտ տեղեկատվություն:

5. Մարզխորհուրդի ղեկավարման հստակեցում և բարձրացում մարզային խնդիրների քննարկման և լուծման գործընթացում – ներկայիս գործող օրենսդրությամբ որևէ կերպ չի հստակեցվում մարզխորհուրդի դերը և նշանակությունը մարզային նշանակության խնդիրների քննարկման և դրանց լուծման գործընթացում, այնինչ վերջինիս դերի հստակեցման և այնտեղ մարզի համար կարևոր նշանակություն ունեցող գործընթացների պարտադիր քննարկման պարագայում մարզխորհուրդները կարող են հանդիսանալ մարզպետին կից գործող խորհրդակցական լուրջ մարմին, որի անհրաժեշտությունը առկա է:

Մարզի խորհուրդի կազմում ընդգրկելով մարզպետին և մարզի համայնքի ղեկավարներին՝ միաժամանակ անհրաժեշտ է սահմանել, որ մարզի խորհրդի նիստերին, մարզպետի հրավերով կարող են մասնակցել մարզպետի տեղակալը (տեղակալ-

www.lawinstitute.am

ները), հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների ղեկավարներ, մարզպետարանի աշխատակազմի աշխատակիցներ, մարզի համայնքների ավագանիների անդամներ, մարզում գործող հասարակական կառույցների անդամներ, զանգվածային լրատվական միջոցների ներկայացուցիչներ և այլ անձինք:

Մարզխորհրդի նիստերին մարզպետը, մասնակիցներին իրազեկելով Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի և կարգադրությունների, Հայաստանի Հանրապետության կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումների, մարզպետի որոշումների ու կարգադրությունների մասին (անհրաժեշտության դեպքում տեղական ինքնակառավարման մարմիններին ներկայացնելով պարզաբանում օրենսդրության փոփոխությունից բխող տեղական ինքնակառավարման մարմինների գործողությունների մասին), ծանոթանալով համայնքներում տիրող իրավիճակին՝ տարվող աշխատանքների ընթացքին և ծագած խնդիրներին, լսելով համայնքների ղեկավարների առաջարկություններն ու դիտողությունները մարզպետարանի և մարզային ենթակայության կազմակերպությունների գործունեության վերաբերյալ և լուծելով կազմակերպական այլ հարցեր, միաժամանակ մարզի խորհրդի քննարկմանը պարտադիր պետք է ներկայացնի մարզին առնչվող հետևյալ հարցերը.

- 1) Հայաստանի Հանրապետության կառավարություն և Հայաստանի Հանրապետության վարչապետին ներկայացվող իր հաշվետվությունները՝ մարզի ընդհանուր սոցիալ-տնտեսական վիճակի և իր գործունեության մասին,
- 2) մարզի տնտեսական զարգացման տարեկան և երկարաժամկետ ծրագրերը՝ ներկայացնելով իր առաջարկությունները ծրագրերի վերաբերյալ,
- 3) մարզային զարգացման ծրագրերի իրականացման մոնիթորինգի արդյունքները,
- 4) Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի և վերահսկողական գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների կողմից մարզում իրականացված ստուգումների արդյունքում կազմված փաստաթղթերը,
- 5) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով մարզի տարածքում իրականացման համար նախատեսված ծրագրերը,
- 6) Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով, և այլ միջոցներով մարզին վերաբերվող ծրագրերի կատարման ընթացքը,
- 7) համայնքի ղեկավարի վարքագծի վերաբերյալ իրավապահ մարմիններից ստացված տեղեկատվությունը:

Անհրաժեշտ է օրենսդրորեն ամրագրել նաև մարզի խորհրդի նիստի հրապարակային լինելու հանգամանքը, ինչպես նաև այս համատեքստում սահմանել, որ մարզի խորհրդի նիստի արդյունքում կազմվում է արձանագրություն, որը հրապարակվում է մարզպետարանի ինտերնետային կայքէջում:

6. Միջազգային համագործակցության քննազատում մարզպետի կողմից իրականացվող գործառույթների հստակեցում - պետականության կայացման և զարգացման գործընթացում կարևոր գործոն է հանդիսանում նաև այլ պետությունների և միջազգային կառույցների հետ փոխշահավետ համագործակցության իրականացումը: Այս գործընթացի ապահովման ընթացքում կարևոր դերակատարում պետք է ընձեռվի նաև մարզպետարաններին, իհարկե ոչ թե պետությունների հետ համագործակցություն ապահովվելու առումով, այլ պետությունների կառուցվածքային միավորների և, ինչու չէ, միջազգային կառույցների հետ: Ուստի, առաջարկվում է նաև դրույթ նախատեսել, որ մարզպետը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխհամաձայնեցնում և ստորագրում է միջազգային պայմանագիր չհանդիսացող միջազգային բնույթի փաստաթղթեր:

7. Մարզպետի և մարզպետի տեղակալի խրախուսման և կարգապահական տույժի ենթարկման ընթացակարգերի հստակեցում - առաջարկվում ենք փոփոխություններ իրականացնել նաև մարզպետի և նրա տեղակալի նկատմամբ կիրառվող խրախուսման ու կարգապահական տույժի տեսակներում՝ այն հնարավորինս համապատասխանեցնելով «Քաղաքացիական ծառայության մասին» ՀՀ օրենքով նախատեսված քաղաքացիական ծառայողների նկատմամբ կիրառվող խրախուսման ու կարգապահական տույժերի տեսակներին:

Մասնավորապես, որպես խրախուսման միջոց կարելի է նախատեսել՝ շնորհակալության հայտարարումը, միանվագ դրամական պարգևատրումը, հուշանվերով պարգևատրումը, լրացուցիչ վճարովի արձակուրդի տրամադրումը և կարգապահական տույժի հանումը, իսկ որպես կարգապահական տույժեր կարելի է նախատեսել՝ նկատողությունը, խիստ նկատողությունը և պաշտոնից ազատում:

1. ՀՀ Սահմանադրություն:
2. «Վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենք:
3. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք:
4. ՀՀ Նախագահի 1997թվականի մայիսի 20-ի «Մարզերում պետական կառավարման մասին» N728-Ն հրամանագիր:

РЕЗЮМЕ

Отдельные направления повышения эффективности деятельности органов территориального управления в Республике Армения

С целью осуществления эффективного государственного управления в марзах 6-го мая 1996-го года был издан указ Президента РА «О государственном управлении в марзах Республики Армения», которым были установлены основные положения и подходы реализации государственной политики в марзах, а также круг полномочий органов осуществляющих данную политику.

После 1997-го года, в связи с новыми потребностями, предъявляемыми обществом к системе управления, а так же исходя из соображений повышения эффективности деятельности Правительства Республики Армения, в результате ряда поправок изменились роль и значение марзпетарана в системе управления, которые так и не отразились на законодательном уровне.

В статье, наряду с обоснованием необходимости принятия нового указа, представлены некоторые функции и полномочия, делегирование которых марзпету приведет к развитию системы публичного управления, что косвенным образом содействует экономическому развитию марза. Проблема совершенствования публичного управления рассмотрена так же с позиций институтов демократического общества.

SUMMARY

Separate directions of increasing the effective activity of the territorial administrative units in RA

On May 6, 1997 for effective implementation of state management, the government adopted a presidential decree on "State management in the regions of RA" which not only issued the fundamental tenets and approaches of state policy, but also elected some plenipotentiaries to carry out that policy.

Since 1997 many changes have been made in the sphere of territorial administration, which in many cases are not reflected in the legislation.

Besides claiming the necessity of the new decree adoption, the article also represents some substantial activities, the maintenance of which will lead the regional governors to the development of public administration system, which will indirectly promote regional economic development.

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիայի
իրավաբանական ֆակուլտետի համեմատական
իրավագիտության և դատավարական իրավունքի
ամբիոնի ասպիրանտ,
«Դ-Տելեկոմ» ՓԲԸ իրավաբան



ՓԱՍՏԱՐԱՆԻ ՍԱՄՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻՆ ԵՎ ՆՐԱ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԸՍՏ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ

Փաստաբանությունը իրավապաշտպան գործունեություն իրականացնող սոցիալ-հանրային ինստիտուտ է, որը կոչված է իրավաբանական օգնություն ցույց տալու ֆիզիկական և իրավաբանական անձանց, պաշտպանելու նրանց իրավունքներն ու օրինական շահերը օրենքով չարգելված բոլոր միջոցներով, ինչպես նաև նպաստել արդարադատության իրականացմանը²:

Քաղաքացիական հասարակության ձևավորման, ազատ շուկայական և մրցունակ տնտեսության ստեղծման ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի դատական պաշտպանության դերի մեծացման պայմաններում ավելի է կարևորվում փաստաբանի՝ որպես ներկայացուցչի, քաղաքացիական դատավարության մասնակցության նշանակությունը, որն էլ կարևոր երաշխիք է հանդիսանում քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների և օրինական շահերի պաշտպանման մեխանիզմում:

Փաստաբանության գործունեությունը հանդիսանում է ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի 1-ին մասի ապահովման հիմնական միջոցը, որում, մասնավորապես, ամրագրված է, որ յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Ելնելով այն հանգամանքից, որ փաստաբանների պալատը հանդիսանում է այն միակ անձանց միությունը, որը տրամադրում է իրավաբանական օգնություն՝ փաստաբանության ինստիտուտը պետք է դիտարկել փաստաբանների պալատի ներքո: 2004թ.-ի «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածով փաստաբանների պալատը սահմանվում է որպես փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող իրավաբանական անձ, որի առանձնահատկությունները սահմանվում են նույն օրենքով: Փաստաբանների պալատն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից: Այս սահմանումը

ընդգծում է փաստաբանների պալատի ինքնուրույնությունը, վերջիններիս անկախությունը պետական կառավարման մարմիններից: Իսկ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով նախատեսվեց փաստաբանների պալատի հետևյալ սահմանումը. «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը (այսուհետ՝ փաստաբանների պալատ) սույն օրենքի հիման վրա ստեղծված փաստաբանների մասնագիտական, անկախ, ինքնակառավարվող ոչ առևտրային կազմակերպություն է, որի առանձնահատկությունները սահմանվում են սույն օրենքով: Փաստաբանների պալատն իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք է բերում օրենքով սահմանված կարգով գրանցվելու պահից»: Փաստորեն, օրենսդիրը նոր օրենքում հստակորեն նշում է, որ փաստաբանների պալատը ոչ առևտրային կազմակերպություն է, այսինքն՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող կազմակերպություն: Օրենքի փոփոխությունը, համաձայն որի՝ փաստաբանների պալատը դիտարկվում է ոչ թե իրավաբանական անձ, որն ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 51-րդ հոդվածի 1-ին մասի իրենից ներկայացնում է առևտրային և ոչ առևտրային կազմակերպություն, այլ դիտարկվում է որպես ոչ առևտրային կազմակերպություն: Հետևաբար՝ օրենսդիրը այս փոփոխությամբ բացառում է փաստաբանների պալատի շահույթ ստանալու նպատակը: Իրավաբանական օգնություն տրամադրող փաստաբանների կողմից փաստաբանների պալատին տրվող հոնորարներն օգտագործվում են փաստաբանների աշխատանքների վարձատրության, տեխնիկական անձնակազմի պահպանման, կենցաղային և գրասենյակային ծախսերի, ինչպես նաև ապահովագրական և թոշակային ֆոնդերին մասհանումների համար:

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքը սահմանեց փաստաբանի կազմակերպարավա-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կան կարգավիճակը, նախատեսեց մասնագիտական խնդիրների և պարտականությունների իրականացման սահմանները, մեթոդներն ու եղանակները, պատասխանատվության չափն ու տեսակները իր կողմից իրականացվող դատավարական գործունեության որակի ու արդյունավետության համար:

Փաստաբանի ինստիտուտի ամբողջ պատմության ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս պարզել նրա հասկացությունը, էությունն ու կապը քաղաքացիական գործերով դատական գործունեության հետ, փաստաբանական գործունեությունը դարձնել ավելի արդյունավետ իրավակիրառ պրակտիկայում և լայնորեն օգտագործել քաղաքացիների և կազմակերպությունների իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար քաղաքացիական դատավարությունում:

Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 39-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիները դատարանում կարող են իրենց գործերը վարել անձամբ կամ իրենց ներկայացուցիչների միջոցով: Քաղաքացու մասնակցությունը գործին չի զրկում նրան գործով ներկայացուցիչ ունենալու իրավունքից: Այսպիսով՝ փաստաբանի ինստիտուտի գոյության անհրաժեշտությունը քաղաքացիական դատավարությունում պայմանավորված է հետևյալ պատճառներով:

1. գործերը դատարանում վարելու անհնարինությամբ (քաղաքացու հիվանդություն, իրավաբանական անիրազեկություն, անգործունակություն և այլն),

2. որակյալ իրավաբանական օգնություն ստանալու ցանկությամբ,

3. կոլեզիալ մարմինների կողմից ղեկավարվող իրավաբանական անձանց դատաքննությանը անմիջականորեն մասնակցելու անհնարինությամբ:

Ֆիզիկական կամ իրավաբանական անձինք իրավունք ունեն վարելու իրենց գործերը ինչպես ինքնուրույն, այնպես էլ ներկայացուցչի միջոցով: Այս պարագայում ընտրության իրավունքը, բնականաբար, պատկանում է այն ֆիզիկական կամ իրավաբանական անձանց, ում գործը քննվում է դատարանում: Փաստորեն, փաստաբանը կարող է մասնակցել դատական գործին ինչպես վստահորդի հետ համատեղ, այնպես էլ առանց վստահորդի, եթե վերջինս դա ցանկանում է: Մինչդեռ պետք է նշել, որ գոյություն ունեն այնպիսի դատական գործեր, որոնց դեպքում փաստաբանը դատական քննության ժամանակ չի կարող ամբողջությամբ փոխարինել վստահորդին: Դատական պրակտիկայի համաձայն՝ կողմերը հրավիրվում են դատարան անձամբ բացատրություններ տալու ամուսնալուծության, հայրության ճանաչման, ծնո-

ղական իրավունքների զրկման, աշխատանքի վերականգնման, պատվի և արժանապատվության գործերով:

Դատական պրակտիկայի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ քաղաքացիական գործերին փաստաբանի պարտադիր մասնակցությունը նպաստում է արդարադատության արդյունավետ իրականացմանը: Անհրաժեշտ է փաստել, որ եթե նախկինում բացակայում էին նորմեր, որոնք սահմանում էին փաստաբանի պարտադիր մասնակցությունը քաղաքացիական գործերով, ապա «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածով փոփոխության է ենթարկվել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածը, որի համաձայն՝ դատական ներկայացուցչությունը կամ դրա կազմակերպումը որպես պարբերաբար կամ վճարովի հիմունքներով մատուցվող ծառայություն կարող է իրականացնել միայն փաստաբանը, բացառությամբ՝

1) մերձավոր ազգականի, այդ թվում՝ ծնողի, զավակի, որդեգրողի, որդեգրվածի, հարազատ կամ ոչ հարազատ (համահայր կամ համամայր) եղբոր կամ քրոջ, պապի, տատի, բոռան, ինչպես նաև ամուսնու կամ ամուսնու ծնողի, փեսայի կամ հարսի համար անվճար ներկայացուցչություն իրականացնելու դեպքերի,

2) մերձավոր ազգականին (ազգականներին) կանոնադրական կապիտալի կեսից ավելի բաժնեմասերը պատկանող իրավաբանական անձի շահերը դատարանում ներկայացնելու դեպքերի:

Ներկայումս քաղաքացիների մեծ մասը դիմում է փաստաբանի օգնությանը հենց քաղաքացիական գործերով, որը մասամբ վկայում են ձեռնարկատերերի, իրավաբանական անձանց ներկայացուցիչների որակյալ օգնության համար դիմումների անը:

Ընդհանրապես, փաստաբանը, որը համաձայնություն է կնքել վստահորդի հետ, չպետք է մոռանա, որ իր գլխավոր խնդիրը վստահորդին մասնագիտական իրավական օգնության տրամադրումն է, որի վերջնական նպատակն էլ համարվում է համապատասխան դատական գործով դրական արդյունքի հասնելը: Իսկ դրա համար փաստաբանին քաղաքացիական գործերով դատական քննության նախապատրաստման ընթացքում անհրաժեշտ է պահպանել մի շարք պահանջներ:

Առաջինը՝ որոշել հայցի առարկան ու հիմքը: Առարկա ասելով՝ հասկանում ենք հայցվորի պահանջն ուղղված պատասխանողին: Հայցի հիմքը այն հանգամանքներն են, որի վրա հայցվորը հիմնվում է: Հայցի առարկան և հիմքը փաստաբանի կողմից պետք է պարտադիր կերպով արտացոլվեն հայցի մեջ:

Երկրորդը՝ հստակ սահմանել տվյալ գործի ապացուցման առարկան ու սահմանները: Ապացուցման առարկայի ու սահմանների ճիշտ որոշումը համարվում է գործի հաջող անցկացման համար անհրաժեշտ և կարևոր նախապայման:

Ինչպես հայտնի է, ինքնին ապացուցման գործընթացը բաղկացած է չորս տարրերից և իր մեջ ներառում է ապացույցների հավաքման, ներկայացման, հետազոտման և գնահատման գործողությունները⁴:

Ապացույցներ հավաքելը փաստաբանի կողմից իրականացվում է դրանց փնտրման և վերհանման միջոցով: Ընդ որում, ապացույցների առաջնային վերհանումը տեղի է ունենում փաստաբանի և վստահորդի գրույցի ժամանակ, որի ընթացքում, ուսումնասիրելով առկա նյութերը, փաստաբանը պետք է պատկերացում կազմի հանգամանքների փաստացի առկայության մասին:

Համաձայն «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի՝ փաստաբանն իրավունք ունի դիմելու պետական, տեղական ինքնակառավարման մարմիններին, անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց՝ իրավաբանական օգնություն ցույց տալու համար անհրաժեշտ փաստաթղթեր (տեղեկություններ) ստանալու պահանջով: Պետական և տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տասնօրյա ժամկետում փաստաբանին տրամադրել պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) կամ դրանց պատճենները, բացառությամբ, երբ այդ մարմինների գործունեությունը կարգավորող օրենքներով այլ բան է նախատեսված, կամ պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները) օրենքով պահպանվող գաղտնիք են պարունակում: Փաստաթղթերի (տեղեկությունների) տրամադրման մերժումը պետք է տրվի գրավոր եւ պատճառաբանված:

Դրանից զատ ապացույցների վերհանման նպատակով փաստաբանը իրավասու է միջնորդությամբ դիմել դատարանին ապացույցներ պահանջելու համար:

Համաձայն քաղաքացիական դատավարության օրենսգրքի՝ կողմերի, ինչպես նաև նրանց ներկայացուցիչների կողմից ապացույցներ հավաքելը իրականացվում է դրանց ներկայացման ձևով: Դրա համար փաստաբանի՝ իբրև ապացուցման դատավարական համակարգում դատական ներկայացուցչի առաջին գործողությունը համարվում է արդեն իսկ վերհանված ապացույցների ներկայացումը դատարան: Բացի այդ, ապացույցների վերհանման և դրանք դատարանին ներկայացնելու գործընթացը կարող է շարունակվել նաև դատական նիստերի ընթացքում միջնորդությամբ հանդես գալու միջոցով (վկաների հարցաքննություն, գործին գրավոր ապացույցների, տարբեր փորձաքն-

նությունների եզրակացությունների կցում):

Դատական քննությանը պատրաստվելու ընթացքում փաստաբանը պետք է իր վստահորդին պարզաբանի գործի նկատմամբ իրենց դիրքորոշումը, իսկ դատական քննության ժամանակ պատշաճ վարքագիծ ապահովելու համար նաև պետք է պարբերաբար ուղղորդի նրա գործողությունները ճիշտ խորհուրդների միջոցով:

Այս ամենից բացի, դատական քննության նախապատրաստական փուլում փաստաբանին անհրաժեշտ է մշակել գործի վարման ռազմավարություն և մարտավարություն, քանզի դատական քննության ընթացքում նա պետք է լուծի մի կարևորագույն հարց, ասել է թե ապացույցների և այլ փաստարկների միջոցով համոզի դատարանին, որ իր վստահորդը իրավացի է: Իսկ դա անհնար է առանց տրամաբանության, հոգեբանության, մանկավարժության և իրավունքի, օրենքների բավարար իմացության: Հենց դրանք են հանդիսանում դատական գործում իր և, հետևաբար, իր վստահորդի հաջողության գրավականը:

Ներկայումս, փաստաբանական պրակտիկայում գործի վերլուծության և գործի վերաբերյալ դիրքորոշման ընտրության հնարքները անմիջականորեն կապված են մեկը մյուսի հետ: Վերլուծության արդյունքները ազդում են դիրքորոշման ընտրության վրա, բայց գործի վերաբերյալ դիրքորոշումը, իր հերթին, պահանջում է նորից ու նորից վերադառնալ վերլուծությանը: Գործի վերլուծությունը և դիրքորոշման ընտրությունը, իսկ այնուհետև ընտրված դիրքորոշման իրականացումը, փաստացի կազմում են փաստաբանի՝ գործի վերաբերյալ աշխատանքի բուն նպատակը: Դատական գործի վերլուծությունն իրականացվում է, որպես կանոն, առավել արդյունավետ դիրքորոշման ընտրության, ռազմավարության և գործի վարման տեխնիկայի որոշման, ինչպես նաև դատական գործի ամբողջ ընթացքում իրականացվելիք աշխատանքների պլանավորման համար:

Դրա համար անհրաժեշտ է առաջին հերթին պարզել, թե ինչ է դատական գործի դիրքորոշման ընտրությունը, ինչից է այն կախված և ինչպես է առաջանում: Անհրաժեշտ է հասկանալ, թե ինչու է դատական վարույթի ընթացքում առաջանում այնպիսի իրավիճակ, երբ օբյեկտիվ իրականության միևնույն փաստերի վերաբերյալ բացարձակ տարբեր, բայց իրենց ճշմարտացիության վերաբերյալ միևնույն վստահությամբ խոսում են դատավարության հակադիր շահեր ունեցող կողմերը: Արդյո՞ք դա նշանակում է, որ կողմերից մեկը ակնհայտ սխալ է, և դատարանի խնդիրը միայն այն է, որ որոշի, թե որ կողմն է սխալ: Ներկայացվում է, որ դատական գործով դիրքորոշման ընտրության հարցը բավականին խորն է և պահանջում է քննարկում ոչ միայն մասնագիտական հնարքների

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

տեսանկյունից, այլ նաև նրա տեսական բնույթի հասկացությունը :

Քաղաքացիական գործով դիրքորոշման ընտրությունը պայմանավորված է քաղաքացիական գործերի առանձնահատկությամբ և քաղաքացիական իրավահարաբերությունների յուրահատկությամբ: Ինչպես հայտնի է, քաղաքացիական գործերի քննության շրջանակներում դատարանը լուծում է իրավունքի վերաբերյալ վեճեր: Քաղաքացիական վեճը անձի անձնական իրավունքի մասին վեճն է, որը համարվում է նյութաիրավական իրավահարաբերության սուբյեկտ: Այդ վեճը առաջանում է քաղաքացիական, ընտանեկան, բնակարանային, աշխատանքային, հողային և այլ իրավահարաբերություններից: Վերոնշյալ իրավահարաբերությունների համար ընդհանուր է նրանց մասնավոր իրավական բնույթը:

Քաղաքացիական գործերին մասնակցում են կողմեր, որոնք ունեն տարբեր շահեր և հակադիր դիրքորոշումներ: Յուրաքանչյուր կողմ ձգտում է քաղաքացիական գործն իր օգտին ավարտին հասցնել և այդ նպատակին հասնելու համար փորձում է հավաքել և ներկայացնել դատարանին բոլոր փաստերը, որոնք ամրապնդում են իր դիրքերը: Եթե այդ դեպքում կողմը ներկայացնի մտացածին փաստեր կամ խեղաթյուրի իրականությունը, մյուս կողմը կարող է բացահայտել այն, որում նա ունի անձնական հետաքրքրություն և իր շահը:

Կոնկրետ գործով դիրքորոշման ընտրությանն անցնելիս՝ փաստաբանին անհրաժեշտ է ծանոթանալ մասնավոր-իրավական հարաբերության առանձնահատկություններին և հաշվի առնել դրանք դատական գործի քննության բոլոր փուլերում:

Եվ, այսպիսով, հետաքրքիր է պարզել, թե ինչ է իրենից ներկայացնում քաղաքացիական գործով դիրքորոշման ընտրությունը: Կարելի է առաջարկել հետևյալ բնորոշումը. «Քաղաքացիական գործով դիրքորոշումը դա կողմի՝ փաստացի իրավիճակի և հայցում առկա իրավական պահանջի վերաբերյալ ունեցած մոտեցումն է, ինչպես նաև այդ մոտեցման հիմնավորումը» :

Այն դեպքերում, երբ վեճի հիմքում ընկած փաստերը ակնհայտ չեն, պրակտիկայում մեծ փորձ ունեցող փաստաբանները կարող են փաստացի իրավիճակների վերաբերյալ հորինել «առասպելներ», որոնք հաստատում են իրենց մոտեցումը (դիրքորոշումը): Այսպիսով, օրինակ, փաստաբանը ստիպված է ջանք գործադրել այն տարբերակի համար, թե ինչու անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում, որը հայցվորը պահանջում է անվավեր ճանաչել և վերականգնել մինչպայմանագրային հարաբերությունները, նշված է իրականում վճարված գումարից երկու անգամ քիչ գումար :

Այսպիսով, փաստաբանը, անցնելով քաղաքացիական գործով դիրքորոշման ընտրությանը, վերոնշյալ գործունեությունն իրականացնում է փուլերով՝ սկսած հաճախորդի պահանջի և նպատակի ճշգրտումից մինչև վերջնական իրավական պահանջի կազմումն ու ձևակերպումը:

Քաղաքացիական գործով դիրքորոշման ընտրության փուլերը հետևյալն են՝

1. խնդրի ճշգրտում և կողմի պահանջի ու նպատակի պարզում,
2. ի սկզբանե ներկայացված ապացույցների վերլուծություն,
3. տվյալ քաղաքացիական գործով կիրառման ենթակա իրավական նորմի փնտրում,
4. գործով ապացույցների բազայի ձևավորում,
5. տարբերակի ընտրված մոտեցումը մեկնաբանող փաստերի առաջաշարում և կողմի իրավական պահանջի ձևավորում :

Փաստաբանի դատական ճառը պետք է լինի համոզիչ՝ հիմնված ապացույցների օբյեկտիվ գնահատման և գործի փաստացի հանգամանքների վրա: Ընդ որում, փաստաբանին իր ճառում անհրաժեշտ է ոչ միայն ցույց տալ իր վստահորդի դիրքորոշման հիմնավորվածությունը ապացույցների համակցությամբ, այլ նաև պարտադիր կերպով իրավական գնահատական տալ առաջացած վեճին, մատնանշել այն իրավական նորմերը, որոնցով անհրաժեշտ է առաջնորդվել վեճի լուծման համար:

Դատական նիստի ընթացքում փաստաբանը պետք է ձգտի, որ դատական քննությունը լրիվ և օբյեկտիվ կերպով արտացոլվի դատական նիստի արձանագրության մեջ: Նա պարտավոր է ոչ միայն ծանոթանալ դրան, այլ նաև հիմքերի առկայության դեպքում նկատողություններով ու առարկություններով հանդես գալ:

Քաղաքացիական դատավարության օրենսդրության վերլուծությունից պարզ է դառնում նաև, որ փաստաբանին դատական նիստի վայրի և ժամանակի մասին ծանուցման պարտականությունը դրվում է վստահորդի վրա: Այդ իսկ պատճառով փաստաբանի բացակայությունը դատական նիստին դատարանին չի գրկում իրավունքից դատական նիստն անցկացնել առանց վերջինիս մասնակցության, եթե, իհարկե, նրա վստահորդը պատշաճ ծանուցվել է դատական նիստի վայրի և ժամանակի մասին: Այս կանոնից բացառություն լինում է միայն այն դեպքում, երբ գործին մասնակցում է անգործունակ անձանց օրինական ներկայացուցիչները: Այս դեպքում դատարանի կողմից պատշաճ պետք է ծանուցվեն հենց օրինական ներկայացուցիչները:

Քաղաքացիական դատավարության օրենսդրության վերոնշյալ նորմը պրակտիկայում

առաջացնում է բացասական հետևանքներ: Մասնավորապես, այս նորմի կիրառումը որոշ դեպքերում կարող է հանգեցնել անձանց սահմանադրական իրավունքների խախտմանը: Օրինակ, քաղաքացին դիմել է դատարան անվավեր ճանաչելու կնքված առուվաճառքի գործարքը: Ելնելով այն հանգամանքից, որ նա չի տիրապետում համապատասխան օրենսդրությանը՝ քաղաքացին դիմում է փաստաբանի օգնությանը: Այնպես է ստացվում, որ դատական նիստի օրը փաստաբանը չի կարողանում ներկայանալ դատարան ծանր հիվանդության պատճառով, որի արդյունքում դատարանը, քաղաքացիական գործը քննելուց հետո, որոշում է կայացնում ոչ ի օգուտ հայցվորի: Փաստացի օրենսդրական բացի պատճառով խախտվում են քաղաքացու սահմանադրական իրավունքները, այսինքն՝ նա գրկվում է դատական կարգով իր իրավունքները վերականգնելու հնարավորությունից:

Այդ իսկ պատճառով, հաշվի առնելով քաղաքացիների իրավունքների ապահովման կարևորությունը, օրենսդիրը պետք է երաշխավորի դատարանում քաղաքացիների պատշաճ իրավաբանական օգնություն ստանալու իրավունքի դրսևորումները: Դրա համար անհրաժեշտ է օրենսդրական փոփոխություն կատարել քաղաքացիական դատավարության օրենսգրքում, և փաստաբանի հարգելի բացակայությունը սահմանել որպես հիմք՝ դատական նիստը հետաձգելու համար: Մասնավորապես, քաղաքացիական դատավարության օրենսգրքի 119-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետը լրամշակել հետևյալ բովանդակությամբ.

«Դատարանն իրավունք ունի հետաձգել գործի քննությունը, եթե այն չի կարող քննվել տվյալ նիստում, մասնավորապես, գործին մասնակցող անձանցից որևէ մեկի, այդ թվում՝ **փաստաբանի**, վկաների, փորձագետների, թարգմանիչների, բացակայության պատճառով»:

Ելնելով վերոգրյալից՝ անհրաժեշտ է փաստել, որ նորմի առկայությունը բխում է միմիայն վստահորդի շահերից և նպաստում է վերջինիս սահմանադրական իրավունքների ապահովմանը:

Եզրակացնելով՝ կարելի է նշել, որ փաստաբանական գործունեությունը, որը ՀՀ-ում կարգավորվում է «Փաստաբանության մասին» 2004թ.-ի օրենքով, հանդիսանում է ֆիզիկական և իրավաբանական անձանց խախտված և վիճարկվող իրավունքների, օրինական շահերի պաշտպանության կարևորագույն մեխանիզմներից մեկը: Փաստաբանական գործունեությունը իրավափարպերությունների անդադար զարգացմանը զուգահեռ մշտապես կատարելագործման կարիք ունի: Այս անհրաժեշտությունից ելնելով՝ 2011թ.-ի դեկտեմբերի 8-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունվեց «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքը, որով օրենսդիրը ևս մեկ քայլ կատարեց իրավական պետության ձևավորման գործընթացում՝ փաստաբանությունը և փաստաբանական գործունեությունը դարձնելով ավելի ճկուն և գործուն ինստիտուտ անձանց սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության համար:

¹ Հոդվածը զեկույցի տեսքով ներկայացվել է 2010թ.-ի ապրիլի 15թ.-ին ԵՊՀ իրավաբանական ֆակուլտետի կողմից կազմակերպված «Փաստաբանության արդի վիճակը և զարգացման միտումները ՀՀ-ում» թեմայով միջբուհական գիտաժողովում
² Տե՛ս ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Գ.Ս. Ղազինյանի խմբ., Երևան, 2008թ., էջ 414:
³ Տե՛ս Դավթյան Ա.Հ. Փաստաբանի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը, Երևան, 2000թ., էջ 3:
⁴ Տե՛ս Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևան, 2007թ., էջ 341:
⁵ Տե՛ս Колмацуй А.А. Понятие позиции по делу, формируемой защитником в ходе подготовки к судебному заседанию//Правовые проблемы укрепления российской государственности: Сб. статей/Под ред. М. . Свиридова. Томск, 2005. Ч. 29. С. 104-107.
⁶ Տե՛ս Вайпан В.А. Настольная книга адвоката: постатейный комментарий к Федеральному закону об адвокатской деятельности и адвокатуре, нормативно-методические материалы. М.: Юстицинформ, 2006. С. 87.
⁷ Տե՛ս Адвокат: навыки профессионального мастерства / Под ред. Л.А. Воскобитовой, И.Н. Лукьяновой, Л.П. Михайловой. М: Волтерс Клувер, 2006. С. 147.
⁸ Տե՛ս Стольников М.В. Справочник адвоката по гражданскому процессу. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2006. С.80.

Գրականության ցանկ

1. ՀՀ դատարանակազմությունը և իրավապահ մարմինները, Գ.Ս. Ղազինյանի խմբ., Երևան, 2008թ.:
2. Ազարյան Ե. Ռ. Փաստաբանության հիմունքները, Երևան, 2006 թ.:
3. Պետրոսյան Ռ.Գ. Հայաստանի քաղաքացիական դատավարություն, Երևան, 2007թ.:
4. Դավթյան Ա.Հ. Փաստաբանի մասնակցությունը քաղաքացիական դատավարությանը, Երևան, 2000թ.:
5. Вайпан В.А. Настольная книга адвоката: постатейный комментарий к Федеральному закону об адвокатской

www.lawinstitute.am

- деятельности и адвокатуры, нормативно-методические материалы. М.: Юстицинформ, 2006.
6. Адвокат: навыки профессионального мастерства/ Под ред. Л.А. Воскобитовой, И.Н. Лукьяновой, Л.П. Михайловой. М: Волтерс Клувер, 2006.
7. Стольников М.В. Справочник адвоката по гражданскому процессу. М.: ТК Велби, Изд-во Проспект, 2006.
8. Колмацуй А.А. Понятие позиции по делу, формируемой защитником в ходе подготовки к судебному заседанию//Правовые проблемы укрепления российской государственности: Сб. статей/Под ред. М.К. Свиридова. Томск, 2005. Ч. 29.

РЕЗЮМЕ

Участие адвоката в гражданских делах и возможности улучшения статуса законодательством РА

Значительно увеличивается важность участия адвоката, как представителя, в гражданском судопроизводстве в условиях образования гражданского общества, возрастающей роли судебной защиты прав, свобод и законных интересов физических и юридических лиц, что и является важной гарантией прав и законных интересов граждан и организаций в механизме защиты. Адвокатская деятельность всегда имеет необходимость улучшения параллельно постоянной развитию правоотношений. Связи с этим, 8 декабря 2011 года Национальное Собрание РА приняло закон “ О внесении изменений и дополнений в законе “ Об адвокатуре” ”.

SUMMARY

The participation of the lawyer in the civil cases and the capabilities of improving its status according to the RA legislation

Throughout the civil society foundation, creation of free marketing and competitive economy and under the conditions of increasing the role of judicial defense of rights, liberty and lawful interests of physical persons and legal entities, noticeably raises the importance of the lawyer`s participation as a representative in the civil proceedings, which is an important guarantee of rights and lawful interests of the citizens and the organizations in the defense mechanism. The advocacy needs permanent improvement parallel to the constant development of legal relationship. Based on this requirement on December 8, 2011 the RA Parliament adopted law on Making amendments and additions in the RA law on Advocacy.

ԳԵՎՈՐԳ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Ֆրանսիական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի քաղաքացիական իրավունքի ամբիոնի դասախոս,
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԸ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ԶԱՂԱԶԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (հետագա շարադրանքում ՄՊԸ), ինչպես նաև քաղաքացիական իրավունքի մնացած բոլոր սուբյեկտների մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերությունների պայմանավորված է նրանց իրավասուբյեկտությամբ: Քաղաքացիական իրավահարաբերություններում իրավասուբյեկտությունը ՄՊԸ-ների՝ որպես լիիրավ մասնակիցների իրավական կարգավիճակը սահմանող հիմնական իրավական ինստիտուտն է: Իրավասուբյեկտությունը, որպես իրավաբանական կատեգորիա, իր հաստատուն տեղն է գտել քաղաքացիական իրավունքում: Այն գործունեության իրավական հիմք է հանդիսանում առևտրային բոլոր կազմակերպությունների, այդ թվում՝ ՄՊԸ-ների համար: Ըստ Ն. Բ. Մատուզովի. «ԽՍՀՄ-ի օրոք իրավասուբյեկտությունը, որպես այդպիսին, խորապես և բազմակողմանիորեն ուսումնասիրվել է ֆիզիկական անձանց շրջանակներում, իսկ իրավաբանական անձանց իրավասուբյեկտությունը հազվադեպ է դպրձել ուսումնասիրության ինքնուրույն առարկա»¹: Ներկայումս իրավասուբյեկտության բովանդակության վերլուծության վերաբերյալ միասնական մոտեցում մշակված չէ ո՛չ իրավունքի ընդհանուր ուսմունքներում և ո՛չ էլ իրավունքի առանձին ճյուղերի կողմից: Գիտնականները միաբան են միայն այնքանով, որ ոչ ոք չի ժխտում իրավասուբյեկտություն կատեգորիայի գոյությունը: Սակայն, իրավասուբյեկտության և դրա բովանդակության վերաբերյալ ուսումնասիրողներն ունեն որոշ տարածայնություններ: Գիտնականների մեծ մասի կարծիքով «իրավասուբյեկտությունը» ընդհանուր հասկացություն է, որի բաղկացուցիչներն են «իրավունակությունն» ու «գործունակությունը»²: Յա. Ռ. Վեբերսի վիճելի տեսակետի համաձայն՝ «Իրավունակությունն ու գործունակությունը ցանկացած իրավահարաբերության մեջ հանդիսանում են իրավունքների ծագման ու գոյության հիմքը, սակայն որոշ իրավահարաբերությունների մեջ իրավունքի սուբյեկտը կարող է օժտված լինել միայն իրավունակությամբ, եթե հնարավոր է լրացնել գործունակության բացակայությունը»³: Իհարկե, ինչ վերաբերում է ֆիզիկական անձանց, ապա հեղինակի հետ լիովին համաձայն ենք: Այսպես, անգործունակ ճանաչված քաղաքացին, փաստորեն, պահպանում է

իրավունակությունը, սակայն գործունակությունը նրա փոխարեն իրականացնում է անգործունակի խնամակալը: Սակայն, այլ է, երբ խոսքն իրավաբանական անձանց մասին է, քանզի իրավաբանական անձի կամքը ձևավորում են նրա մարմինները և ի սկզբանե հենց իրենք, այսինքն ֆիզիկական անձինք, որոնք ընտրվում կամ նշանակվում են իրավաբանական անձի գործերը կառավարելու համար իրագործում են իրավաբանական անձի գործունակությունը: Այդ հարցի կապակցությամբ հստակ մոտեցում ունի Յու. Կ. Տոլստոյը, որի համաձայն՝ «Անձին քաղաքացիական իրավունքի սուբյեկտ ճանաչելու համար նրան անհրաժեշտ է օժտել քաղաքացիական իրավասուբյեկտությամբ»⁴: Դրա հետ մեկտեղ Օ. Ա. Կրասավչիկովն իրավացիորեն նշում է. «Իրավունակությունն ընդհանուր հիմք է, որով որոշվում են իրավունքների բնույթն ու բովանդակությունը, այն գտնվում է որոշակի սուբյեկտի տիրապետության տակ, սակայն իրավասուբյեկտություն հասկացությունը կազմված է երկու հիմնական տարրերից՝ իրավունակությունից և գործունակությունից»⁵:

Ըստ մեզ՝ իրավունակություն կատեգորիան իրավաբանորեն ենթադրում է այն իրավունքների շրջանակը, որոնցով կարող են օժտվել իրավունքի կոնկրետ սուբյեկտները, և դրա սահմանափակումը նշանակում է սուբյեկտների կողմից իրավունքների ձեռքբերման սահմանափակություն, իսկ գործունակության բացակայությունը /սահմանափակումը/ առաջ է բերում սուբյեկտների կողմից իրենց սեփական գործողություններով իրավունքների և պարտականությունների ձեռքբերման և իրականացման անհնարիություն:

«Իրավասուբյեկտություն» կատեգորիան ոչ թե ընդհանրական, այլ անհատական բնույթի է: Դրա անհատական լինելը առաջին հերթին բացատրվում է նրանով, որ իրավունքի տարբեր սուբյեկտների համար դրա բաղադրիչներն /իրավունակություն, գործունակություն/ ունեն տարբեր ծավալներ: Այդ առումով լիովին համաձայն ենք Մ. Վ. Կրոտովի հետ, որը գրում է. «Իրավասուբյեկտությունը ոչ թե իրավաբանական որակների հավաքական է, որոնց ամբողջությամբ պետք է օժտված լինեն քաղաքացիական իրավունքի սուբյեկտները, այլ օրենքով սահմանված հատկանիշ, որով օժտվում են

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

առանձին սուբյեկտները քաղաքացիական շրջանառությանը մասնակցելու համար» :

Ժամանակակից քաղաքացիական իրավունքի գիտությունը իրավասուբյեկտությունը դիտում է որպես սուբյեկտի համար քաղաքացիական իրավահարաբերությունների մասնակցելու սոցիալական, իրավական հնարավորություն: Ինչպես նշում է Վ. Ս. Եմը՝ «Իրավասուբյեկտությունն իր բնույթով իրավունքի ընդհանրական տեսակ է, որն ապահովված է պետության կողմից նյութական և իրավաբանական երաշխիքներով: Իրավասուբյեկտությունը պետության և սուբյեկտների միջև երկարատև կապի արդյունք է, և հենց այդ կապի առկայության ուժով ցանկացած իրավասուբյեկտ անձի վրա դրված են այնպիսի սկզբունքային պարտականություններ, ինչպիսիք են օրենքների պահպանումն ու քաղաքացիական իրավունքների իրականացումը՝ դրանց սոցիալական նշանակությանը համապատասխան: Իրավունակությունը քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու ու դրանց համապատասխան պարտականություններ կրելու սուբյեկտի իրավունքն է, իսկ գործունակությունը՝ սուբյեկտի՝ սեփական գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու ու դրանց համապատասխան պարտականություններ կրելու իրավունքը» :

Բացի այդ, գործունակությունը ներառում է նաև դեյիկտանակությունը, այսինքն՝ քաղաքացիական իրավախախտումներ թույլ տալու դեպքում սուբյեկտի կողմից ինքնուրույն գույքային պատասխանատվություն կրելու ունակությունը: Քաղաքացիական իրավունքը, իրավաբանական անձանց սոցիալ-տնտեսական կյանքի որևէ բնագավառում գործելու հնարավորություն վերապահելով, նրանց օժտում է համապատասխան քաղաքացիական իրավունքներով ու պարտականություններով: Չի բացառվում, որ իր գործունեության իրականացման ընթացքում իրավաբանական անձի կողմից իր իրավունքների չարաշահման կամ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով վնաս պատճառի քաղաքացիներին և իրավունքի այլ սուբյեկտների: Այդպիսի դեպքերում իրավաբանական անձը կրում է իրավախախտման հետևանքով իրավունքի այլ սուբյեկտների պատճառով վնասի հատուցման համար պատասխանատվություն: Ընդհանրապես, իրավաբանական անձի կողմից իրավախախտումներն, ըստ իրենց բնույթի և ծագման հիմքերի, բաժանվում են երկու խմբի՝ պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետ կապված իրավախախտումներ և իրավախախտումներ, որոնք առաջանում են այլ սուբյեկտների պատճառով վնասի հետևանքով: Դրան համապատասխան իրավաբանական անձի քաղաքացիաիրավական պատասխանատվությունը լինում է երկու տեսակի՝ պայմանագրային և արտապայմանագրային (դեյիկտային) պատասխանատվություն: Քաղաքացիական իրավունքի ցանկացած սուբյեկտի, այդ թվում՝ ՍՊԸ-ի իրավաբանական պատասխանատվությու-

նը առաջանում է այն դեպքում, երբ առկա է որոշակի փաստական հանգամանքների /հիմքերի կամ պայմանների/ համակցություն, որը կոչվում է քաղաքացիական իրավախախտման կազմ:

ՍՊԸ-ի՝ որպես իրավունքի սուբյեկտի իրավասուբյեկտությունը բազմաբովանդակ է, քանի որ մասնակցում է տարբեր իրավահարաբերությունների: Իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելով՝ ընկերությունը դառնում է քաղաքացիական, վարչական, ֆինանսական, աշխատանքային և այլ իրավահարաբերությունների մասնակից: Չնայած դրան՝ ընկերության իրավասուբյեկտությունը քաղաքացիական իրավական բնույթի է, քանի որ այն ամենից առաջ քաղաքացիաիրավական կատեգորիա է, և կազմակերպությունը ստեղծվում է քաղաքացիական շրջանառությունում որոշակի պահանջներ բավարարելու նպատակով: Այս առումով լիովին համաձայն ենք Լ. Գրոսի հետ, որի կարծիքով. «Աշխատանքային և ֆինանսական իրավունքում իրավաբանական անձի ունեցած իրավասուբյեկտությունը բխում է քաղաքացիաիրավական իրավասուբյեկտությունից»: Իսկապես, ՍՊԸ-ի ստեղծումը, դրա գործունեությունն ու դադարումը կարգավորվում են քաղաքացիական իրավունքի նորմերով: Ընկերությունը վարչական, հարկային, աշխատանքային և այլ իրավահարաբերություններին մասնակցում է այնքանով, որքանով ճանաչվում է որպես քաղաքացիական իրավունքի սուբյեկտ՝ իրավաբանական անձ: Այլ կերպ ասած՝ ՍՊԸ-ի մասնակցությունն այլ իրավահարաբերությունների անհնար է նրա քաղաքացիական իրավասուբյեկտությունից:

ՍՊԸ-ի՝ որպես իրավունքի արհեստական սուբյեկտի և ֆիզիկական անձի իրավունակության բնույթի ու բովանդակության միջև կան էական տարբերություններ: Այսպես, քաղաքացու իրավունակությունը, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգրք) 20-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, քաղաքացիական իրավունքներ ունենալու և պարտականություններ կրելու ունակությունն է, որը բոլոր քաղաքացիների համար ճանաչվում է հավասարապես: Այսինքն՝ քաղաքացու իրավունակությունը ցանկացած քաղաքացուն պատկանող և նրանից անօտարելի օբյեկտիվ հնարավորությունն է՝ ունենալու օրենքով թույլատրելի որոշակի իրավունքներ և կրելու դրանց համապատասխան պարտականություններ այնքանով, որքանով դրանք սահմանափակված չեն օրենքներով: Օրինակ, ըստ ՀՀ Սահմանադրության՝ սահմանադրական դատարանի անդամը և դատավորը իրավունք չունեն զբաղվելու ձեռնարկատիրական գործունեությամբ: Քաղաքացու իրավունակությունն ընդունված է անվանել համապարփակ կամ ընդհանուր իրավունակություն, որի ուժով քաղաքացին կարող է իրականացնել դրա բովանդակության մեջ մտնող ցանկացած իրավունք:

Ի տարբերություն քաղաքացիների՝ ՍՊԸ-ի մասնակցությունը քաղաքացիական իրավահարաբերություններին որոշակիորեն սահմանափակ է,

այսինքն՝ ունի ընդգծված սահմաններ, որոնք էլ կանխորոշում են իրավաբանական անձի իրավունակության հատուկ բնույթը: ՄՊԸ-ն իր իրավունակությամբ կարող է մասնակցել միայն քաղաքացիական որոշակի իրավահարաբերությունների, քանի որ կարող է ձեռք բերել ու իրականացնել միայն օրենքով սահմանված այնպիսի իրավունքներ և պարտականություններ, որոնք համապատասխանում են ընկերության կանոնադրությամբ սահմանված նրա գործունեության առարկային, բովանդակությանն ու բնույթին:

Իրավաբանական անձանց հատուկ իրավունակության սկզբունքն ամրագրված է Օրենսգրքի 52-րդ հոդվածի 1-ին կետով, որի համաձայն՝ իրավաբանական անձը կարող է ունենալ իր հիմնադիր փաստաթղթերով նախատեսված գործունեության նպատակներին համապատասխան քաղաքացիական իրավունքներ և կրել այդ գործունեության հետ կապված պարտականություններ:

«Իրավաբանական անձի իրավունակության հատուկ կամ, այլ կերպ ասած, նպատակային բնույթը պատմականորեն պայմանավորված է նրանով, որ կապիտալիզմի զարգացման նախնական փուլում կորպորացիաները ստեղծվում էին թույլտվական եղանակով: Բացի այդ իրավունքների սահմանափակումը բացատրվում է իրավաբանական անձի արհեստական բնույթով»:

Ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունակությունը օբյեկտիվ իրավունքի ծնունդ են, սակայն, եթե քաղաքացուն անհրաժեշտ է ընդհանուր իրավունակություն, քանի որ նա իր միանձնյա կամքով կարող է իր առջև դնել բազմատեսակ խնդիրներ և անցնել մեկից մյուսին, ապա իրավաբանական անձը ստեղծվում է մեկ կամ մի քանի անձանց կամքով, որոնք, իրավաբանական անձ ստեղծելով, իրենց առջև դնում են որոշակի նպատակների հասնելու հստակ խնդիրներ:

Ինչպես ցանկացած իրավաբանական անձի, այնպես էլ ՄՊԸ-ի իրավունակությունը հատուկ բնույթի է, այսինքն՝ նա իրավունակ է սուսկ այն նպատակի շրջանակներում, որի համար ստեղծվել է: Ինչպես նշում է Վ. Ի. Սինայսկին. «Իրավաբանական անձը միշտ պետք է օժտված լինի հատուկ իրավունակությամբ, որպեսզի չիշխի ընդհանուր իրավունակությամբ օժտված ֆիզիկական անձանց»:

Իրավաբանական անձի հատուկ իրավունակության սկզբունքը իմպերատիվ կերպով սահմանված էր նաև ՀՄՍՀ 1964 թվականի քաղաքացիական օրենսգրքի 27-րդ հոդվածով, որի համաձայն՝ իրավաբանական անձն օժտված էր քաղաքացիական իրավունակությամբ՝ իր գործունեության համար սահմանված նպատակներին համապատասխան: Այդ նույն Օրենսգրքի 50-րդ հոդվածը սահմանում էր, որ անվավեր է իրավաբանական անձի կնքած այն գործարքը, որը հակասում է նրա կանոնադրության մեջ նշված նպատակներին:

Որպես իրավունքի սուբյեկտ՝ ՄՊԸ-ն սոցիալական իրականություն է, հասարակության զար-

գացման անհրաժեշտ պայման: Սակայն հասարակական կյանքը և ինքը՝ իրավունքը, կամային գործունեությունից դուրս գրվում են իրենց իմաստից: Մարդկանց խումբը միավորող նպատակը հասարակական անհրաժեշտություն է և առանձնանում է այլ նպատակներից: Օբյեկտիվորեն պայմանավորված և մարդկանց գիտակցությամբ ընդունված լինելով՝ այդ նպատակը դառնում է նրանց գործունեության որոշիչը, քանի որ դրան հասնելը պահանջում է կամային ջանքերի գործադրում: Այդ պատճառով ոչ միայն մարդկանց տվյալ խմբի կամ առանձին անհատի կամքն է որոշում իրավաբանական անձի նպատակը, այլ ինքը՝ գոյություն ունեցող նպատակն է որոշում և ուղղորդում այդ կամքի իրականացմանն ուղղված գործունեությունը:

Ուսումնասիրելով իրավաբանական անձի ընդհանուր և հատուկ իրավունակության իրավական հիմքերը՝ գիտնականներից շատերը հաշվի չեն առնում այն հանգամանքը, որ իրավունակության բովանդակությունը կազմում են ոչ թե փաստացի իրավունքներն ու պարտականությունները, այլ միայն իրավունքներ ձեռք բերելու և դրանց համապատասխան պարտականություններ կրելու սուբյեկտների հնարավորությունը: Այսինքն՝ իրավունակությունը յուրաքանչյուր սուբյեկտի համար ընդամենը իրավունքի տիրապետման անհրաժեշտ պայման է՝ սուբյեկտիվ իրավունքի անհրաժեշտ նախապայման: Այս առումով չի կարելի համաձայնել այն կարծիքի հետ, ըստ որի՝ «Իրավաբանական անձի իրավունակությունը նրա իրավունքների և պարտականությունների ամբողջությունն է, որոնք կազմակերպության կողմից օգտագործվում են ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու համար»: Գրեթե նույնպիսի թյուրըմբռնում է պարունակում նաև Կ. Տոտյևի այն պնդումը, թե. «Լիցենզիայի հիման վրա ծագող իրավաբանական անձի իրավունակությունը հատուկ չէ, այլ լրացուցիչ, քանի որ ձեռնարկատերը իր ընդհանուր իրավունակությունը լրացնում է նոր հնարավորություններով»: Քննարկվող հարցի վերաբերյալ ճիշտ դիրքորոշում ունի Գ. Թոսունյանը, ըստ որի՝ «Իրավաբանական անձի կողմից իրավունքներ ձեռք բերելու և պարտականություններ կրելու նախապայմանը նրա իրավունակությունն է»:

ՄՊԸ-ի հատուկ իրավունակության բովանդակության հստակեցումը, մեր կարծիքով, հնարավոր կդառնա օրենսդրի կողմից օգտագործվող տերմինների պարզաբանման միջոցով: Քաղաքացիական օրենսգրքին օգտագործում է հետևյալ տերմինները՝ «գործունեության նպատակ», «գործունեության տեսակ» /Օրենսգրքի 52-րդ հոդված/, «գործունեության առարկան և նպատակները» /Օրենսգրքի 55-րդ հոդված/:

Օրենսգրքի 51-րդ հոդվածում առևտրային կազմակերպությունների հիմնական նպատակը անվանվում է «շահույթ ստանալը»: Օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետում խոսվում է այն մասին, որ առևտրային կազմակերպությունները կարող են ունենալ օրենքով չարգելված գործունեության ցան-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

կացած «տեսակ» իրականացնելու համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել քաղաքացիական պարտականություններ: Դրա հետ մեկտեղ Օրենսգիրքը չի մեկնաբանում «գործունեության առարկա» տերմինի բովանդակությունը: Մակայն իրավաբանական գրականության մեջ տեսակետ կա նաև այն մասին, որ «Առևտրային իրավաբանական անձի գործունեության առարկան շահույթ հետապնդելն է»¹⁵: Մեր կարծիքով, նման մոտեցումը հիմնավորված չէ, քանի որ շահույթ ստանալը ստեղծվող առևտրային կազմակերպությունների նպատակն է, բայց ոչ երբեք գործունեության առարկան: Ինչ վերաբերում է գործունեության առարկային, ապա դա օրենքով թույլատրվող և ընկերության կանոնադրությամբ սահմանված գործունեության այն կոնկրետ տեսակն է, որի իրականացման արդյունքում ընկերությունը հասնում է իր ստեղծման նպատակին, այսինքն՝ շահույթ ստանալուն: Այս առումով լիովին համաձայն ենք Կ. Պ. Կրյաժևսկիի այն տեսակետին, որ. «Իրավաբանական անձի գործունեության առարկա ասելով՝ պետք է հասկանալ կանոնադրությամբ որոշակիորեն սահմանված այն գործունեության տեսակները, որոնք կազմակերպությունն իրավասու է իրականացնել»¹⁶:

Չնայած Օրենսգրքի 52-րդ հոդվածի 2-րդ կետը սահմանում է, որ առևտրային կազմակերպությունները կարող են ստեղծվել օրենքով չարգելված ցանկացած տեսակի գործունեություն իրականացնելու համար, սակայն դրա հետ մեկտեղ նշված հոդվածի 1-ին կետի շարադրանքից հետևում է, որ գործունեության կոնկրետ տեսակով զբաղվելու համար ստեղծվելուց հետո առևտրային իրավաբանական անձը կարող է ունենալ միայն այդ գործունեության իրականացման համար անհրաժեշտ քաղաքացիական իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ: Այդ մասին հստակ նշում կա նաև «Մահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» ՀՀ օրենքում (այսուհետ՝ Օրենք), որի 3-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանում է, որ ընկերությունն ունի օրենքով չարգելված քաղաքացիական այնպիսի իրավունքներ, որոնք անհրաժեշտ են նրա գործունեության իրականացման համար, եթե դա չի հակասում կանոնադրությամբ սահմանված գործունեության առարկային և նպատակներին: Այլ կերպ ասած՝ ՄՊԸ-ն, որպես առևտրային իրավաբանական անձի կազմակերպարարական ձևերից մեկը, օժտված է հատուկ իրավունակությամբ: Այսինքն՝ այն կարող է ստեղծվել օրենքով չարգելված ցանկացած տեսակի գործունեություն ծավալելու համար, այդ թվում՝ հատուկ թույլտվություն պահանջող գործունեության, սակայն կոնկրետ գործունեության տեսակ (գործունեության առարկա) սահմանելով իրավունք չունի զբաղվելու այլ տեսակի գործունեությամբ: Այդ կապակցությամբ հստակ դիրքորոշում ունի նաև Ե. Ա. Մուխանովը. «Իրավաբանական անձանց իրավունակությունը հատուկ է, քանի որ ընդհանուր կանոնի համաձայն՝ իրավաբանա-

կան անձը կարող է ունենալ միայն այնպիսի քաղաքացիական իրավունքներ, որոնք համապատասխանում են օրենքով կամ կազմակերպության հիմնադիր փաստաթղթերով նախատեսված նրա գործունեության առարկային և կարող է կրել միայն դրանց համապատասխան պարտականություններ»¹⁷: Ինչ վերաբերում է գործունեության առարկային, ապա որոշակի տեսակի գործունեություն իրականացնելու համար այն կարող է ունենալ միայն դրան համապատասխան իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ: Օրինակ, պարենային մթերքների վաճառքով զբաղվելու և այդ գործունեությունից շահույթ ստանալու նպատակով ստեղծված ՄՊԸ-ն կարող է ձեռք բերել և իրականացնել միայն այնպիսի իրավունքներ ու կրել դրանց համապատասխան պարտականություններ, որոնք կապահովեն նրա՝ կանոնադրությամբ սահմանված գործունեության, այսինքն՝ պարենային մթերքների վաճառքի կազմակերպման ու իրականացման համար:

Իրավաբանական գրականության մեջ, մասնավորապես Ս. Ռուխտինի կարծիքով. «Լինելով լուծարման գործընթացում՝ իրավաբանական անձի իրավունակությունը, փաստորեն, դադարում է»¹⁸: Ըստ մեզ՝ գործերի կառավարման լիազորությունների փոխանցումով տեղի է ունենում ընկերության կողմից տնտեսական գործունեության իրականացման ուղղված իրավունակության սահմանափակում, այսինքն՝ տնտեսական գործունեություն իրականացնելու համար համապատասխան իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու ու դրանց համապատասխան պարտականություններ կրելու անհնարիություն, որը սակայն չի նշանակում, թե ընկերության իրավունակությունը դադարում է: Ասվածը կարելի է բացատրել հետևյալ կերպ. «Օրենսգրքի 69-րդ հոդվածը սահմանում է այն իրավունքների ծավալը, որոնցով օժտվում են լուծարման հանձնաժողովները»: Այսպես, լուծարման հանձնաժողովն իրավաբանական անձի պետական գրանցման մասին տվյալներ հրապարակող մամուլում հայտարարություն է զետեղում նրա լուծարման և պարտատերերի պահանջների ներկայացման կարգի ու ժամկետների մասին, միջոցներ է ձեռնարկում պարտատերերին հայտնաբերելու և դեբիտորական պարտքը ստանալու ուղղությամբ, պարտատերերին տեղեկացնում է իրավաբանական անձի լուծարման մասին, պարտատերերի կողմից պահանջների ներկայացման ժամկետի ավարտից հետո կազմում է միջանկյալ հաշվեկշիռ¹⁹, «Հրապարակային սակարկությունների մասին»²⁰ ՀՀ օրենքով սահմանված կարգով վաճառում է իրավաբանական անձի գույքն այն դեպքերում, երբ լուծարվող իրավաբանական անձի դրամական միջոցները բավարար չեն պարտատերերի պահանջները բավարարելու համար (69-րդ հոդվածի 3-րդ կետ) և այլն: Այսինքն՝ լուծարվող իրավաբանական անձի կառավարման մարմինների լիազորությունները լուծարման հանձնաժողովին են փոխանցվում ոչ թե ամբողջ ծավալով, այլ միայն դրանց մի մա-

սով: Այսպես, Օրենսգրքի 99-րդ և Օրենքի 35-րդ հոդվածները նախատեսում են կառավարման բարձրագույն մարմին՝ ի դեմս հիմնադիրների ընդհանուր ժողովի, իսկ Օրենքի 43-րդ հոդվածը նախատեսում է նաև ընկերության գործադիր մարմին, որն իրականացնում է ընկերության ընթացիկ կառավարումը: Նշված հոդվածների վերլուծությունը ցույց է տալիս, որ ընկերության մարմիններն իրականացնում են ընկերության կառավարումն ամբողջությամբ, այսինքն՝ որոշում են ընկերության գործունեության հիմնական ուղղությունները և իրականացնում են դրանք: Սրանից կարելի է հետևություն անել, որ ընկերության կառավարման մարմիններն /հիմնադիրների ընդհանուր ժողով, գործադիր մարմիններ/ օժտված են նաև այնպիսի իրավունքներով, որոնք ընկերության լուծարման դեպքում լուծարման հանձնաժողովին չեն փոխանցվում, օրինակ՝ ընկերության տնտեսական գործունեության հետ կապված գործարքների կնքում և այլն: Վերը նշվածին համապատասխան՝ իրավունակությունն օրենքով նախատեսված այն իրավունքների և պարտականությունների շրջանակն է, որոնցով ամբողջությամբ կարող են օժտվել իրավունքի կոնկրետ սուբյեկտները: Չնայած նրան, որ ՄՊԸ-ներն ունեն հատուկ իրավունակություն՝ գործունեության կոնկրետ տեսակ ընտրելով՝ կարող են ձեռք բերել և իրականացնել այդ գործունեությանն ուղղված ցանկացած տեսակի քաղաքացիական իրավունքներ ու պարտականություններ: Մինչդեռ լուծարման հանձնաժողովին այդ նույն իրավունքները փոխանցվում են սահմանափակ ծավալով, ինչից էլ կարելի է հետևություն անել, որ ընկերության լուծարման ժամանակ կառավարման լիազորություններն ընկերության լուծարման հանձնաժողովին փոխանցվելու դեպքում ընկերության իրավունակությունն օրենքով սահմանված կարգով ու շրջանակներում սահմանափակվում է: Այսինքն՝ ընկերությունն իր իրավունակությունը, թեկուզև սահմանափակ ծավալով, այնուհանդերձ պահպանում է (օրինակ, սեփականության իրավունքը և այլն):

Հայտնի է, որ իրավասուբյեկտությունն իր մեջ ներառում է իրավունակությունն ու գործունակությունը: Ֆիլցիայի տեսության կողմնակիցները (օրինակ՝ Ֆ.Կ.Սավինյի)²⁰ պնդում են, որ իրավաբանական անձը չի կարող օժտված լինել իրական կամքով, այսինքն՝ գործունակությամբ: Իսկապես, կազմակերպության կամքը և նպատակը միմյանց պայմանավորող և առանձին-առանձին վերցրած էական նշանակություն ունեն իրավունքի սուբյեկտի համար, քանի որ առանց կամքի հնարավոր չէ հասնել նպատակին, իսկ առանց նպատակի չի կարելի որոշել սուբյեկտի կամքի ուղղվածությունը²¹: Ինչպես «իրավաբանական անձ» կատեգորիան, այնպես էլ «իրավաբանական անձի կամք» հասկացությունը իրավական երևույթ է: Այդ առումով անժխտելի է, որ իրավաբանական անձի գործունեությունը կարող է կազմակերպվել բացառապես մարդու (մեկ կամ մի քանի) մասնակցությամբ: Կամքով օժտված են մարդիկ, որոնք ընդունակ են ներգործել

իրավաբանական անձի գործունեության վրա: Վերջին հաշվով հենց մարդկանց կամքն է, որից բխում է իրավաբանական անձի կամքը: Այդ կամքը որոշվում և ուղղորդվում է այն նպատակով, ինչի համար ստեղծվում է իրավաբանական անձը: Հետևաբար, լինելով իրավունքի սուբյեկտ՝ իրավաբանական անձն օժտված է նաև իրավասուբյեկտության մյուս բաղադրիչով, այսինքն՝ գործունակությամբ:

Ֆիզիկական անձի գործունակությունը, Օրենսգրքի 24-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն, իր գործողություններով քաղաքացիական իրավունքներ ձեռք բերելու և իրականացնելու, իր համար քաղաքացիական պարտականություններ ստեղծելու և դրանք կատարելու քաղաքացու ունակությունն է: Իրավաբանական անձի գործունակության պաշտոնական հասկացությունը ՀՀ գործող քաղաքացիական օրենսդրությունում բացակայում է: Դա, երևի թե, պայմանավորված է նրանով, որ իրավաբանական անձի գործունակությունն իրականացվում է նրա մարմինների միջոցով, որոնք բաղկացած են մարդկանցից: Օրենսգրքի 57-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ իրավաբանական անձը քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում և քաղաքացիական պարտականություններ է ստանձնում իր մարմինների միջոցով, որոնք գործում են օրենքին, այլ իրավական ակտերին ու նրա կանոնադրությանը համապատասխան: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական անձն իր մասնակիցների, ինչպես նաև ներկայացուցիչների միջոցով կարող է ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ և ստանձնել քաղաքացիական պարտականություններ (Օրենսգրքի 57-րդ հոդված 2-րդ կետ): ՄՊԸ-ն իր գործունակության ուժով կարող է իր գործողություններով ձեռք բերել քաղաքացիական իրավունքներ և կրել դրանց համապատասխան պարտականություններ, ինքնուրույն իրականացնել ձեռք բերված իրավունքներն ու կատարել ստանձնած պարտականությունները և պատասխանատվություն կրել քաղաքացիական իրավախախտումների համար, ինչն ուղղակիորեն բխում է Օրենսգրքի 60-րդ հոդվածի բովանդակությունից: Գործունակությունը ՄՊԸ-ի կողմից սեփական գործողություններով իրավունակության իրականացման ունակությունն է:

Ի տարբերություն քաղաքացիների, որոնց գործունակությունը կախված է նրանց տարիքից, առողջական վիճակից, կենսակերպից և այլ գործոններից (Օրենսգրքի 29, 30, 32-րդ հոդվածներ)՝ իրավաբանական անձինք, անկախ իրենց իրավունակության ծավալից, ընդհանուր կանոնի համաձայն, ունեն հավասար գործունակություն:

Վ. Ա. Պլոտնիկովի կարծիքով. «Իրավաբանական անձը պետք է ունենա լրիվ գործունակություն. նրա գործունակությունը չի կարելի սահմանափակել և իրավաբանական անձին հնարավոր չէ ճանաչել անգործունակ»²²: Իրավաբանական անձին անգործունակ ճանաչելու վերաբերյալ հեղինակի տեսանկյունը միանգամայն հիմնավոր է, քանի

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

որ իրենց հոգեկան վիճակի հետ կապված՝ անգործունակ կարող են ճանաչվել միայն քաղաքացիները: Ինչ վերաբերում է գործունակության սահմանափակմանը, ապա այդ հարցի շուրջ կատարենք դիտարկումներ:

Օրենսգրքի 68-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ իրավաբանական անձի լուծարման մասին որոշում ընդունված իրավաբանական անձի հիմնադիրները (մասնակիցները) կամ կանոնադրությամբ դրա համար լիազորված իրավաբանական անձի մարմինը նշանակում են լուծարման հանձնաժողով /լուծարող/ և Օրենսգրքին համապատասխան սահմանում են լուծարման կարգն ու ժամկետները: Այդ նույն հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ նշանակման պահից լուծարման հանձնաժողովին անցնում են իրավաբանական անձի գործերի կառավարման լիազորությունները: Այսինքն՝ կառավարման մարմինների լիազորությունները լուծարման հանձնաժողովին են փոխանցվում ընկերության լուծարման մասին մատուցվող տեղեկություններ հրատարակելու, պարտապաններին ի հայտ բերելու, նրանց նկատմամբ ընկերության ունեցած պահանջները բավարարելու և պարտատերերի պարտքերը մարելու, ընկերության գույքը հրապարակային սակարկություններով վաճառելու համար այն դեպքերում, երբ ընկերության դրամական միջոցները չեն բավարարում պարտատերերի պահանջները, սակայն ոչ երբեք այն գործունեությունն իրականացնելու, որի համար ընկերությունն իր ստեղծվելուց հետո ուներ համապատասխան իրավունակություն: Այսինքն՝ լուծարման հանձնաժողովը ընկերությունը լուծարելու կապակցությամբ օժտվում է միայն վերը նշված իրավունքներով: Դա թույլ է տալիս ասել, որ ընկերության կառավարման մարմինների լիազորությունների փոխանցումով ինչպես իրավունակությունը, այնպես էլ ընկերության գործունակությունը ևս սահմանափակվում է: Այլ կերպ ասած՝ այդ պահից սկսած ընկերությունը գործունակ է այնքանով, որքանով դա համապատասխանում է նրա իրավունակության բովանդակությանը:

Քաղաքացիական իրավունքի տեսության մեջ և տարբեր երկրներում այլ կերպ են դիտարկվում իրավասուբյեկտության, այսինքն՝ իրավունակության և գործունակության ծագման և դադարման պահերը: Մասնավորապես, Գերմանիայի օրենսդրությամբ սահմանված կարգով՝ սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունների իրավունակությունը և գործունակությունը կարող են ծագել տարբեր ժամանակներում: Գերմանիայում սահմանափակ պատասխանատվությամբ և բաժնետիրական ընկերությունները մինչև նախնական ընկերության պետական գրանցումը համարվում են սահմանափակ իրավունակ և գործունակ են դառնում նախնական ընկերությունների պետական գրանցումով²³: Նմանատիպ կարգ է սահմանված նաև Ֆինլանդիայի քաղաքացիական օրենսդրությամբ²⁴: Մեր Հանրապետությունում (Օրենսգրքի 56-րդ հոդվածի 3-րդ կետ) իրավաբանական անձը ստեղծված է համարվում նրա պե-

տական գրանցման պահից: Իսկապես, ընկերության իրավասուբյեկտությունը, այսինքն՝ առանձին-առանձին վերցրած իրավունակությունն ու գործունակությունը ծագում են նրա պետական գրանցման պահից. կազմակերպությունը իրավաբանական անձի կարգավիճակ է ստանում հենց այդ պահից, ինչն էլ խոսում է այն մասին, որ այդ պահից սկսած ընկերությունը ձեռք է բերում և՛ իրավունակություն, և՛ գործունակություն:

Օրենսգրքի 69-րդ հոդվածի 7-րդ կետը սահմանում է, որ իրավաբանական անձը համարվում է լուծարված, իսկ նրա գոյությունը՝ դադարած պետական գրանցման պահից: Շարադրանքից կարելի է հետևություն անել, որ կազմակերպության իրավասուբյեկտությունը, այսինքն՝ իրավունակությունն ու գործունակությունը, դադարում են պետական գրանցման պահից:

Գիտնականների մեծ մասի կարծիքով իրավաբանական անձանց իրավունակությունը և գործունակությունը ծագում և դադարում են միաժամանակ²⁵:

Կ. Կ. Յախչկովի պնդմամբ. «Իրավաբանական անձի իրավունակության ու գործունակության ծագման ու դադարման պահերը չեն կարող չհամընկնել»²⁶: Իսկապես, քանի որ իրավունակությունն ու գործունակությունը իրավաբանական անձի իրավասուբյեկտության տարրերն են, դրանց դիտարկումը ծագման կամ դադարման տարբեր պահերի առումով անիմաստ է:

Վերոգրյալն ամփոփելով՝ կարելի է կատարել հետևյալ եզրահանգումները. ՄՊԸ-ի իրավունակությունը հատուկ բնույթի է, այսինքն՝ այն կարող է ստեղծվել գործունեության բազմաթիվ տեսակներով զբաղվելու, այդ թվում հատուկ թույլտվություն պահանջող գործունեության համար, սակայն գործունեության կոնկրետ տեսակ ընտրելով՝ այն կարող է զբաղվել միայն այդ գործունեությամբ և ունենալ միայն այնպիսի իրավունքներ և պարտականություններ, որոնք համապատասխանում են կանոնադրությամբ և այլ իրավական ակտերով սահմանված նրա գործունեության առարկային:

ՄՊԸ-ն իր գործունակությունն իրականացնում է իր համապատասխան մարմինների միջոցով: Գործունակությունը, որպես իրավասուբյեկտության պարտադիր բաղադրիչ, բովանդակում է նաև ընկերության ղեկիտառունակությունը: Լուծարային գործընթացում գտնվելու կապակցությամբ ընկերության գործերի կառավարման լիազորությունները փոխանցվում են լուծարման հանձնաժողովին: Դա վկայում է այն մասին, որ ընկերության իրավունակությունը լուծարման գործընթացում չի դադարում, այլ սահմանափակվում է: Դրան համապատասխան սահմանափակվում է նաև ընկերության գործունակությունը: Ընկերության իրավասուբյեկտությունը, այսինքն՝ իրավունակությունն ու գործունակությունը, վերջնականապես դադարում են կազմակերպության դադարման մասին պետական գրանցում կատարելու պահից:

- ¹ Տե՛ս Կոնստիտուցիոնալ իրավունքների և պարտականությունների օրենսգրքի հոդված 100-ը: Սարգսյան Լ. Դ. Կոնստիտուցիոնալ իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Երևան, 2007: Ս. 21:
- ² Տե՛ս Սուխանով Ե. Ա. Գրաճակատային իրավունք: Երևան, 1998: Ս. 114-116: Գրաճակատային իրավունք, ուսուցիչական գրքի մեջ Սերգեևա Ա. Ս., Կոնստանտինովա Յ. Կ. 6-րդ հրատարակումը, Երևան, 2002: Ս. 108-114:
- ³ Տե՛ս Վեբերս Ե. Ս. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: 1976: Ս. 24:
- ⁴ Տե՛ս Կոնստանտինովա Յ. Կ. 1959: Ս. 9:
- ⁵ Տե՛ս Կոնստանտինովա Յ. Կ. Սովետական Կառավարման իրավունքներում: Ս. 37-39:
- ⁶ Տե՛ս Կրոտով Մ. Վ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունք: Սերգեևա Ա. Ս., Կոնստանտինովա Յ. Կ. Երևան, 2002: Ս. 112:
- ⁷ Տե՛ս Եմ Վ. Ս. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունք: Սերգեևա Ա. Ս., Կոնստանտինովա Յ. Կ. 3-րդ հրատարակումը, 2004: Ս. 125-126:
- ⁸ Տե՛ս Գրոս Մ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունքները // Գրաճակատային իրավունք և իրավունք: 2001. N 5. Ս. 33:
- ⁹ Տե՛ս Սուխանով Ե. Ա. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունք: Սերգեևա Ա. Ս., Կոնստանտինովա Յ. Կ. Երևան, 1998: Ս. 189:
- ¹⁰ Տե՛ս Սինայսկի Վ. Ի. Ռուսական Կառավարման իրավունքներ: Երևան, 2002: Ս. 119-121:
- ¹¹ Տե՛ս ՀԱՅԿԻ Հրատարակչության օրենսգրքի մեջ: 04.06.1994, N 34:
- ¹² Տե՛ս Մոլկով Յ. Վ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Ս. 60:
- ¹³ Տե՛ս Կոնստանտինովա Յ. Կ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունքները // Գրաճակատային իրավունք և իրավունք: 2001, N 12. Ս. 7:
- ¹⁴ Տե՛ս Կոնստանտինովա Յ. Կ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունքները // Գրաճակատային իրավունք և իրավունք: 1999, N 5. Ս. 58:
- ¹⁵ Տե՛ս Սլյուցին Ա. Ա. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Երևան, 2001: Ս. 9:
- ¹⁶ Տե՛ս Կրյաճևսկի Կ. Ս. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունքները // Գրաճակատային իրավունք և իրավունք: 2003. Ս. 96-97:
- ¹⁷ Տե՛ս Սուխանով Ե. Ա. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Երևան, 2006: Ս. 237:
- ¹⁸ Տե՛ս Րուտին Ս. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Ռուսական իրավունք: 2001, N 7. Ս. 26-27:
- ¹⁹ Տե՛ս «Հրատարակչության օրենսգրքի մեջ» ՀՀ օրենք // ՀՀ ՊՏ, 2003.11.12, 56/291/:
- ²⁰ Տե՛ս Savigny F.-K. System des heutigen romischen Rechts. Bd. II. Berlin, 1840:
- ²¹ Տե՛ս Շերշենևիչ Գ. Փ., Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Երևան, 2001: Ս. 125:
- ²² Տե՛ս Սլոտնիկով Վ. Ա. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունքները // Գրաճակատային իրավունք և իրավունք: 1993. Ս. 65:
- ²³ Տե՛ս Կոնստանտինովա Յ. Կ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունքները // Գրաճակատային իրավունք և իրավունք: 2002, N 1. Ս. 109-110:
- ²⁴ Տե՛ս Կոնստանտինովա Յ. Կ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունքները // Գրաճակատային իրավունք և իրավունք: 2001, N 10. Ս. 68-73:
- ²⁵ Տե՛ս Կոնստանտինովա Յ. Կ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Ստատուտ: 2005. Ս. 36:
- ²⁶ Տե՛ս Կոնստանտինովա Յ. Կ. Գրաճակատային իրավունքների և պարտականությունների օրենսգրքի մեջ: Գրաճակատային իրավունքները // Գրաճակատային իրավունք և իրավունք: 1996. Ս. 81:

РЕЗЮМЕ

Общество с ограниченной ответственностью в гражданских правоотношениях

В этой статье изучаются элементы правосубъектности обществ с ограниченной ответственностью, а именно правоспособность и дееспособность. В результате исследования сделаны следующие выводы. Общество с ограниченной ответственностью обладает специальной правоспособностью, т.е. оно может создаваться с целью осуществления любого вида деятельности, в том числе видами деятельности для которых требуется специальное разрешение. Однако, выбирая конкретный вид деятельности, общество с ограниченной ответственностью может заниматься только той деятельностью и иметь исключительно такие права и обязанности, которые соответствуют установленной его уставом деятельности. В рамках исследуемой тематики автор пришел к выводу, что правоспособность и дееспособность общества с ограниченной ответственностью в процессе его ликвидации ограничиваются.

SUMMARY

Limited liability company in civil legal relationships

This article studies the legal competence and capability of enterprises with limited liability and makes the following conclusions. Enterprises with limited liability are characterized by a special legal capacity, i.e. such may be created to engage in various types of activity including those requiring special permission. But once choosing to engage in a concrete type of activity, they can engage only in that particular activity and have such rights and responsibilities that are in line with the activity laid down in their charter. Within the framework of the study, the researcher has concluded that the competence and capability of enterprises with limited liability become limited during their dissolution phase.

ГЕВОРГ ТУМАНОВ

Главный специалист административного аппарата Первого заместителя Министра обороны РА, советник третьего класса.
Соискатель кафедры международных отношений юридического факультета Российско-Армянского (Славянского) Университета



ТРЕБОВАНИЯ НЕОБХОДИМОСТИ И ПРОПОРЦИОНАЛЬНОСТИ ПРИ РЕАЛИЗАЦИИ ПРАВА НА САМООБОРОНУ В РАМКАХ МЕЖДУНАРОДНОГО ПРАВА

Общеизвестно, что в целях квалификации самообороны в качестве правомерных действий, сторона которая ссылается на свое право на самооборону и использует такое право, должна соблюдать два основных условия, обычная природа которых подтверждена Международным Судом ООН¹, так называемые условия необходимости (necessity) и пропорциональности (proportionality). Необходимость наличия этих двух принципов при использовании права на самооборону была подтверждена еще в ходе обмена дипломатическими нотами по знаменитому делу Каролины, хотя некоторые видные юристы-международники, такие как например Й. Гардам, полагают, что задолго до XIX века, принцип необходимости и принцип пропорциональности уже составляли неотъемлемую часть теории справедливой войны². В любом случае, как утверждает Я. Броунли, независимо от прецедентного значения дела, нельзя отрицать то, что два взаимосвязанных принципа сформировали неотъемлемую часть концепции самообороны.

Общепризнанно, что в доктрине международного права, даже после принятия Устава ООН, роль этих двух критериев иногда ставилась под сомнение⁴. Примечательно то, что некоторые государства выражали сомнения в отношении обычной природы критерия пропорциональности. Во время обсуждения определения «агрессии» некоторые государства, *inter alia* СССР, решительно выступали против ссылки на критерий пропорциональности, как предварительного условия для осуществления права на самооборону, прежде всего на том основании, что этот критерий был бы в пользу потенциального «агрессора»⁵. С другой стороны, как будет рассмотрено ниже, мы считаем, что эти возражения и сомнения обычно касаются содержания требования пропорциональности, а не его существования как такового, утверждает Р. Аго⁶. Конечно же большинство государств, например такие как Великобритания, Италия, Югославия, Ирак, Румыния, Болгария, Турция и др. недвусмысленно подчерки-

вали общеобязательный характер этого критерия. Кроме того, практика Совета Безопасности свидетельствует о том, что государства неоднократно обсуждали необходимость придерживания критерия необходимости и/или пропорциональности в отношении инцидентов с обращением к вооруженной силе, часто делая прямую ссылку на «Формулу Каролины»⁷. В практике, государства утверждают, что осуществили свое право на самооборону и придерживались этих двух критериев, например, когда Великобритания совершала воздушный налет на территорию Йемена в 1964 году или когда США наносили вооруженные удары по Ираку в 1998 году и т.д. Эти доводы неоднократно играли решающую роль в оценке конкретных претензий в отношении осуществления права на самооборону. Например, когда Израиль начал крупномасштабную военную операцию против Ливана в 2006 году после похищения Хезболла двух израильских солдат, большинство государств признали, что Израиль мог бы воспользоваться своим правом на самооборону, но не сделал это, так как имело место «диспропорциональность» и «неизбирательность» в действиях со стороны Израиля⁸. В целом, императивный характер этих двух требований был поддержан как Международным судом ООН, так и довольно последовательно поддерживался в обычной практике, более того, сегодня, доктрина международного права практически единодушно заявляет, что любые действия предпринятые в целях самообороны должны соблюдать требования необходимости и пропорциональности.

Несмотря на всеобщий консенсус в отношении их сдерживающей роли, требования необходимости и пропорциональности сформировали относительно небольшой академический интерес. Общепринято в обычной практике и в международно-правовой доктрине, что они по сути означают, что действия должны быть направлены исключительно на прекращение или отражении вооруженного нападения. В противном случае,

предпринятые действия, могут включать в себя карательные или ответные меры и будут квалифицированы как репрессалии¹⁰, а не как самооборона. В мирное время, репрессалии, которые влекут за собой использование вооруженной силы, считаются неправомерными¹¹, что в свое время подтвердил как Международный суд¹², так и Генеральная Ассамблея¹³ и Совет Безопасности¹⁴, а во время войны репрессалии как таковые, не запрещены, но тем не менее подвергаются многочисленным жестким ограничениям на основании Женевских конвенций и Дополнительных протоколов к ним. Как мы знаем, различие между правомерной самообороной и неправомерными репрессалиями достаточно тонкое, но оно есть. Тем не менее, всеобъемлющей аксиомой является то, что оборонительные действия должны быть ограничены всего лишь тем, что необходимо для целей останова или отражения вооруженного нападения.

В своем докладе, который был представлен Комиссии по международному праву специальный докладчик по этой теме Р. Аго выразил свое особое мнение, что требование необходимости является «само собой разумеющаяся, всеобщее признанный и соответственно отсутствует необходимость дальнейшего обсуждения»¹⁵. Примечательно то, что государства обращающиеся к самообороне часто настаивают на том, что мирные средства для разрешения споров были исчерпаны и/или оказались безуспешными, как об этом в свое время заявили США в отношении проведенных ударов по Ираку в 1993 и 1998 гг. Категория «крайней необходимости» временами освещалась в заявлениях третьих государств во время дебатов в Совете Безопасности. К примеру, в 1986 году Гана критиковала вооруженные действия США против Ливии, ссылаясь на то, что США «...не удосужились исчерпать возможности, представленные Уставом ООН для мирного урегулирования споров»¹⁶. В 1956 году, во время Суэцкого кризиса, Югославия утверждала что проблема «фидаяевских» (fedayeen) нападений против Израиля должны были решаться посредством общепринятых средств мирного урегулирования споров, а не посредством израильских военных операций против Египта¹⁷. Одним из редких случаев, когда нарушение требования необходимости сыграло решающую роль, касается израильского нападения на иракский ядерный реактор Осирак в 1981 году. In casu, Израиль подчеркнул, что попытка остановить ядерную угрозу направленную против их, посредством дипломатии, но в связи с тем, что этого сделать не получилось, заявил, что не видит иного выхода, кроме как уничтожить данный объект, осуществляя свое право на самооборону¹⁸. Конечно же доводы, которые приводил Израиль не получили

какой-либо поддержки во время прений в Совете Безопасности и были единогласно осуждены и эти действия были квалифицированы как «явное нарушение Устава (ООН. – Добавлено авт. – Г.Т.)»¹⁹, в том числе ряд государств были правы, когда прямо заявили, что Израиль должен был бы сначала представить свою «озабоченность» до Совета Безопасности ООН, а ни брать «закон в свои руки»²⁰.

В доктрине международного права встречается позиция, которая исходит из того, что составной частью принципа необходимости является «незамедлительность» (immediacy), что должно иметь место при осуществлении права на самооборону²¹. Примечательным является то, что Т. Руйс, утверждает, что некоторые видные специалисты по международному праву заявляют, что «незамедлительность» является таким же обособленным требованием права на самооборону, как и требования необходимости и пропорциональности и приводит пример некоторых видных специалистов по международному праву, таких как А. Константину, Й. Динштейн, Т. Гаццини и др.²² Действительно, принято считать, что для квалификации самообороны как правомерного действия, необходимо, чтобы данное право использовалось в то время, как только имело место вооруженное нападение и как ответная мера в порядке самообороны²³. Опять же, следует понимать, что условие незамедлительности представляет собой достаточно неопределенный критерий, так как достаточно трудно зафиксировать временные рамки, когда имело место вооруженное нападение и когда можно воспользоваться своим правом на самооборону. Таким образом незамедлительность служит собой важнейшим фактором для отличия правомерной самообороны от неправомерной вооруженной репрессалии и делает ясным то, что военные действия не могут быть возобновлены позже без возникновения нового casus foederis²⁴.

К примеру, во время рассмотрения в Совете Безопасности вопроса вооруженного нападения Великобритании на Йемен, а именно на форт Хариб в 1964 году, некоторые государства выразили озабоченность по факту не соблюдения критерия незамедлительности, а именно делегация Ирака заявила следующее: «В качестве соответствующей и соразмерной оборонительной меры против подобных вторжений в воздушное пространство, нужно было бы, очевидно, начать преследование вторгшихся самолетов или вертолетов или даже открыть по ним огонь – если только они действительно нарушили воздушное пространство Федерации. Но этого сделано не было. Вместо этого, **после того как прошел уже целый день** (выделение автора - Т.Г.), из Адена было послано восемь военных самолетов с заданием

уничтожить полицейский участок в Харибе»²⁵.

Так же, по делу Никарагуа против США, Международный суд *obiter dicta* заявил, что не было необходимости, что бы США принимали меры по прошествию целого месяца, против Никарагуа, в связи с «наступлением» против Правительства Сальвадора, когда уже это «наступление» было отбито²⁶.

В то же время, мы считаем, что нельзя проводить четкую временную грань между вооруженным нападением и тем, сколько времени у потерпевшего государства для того, что бы воспользоваться своим правом на самооборону, так как определенная степень временной гибкости должна иметь место. Ведь несомненно, требуется определенная военная мобилизация, сбор разведывательных данных для скоординированного ответа, тем более потерпевшее государство, возможно, посчитает необходимым отложить обращение к силе в целях реализации своего права на самооборону, для попытки останова вооруженного нападения посредством мирных средств или же попросту может потребоваться определенное время для принятия политического решения на национальном уровне, прежде чем фактически начать вооруженные действия. К примеру, по вышеуказанному делу в отношении вооруженного нападения Великобритании на Йемен, в ответ на критику об отсутствии соблюдения требования незамедлительности, Великобритания заявила следующее: «Так оно и должно быть. Как и любые другие меры, оборонительные меры, принимаемые ответственным правительством, требуют такой же соответствующей подготовки и надлежащего санкционирования. В данном случае такая подготовка и санкционирования были необходимы для того, что бы действия были предприняты только против тех, кто несет ответственность за кампанию террора против Федерации, и чтобы гражданское население города Хариба ни в коей мере не пострадало»²⁷. Подобным образом, при обосновании удара США против Ирака в 1993 году, государственный секретарь М. Олбрайт заявила, что двухмесячный промежуток времени между визитом Дж. Буша-старшего и вооруженными действиями обосновывается тяжелым ходом расследования попытки покушения на Дж. Буша-старшего во время визита в Кувейт^{28,29}.

